5160
965
891.99
Ա-19

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в срок, чтобы и другие могли воспользоваться ею.

...писывайте в свою тетрадку.


2) Не **портите переплета.** При чтении завертывайте его в бумагу.
3) Не **загибайте углов у страниц** имейте лучше бумажную закладку.
4) Не **перелистывайте страниц грязными и мокрыми руками.**
5) Если у вас имеется в доме заразный больной, то заявите об этом в библиотеку при возврате книги.

КОГДА КНИГА ВЗЯТА							
1914/3							
28/IV							
						2003	

891.99
Ա-19

ՅԱԿՈԲ ՊԱՊԱՄԵԱՆ

965
№ 1381



ԱԶԱՏ ԺԱՄԵՐ

20577
Ленина
ИНВЕНТАРИЗАЦИЯ 1936 г.
№

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ս. Եարոսէ եւ Ընկ., Սիմ. 21.
1900

Дозволено цензурою, Тифлисъ, 13-го Декабря 1899 г.

Зо142-Ч.Ь.

(1151/41) 13219-58

ՀԵՆՐԻԽ ՍԵՆԿԵՒԻՉԻ

ՀԵՏԵՒԵՆՔ ՆՐԱՆ

Սիրելիք Նիկողայոս եւ Մուշեղ.



Տարունակ մնածելով Ձեր ապագայի մասին, ես որոշեցի դարուս նշանաւոր վիպագրող Հ. Սենկեւիչի այս գրոյցը՝ „Հետեւե՛ք նրան“, թարգմանել եւ նուիրել Ձեզ՝ որպէս առաջնիդ հայր եւ երկրորդիդ հօրեղբայր:

Մեծ եւ շատ խրատական դաս է թագնուած այդ գրոյցի մէջ: Ցիննայի ու Անտէայի կեանքը աչքի առաջ ունեցէ՛ք. նիւթական եւ մնաւոր հարստութեանց տուած ամենատեսակ բարիքները դեռ եւս շատ քիչ են մարդուս երջանկացնելու համար:

Իսկական երջանկութեան ճանապարհը ցոյց է տալիս Գողգոթայի նահատակը:

Սիրեցէ՛ք Նրան: Հետեւեցէ՛ք Նրան:

Եւ միշտ երջանիկ կլինիք:


Այս է իմ՝ Ձեզ աւանդած կտակը:

Յակոբ Յոհաննէս

25 փետրուարի 1898 թ.
Բագու:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ

ՏՊՐՈՒԹԻՆՆԵՐ

I



Թիւն էր, մի սաստիկ ձմեռ։ Ռևստրական գործերով ես գնում էի Պարսկաստանի Սրտաբիլ քաղաքը։ Ոտով էի անցնում Աստարից մինչև Սրտաբիլ ընկած լեռները. սարալանջի ուղին այնքան նեղ էր, այնքան ահաւոր, որ ձիով անկարելի էր անցնել. մի սխալ քայլ, մի փոքրիկ սայթաքում, և ձիաւորը կգլորուէր անդունդը, ուսկից այլ ևս փրկութիւն չկար։

Գնում էի, գնում, յոգնում, քրտնում, և սիրտս զովացնելու համար՝ լեռներից առատաբար հոսող սառնորակ առուների վերայ ընկնում, ագահաբար խմում, և ապա դարձեալ ճանապարհս շա-

րունակում: Այդ անզգուշությունն աւասիկ փառաւորապէս պատժեց ինձ. մարսողութիւնս խանգարուեցաւ, կերածս չէի մարսում: Յայտնի բան է, տեղ հասնելուց յետոյ պէտք էր խնդրել և ես կանոնաւոր բժշկուելու հոգ տանել, պէտք էր ուտելուց և խմելուց մի առ ժամանակ զգուշանալ: Բայց ո՞վ է տուել երիտասարդին պահեցողութեան համբերութիւն և առհասարակ խոհեմ վերաբերմունք դէպ ամեն մի քայլ: Առանց պահեցողութեան, առանց զգուշութեան անցան օրերս. արագ արագ գլորուեցան տարիքս դէպի յաւիտենից անյատակ ծովը և ինձ յիսուն երկուերորդ ամառուայ եզրը հանեցին:

Թեթև չէր իմ բեռը, ինչպէս թեթև չէ լինում առ հասարակ յիսուն վաթսուն տարուայ բեռը ամեն մի մարդու վրայ: Տկարութիւն, մի ընդհանուր թուլութիւն, ատելութեան հասած ծանր տրամադրութիւն դէպի ամբողջ շրջապատը, ահա թէ որպիսի բեռն էր ինձ բաժին ընկել: Պէտք էր հանքային ջրերը գնալ, այդ էր հմուտ բժիշկների տուած վճիռը: Եւ ես որոշեցի Ֆրանսիայի Վիշի քաղաքը գնալ: Երկար ճանապարհորդութիւնն ինքն ըստ ինքեան բարերար ազդեցութիւն կունենար ինձ վրայ՝ թէ կազդուրելով, ուժերս վերականգնելով, և թէ հոգուս վրայ ծանրացած թախիծը վանելով:

Իմ այդ որոշումն յայտնեցի Նիկողայոս որ-

դուս, որ 15 ամեայ պատանի էր, ուսանող Բագուայ ռէալական դպրոցի IV-դ դասատան, այլ և խոստացայ իրեն ևս հետս տանել: Ի՞նչ մեծ ուրախութիւն պատճառեց նրա պատանեկական սրտին իմ այդ խոստումը: Կարծես նոր կեանքի առաւօտ էր բացւում նրա համար: Եւ ինքն էլ իւր կողմից խոստացաւ գրի անցնել այն ամենը, ինչ որ ճանապարհորդութեան ժամանակ կտեսնի կամ կլսէ:

Նշանակուած օրը վրայ հասաւ. հազար ութ հարիւր իննըսուն թուականն էր, մայիսի 18-ը: Ես ու Նիկողայոս որդիս ճանապարհուեցանք դէպի Թիֆլիս: Շոգեկառքը սլանում էր և մեր տեսութեան առջևը բերում չոր ու ցամաք դաշտերի և լեռների միատեսակ պատկերներ. հետաքրքրութեան արժանի ոչինչ չկայ: Այդպէս է մինչև Կուր գետը: Այդ տեղից դէպի Թիֆլիս տանող ճանապարհը բնութեան նորանոր պօնօրամներ է բացանում ուղևորի աչքի առջև: Կանաչազարդ լեռներն ու դաշտերը հրճուանք են պատճառում մարդուս, ուրախութեամբ լցնում են նրա սիրտը:

Երկաթուղու գնացքը մի քանի անգամ կըտրում, անցնում է Կուր գետը: Այդ տեղերքում Կուրը ազատ չէ, մարդկային արհեստը կապել, կաշկանդել է Մայր-Արաքսի ազգակից Կուրի գժուրթիւնը, խեղդել, ուժասպառ է արել նրան երկաթեայ հզօր կամուրջների տակ: Գետը տխուր է.


նա չի շաչում, չի շառաչում, այլ թախծալի վըզ-
ղում է: Կարծես ինքն էլ զգումէ, որ կորցրել է իւր
ազատութիւնը, կարծես ինքն էլ զգում է, որ ամ-
րակուռ լծի տակ է: Այդ չէ՞ արդեօք նրա տխուր
վշշոցի, նրա սրտամաշ ողբերգի պատճառը. իսկ
ուղևորները գլուխները հանած կառքերի պատու-
հաններից՝ նայում են գետին, կամրջին, լսում են
շղթայուած վիշապի տխուր մեղեդին:

Հետևեալ օրը երեկոյեան վեց ժամին մենք
Թիֆլիս էինք:

Գիշերն անցուցինք «Սեվերնիէ Նոմերա» կո-
չուած հիւրանոցում: Այդ տեղ էր եկել մի ամսա-
չափ առաջ և իմ եղբօրորդի Աղէքսանդրը, նրան
ևս տանջում էր նոյն ստամոքսային հիւանդութիւ-
նը: Իմանալով, որ բժշկական դեղերից ոչինչ օգ-
նութիւն չէ ստանում, համոզեցի, որ ճանապար-
հորդակից լինի մեզ դէպի արտասահման և օգ-
տուի հանքային ջրերից:

Եւ այսպէս մի օր մնալով Թիֆլիս՝ երկրորդ
օրը երեքեանքս՝ ի միասին շոգեկառքով թռչում
էինք դէպի Ծովափնեայ Բաթում քաղաքը:





II



Դէպի Բաթում տանող ճանապարհը
բոլորովին նման չէ Բագու-Թիֆլիսեան
ճանապարհին: Այստեղ Սուրա-
մի ահագին լեռներն ու ան-
տառները կանաչով պատած,
մինչև անգամ գոյն գոյն ծա-
ղիկներով զարդարուած կար-
ծես ժպտում են և սիրալիր բարևներ ուղարկում
սրընթաց գնացքի մէջ եղող ճամբորդներին: Իսկ
սրանք զմայլած Սաեղծողի առատ և հանճարեղ
ձեռագործի վերայ՝ պատուհաններից այդ տեսա-
րանին են նայում:

Բաթում քաղաքը փոքրիկ տարածութեամբ ըն-
կած է Սև ծովի ափին: Երբ առաջին անգամ 1884
թ. ես սեպհական գործով Բաթում էի գնացել,

դա մի փոքրիկ և աննշան տեղ էր: Բայց այժմ քաղաքն արտաքուստ գեղեցկացել է և առևտրի ապարէզումն էլ մեծ նշանակութիւն ստացել: Ծովափին բաւական երկար տարածութեամբ շինուած կայ մի սիրուն զբօսավայր՝ ճոխ բուսականութեամբ: Զբօսավայրի երկու կողմից տնկուած են բաւական բարձր ծառեր: Քաղաքի զբօսասէրը հասարակութիւնը՝ արք և կանայք՝ իրանց հանգստութեան ժամերն այդ տեղ են անցնում, այդ ստուերախիտ ծառուղիներում. ամեն օր կէս օրից յետոյ նուագում է եւրոպական մուզիկան: Յանկացողն այդ տեղ փոքրիկ պանդոկից կարող է ստանալ թէյ և զովացուցիչ ըմպելիք: Մի խօսքով եօթն տարուայ ընթացքում քաղաքը մի այնպիսի առաջադիմութիւն է արել, որ ճանաչել անգամ դժուար է: Մահմեդական ճնշող, խեղդող մթնոլորտից ազատուած աննշան գիւղաքաղաքն այժմ մի բազմամարդ և ճոխ եւրոպական քաղաք է դարձել: Կեանքի և գոյքի ապահովութիւնը, ամենքի համար մի օրէնքը, որ բերաւ Ռուսաց տիրապետութիւնը, նախկին աւազակային բոյնից մի նշանաւոր վաճառաշահ քաղաք ստեղծեց:

Բաթումում քաղաքում միշտ կարելի է տեսնել եւրոպացի վաճառականներ և եւրոպական տների ներկայացուցիչներ: Դրա պատճառն այն է, որ Բագու քաղաքից դուրս եկած նաւթային արդիւնաբերութիւնները Բաթումի նաւահանգստի յարմար

լինելուն համար այդ տեղով են ճանապարհւում Եւրոպա: Նաւահանգստի վրայ ամեն օր խարխխ ձգած և կանգնած կտեսնէք զանազան մեծութեան, զանազան տէրութեանց ու ազգութեանց պատկանող շոգենաւեր և առագաստաւոր նաւեր: Նաւերից շատերը Բագուայ յայտնի վաճառականների ձեռքին են՝ վարձով, նրանք դրանցով են իրանց նաւթային արդիւնաբերութիւնները արտահանում եւրոպական շուկաները: Շատերն էլ ուղղակի եւրոպացւոց ձեռքին են. դրանք այդ տեղ նաւթային ապրանքներ են գնում և արտասահմանեան շուկաներն ի վաճառ հանում:

Ճանապարհորդների համար էլ կան զանազան շոգենաւեր, որոնք սեպհականութիւն են զանազան ընկերութեանց. սրանք քաղաքումն ունեն իրանց գրասենեակները, որտեղ կարելի է իմանալ, թէ ո՛ր շոգենաւը և երբ պիտի Բաթումից մեկնի կամ Բաթում մտնի: Այդ ընկերութեանց մէջ նշանաւորն է «Ռուսական ընկերութիւնը», որի գրասենեակը և գիմեցինք մենք, որպէս զի տեղեկանանք, թէ երբ է շոգենաւը մեկնում: Իմանալով այդ՝ գնացինք տեսնելու այն շոգենաւը, որ պէտք է մեզ Կ. Պօլիս տաներ: Բարձրացանք շոգենաւը. նա շատ վատ տպաւորութիւն թողեց ինձ վրայ. փոքր էր, կեղտոտ և մանաւանդ օթեակներն անյարմար: Իսկոյն վճռեցի թողնել այդ շոգենաւը: Բայց ես սպասում էի Սև Ծովի վրայ

ուղևորների համար աւելի յարմարագոյն շոգենաւների հանդիպել, քան Կասպիականի վերայ եղածներն են։ Եւ ահա դիմեցի նաւապետին և հարցրի.

—Ասացէք խնդրեմ, պարոն, մի՞թէ այս ընկերութեան բոլոր շոգենաւները այսպէս փոքր են ու անյարմար։

—Ոչ, այդպէս հասարակ և աննշան են միայն այս գծի վրայ երթևեկող շոգենաւները, իսկ դէպ Օգեսսա գնացող շոգենաւները մեծ մեծ են և ըստ ամենայնի յարմար, պատասխանեց նա։

—Ինչո՞ւ համար, մի՞թէ ընկերութեան համար միևնոյն չէ այս կամ այն գիծը։

—Այ՛ն, միևնոյն չէ, պատասխանեց նաւապետը։—Այս գիծը տանում է Սամսոն, Տրապիզոն և Կ. Պոլիս։ Դէպ այդ քաղաքները գնում են մեծաւ մասամբ, հասարակ դասակարգի մարդիկ, որոնց պահանջներն էլ հասարակ են։

Եւ ապա աւելացրեց—իսկ դո՞ւք ուր էք կամենում գնալ։

—Իմ ցանկութիւնն է Կ. Պոլսի վրայով Վեննա գնալ, իսկ այդ տեղից էլ Ֆրանսիա, պատասխանեցի։

—Հապա ինչո՞ւ համար էք ուզում անպատճառ Կ. Պոլսի վրայով գնալ։ Կարծեմ էք մի՞թէ Կ. Պոլսի նեղ և ցեխոտ փողոցներին՝ իրանց լեգէօն շներով։ Ես խորհուրդ կտայի Օգեսայի վրայով Վեննա գնալ։


Իմ շնորհակալութիւնը յայտնելով նաւապետին իւր տուած բարեկամական խորհրդի համար, դուրս եկանք։ Երկիւղն արդէն պատել էր իմ սիրտը. ես չէի ուզում այդ փոքրիկ նաւով ճանապարհ ընկնել։ Մտածում էի, ո՛վ գիտէ՝ ինչ կարող է պատահել ծովի վրայ, մանաւանդ եթէ փոթորիկ էլ բարձրանայ։ Եւ վճռեցինք Օգեսսա գնալ։

Հետևեալ օրը մենք հաւաքուեցանք նոյն ընկերութեան «Ալէքսանդր» շոգենաւը։ Գիշերուայ ասենումէկ ժամն էր, մեր շոգենաւը խարխափը բարձրացրեց, մի քանի անգամ սուլեց և տեղից շարժուեց, ճանապարհ ընկաւ։ Ուղեւորների ազգականներն ու ծանօթները՝ տղամարդիկ և կանայք նաւամատոյցի կամրջին կանգնած իրանց վերջին «մբնաք բարևներն» էին ուղարկում։ Ոմանք լաց էին լինում, ոմանք ծիծաղում, իսկ զուարճասէրի մէկը մի շիշ գարեջուր ձեռքին լցնում էր բաժակը և ուղևորներին բարի ճանապարհ մաղթելով՝ խմում։





III



Ծովը խաղաղ էր, շոգենաւը չրերը պատռելով՝ առաջ էր լողում։ Կարծես թէ չէր շարժւում։ Ուրախ և զուարթ էր մեր տրամադրութիւնը։ Այդպէս էր և միւս օրը. ծովեզրը աներևութացել էր, չքացել։ Մենք տեսնում էինք միայն չրալին անսահման տարածութիւն և երկնքի կապոյտը։ Սակայն երկրորդ գիշերը, երբ արդէն մօտեցել էինք Նովոռոսիսկ քաղաքին քամի բարձրացաւ. չրերի խաղաղութիւնը վրդովուեց, ալիքները հեազհետէ աւելի և աւելի էին կատաղում։ Շոգենաւն օրօրւում էր, մի կողմից միւսը տատանւում։ Ուղևորներից ոմանց գլուխն էր ցաւում, ոմանց սիրտը խառնում. դրանց թւումն էր և իմ Նիկողայոսը։

Բարեբաղդաբար նաւահանգիստը մօտ էր. առաւօտը մեր շոգենաւը մտաւ Նովոռոսիսկի նաւահանգիստը։ Շոգենաւն այդտեղ չորս ժամ պէտք է մնար. ուստի և մենք ելանք, կառք նստեցինք և գնացինք քաղաքը դիտելու և զբօսնելու։ Սակայն հետաքրքրական ոչինչ չտեսնելով՝ շուտով էլ վերադարձանք մեր շոգենաւը։

Միւս օրն առաւօտեան մօտաւորապէս 11 ժամին Թէոդոսիա քաղաքը հասանք։ Այդ տեղ է ծրնուել հռչակաւոր նկարիչ Այվազովսկին։

Այդ մեծ բանաստեղծը Թէոդոսիայում բաւական գեղեցիկ երկյարկանի տուն ունի։ Մենք կառք նստեցինք և գիմեցինք այնտեղ՝ մեծ նկարչի պատկերահանդէսը տեսնելու։ Այվազովսկու քոյրը ընդունեց մեզ շատ սիրով և հրաւիրեց մի մեծ դահլիճ, ուր պատերի վերայ կախուած էին զանազան բովանդակութեամբ մեծ ու փոքր նկարներ։ Նկարները ոսկէ շրջանակների մէջ ամփոփած՝ շարուած էին խիստ գեղեցիկ ճաշակով։ Ինչ մասնագէտի գործն է արժանապէս գնահատել մեծ նկարչի վրձինի արտադրութիւնը։ Բայց բուն բանաստեղծական գործի վեմ առանձնայատկութիւնը կայանում է հենց նրանում, որ ոչ մասնագէտն էլ զօրեղ կերպով տպաւորւում է։ Այդպիսի տպաւորութիւն թողեց ինձ վրայ մի մեծ նկար՝ փոթորիկը ծովի վրայ։ Ծովը կատաղած է. այդ կատաղութեան ձեռքին խաղալիք է դարձել մի՝ մեծ նաւ։ Լեառն-

ալիքները՝ կատաղութիւնից փրփրած վիշապների նման յարձակւում են նաւի վրայ, խորտակել, կործանել են սպառնում: Իսկ նաւի մարդիկը՝ արք, կանայք և երեխայք, յուսահատ աչքերը երկինք են ուղղել, ձեռները տարածել: Երկնքից են նորանք օգնութիւն սպասում. ըստ երևոյթին հէնց այդ են աղերսում: Մարդը, բնութեան այդ հպարտ, այդ մեծամիտ որդին այս տեղ խեղճացել է, իրեն թոյլ և անզօր է զգում: Ողբերգական նկարը ծանր տպաւորութիւն թողեց ինձ վրայ: Ես մի կողմ քաշուեցայ նստեցի բազկաթոռի վրայ, և երկար մտածում էի, երկար հաշիւ էի տեսնում իմ տպաւորութիւնների հետ: Միտս ընկաւ մի ուղեգրական գրուածք, ուր հեղինակը հետևեալ միտքն է յայտնում. «Ով փոթորիկ չէ տեսել, նա չէ կարող Աստուած ճանաչել:»

Ճշմարիտ որ՝ այդպէս է:

Թէոդոսիայից շոգենաւը դուրս ելաւ և հետեւեալ օրը Եալտա հասաւ: Առանց ժամանակ կորցնելու մենք կառք նստեցինք և գնացինք քաղաքը շրջագայելու: Եալտան մի գեղեցիկ քաղաք է, հարուստ բուսականութեամբ: Գովուած է մանաւանդ Եալտայի խաղողը, որի համար այդ տեղ գալիս են Ռուսաստանի զանազան քաղաքներից և Կովկասից հազարաւոր հիւանդներ: Դրա համար քաղաքում կան յարմարաւոր և ճոխ հիւրանոցներ: Դիտողի համար գեղեցիկ տեսարան է ներկայացնում Եալ-

Первая Советская библиотека
№ 1381
имени Ленина

տայի դիրքը. ծովափից սկսուելով նա բարձրանում է դէպի սարը, որպէս ամփիթէատրոն:

Եալտայից մեկնելով դէպի Սեաստօպոլ, մեր շոգենաւը թողած բաց ծովը, այլ ևս չէր ուզում եզերքից բաժանուիլ: Ուղևորներին մեծ զուարճութիւն էին պատճառում բազմաթիւ դելփինները, թռչուն ձկները: Միմեանց ետևից դուրս գալով ջրերի տակից՝ խաղալով ու խայտալով, կարծես նրանք ուզում էին մրցել մեր շոգենաւի հետ: Ամենայն ուժով դէպ առաջ էին լողում և թռչկոտում և դարձեալ ջրերի յատակը խորասուզւում:

Երեկոյեան պահուն դուրս եկանք Սեաստօպոլից, պարզ և հանգարտ եղանակ էր: Կէս գիշերին սակայն շոգենաւն սկսեց օրօրուիլ: Մենք Եալտայի առաջևն էինք. այստեղ, ասում են, մշտական քամի է լինում: Առաւօտը մօտաւորապէս ութ ժամին՝ մենք հեռուից նկատեցինք Օդեսան:

Առաջին անգամն է, որ ես տեսնում եմ Ռուսիայի այդ նշանաւոր քաղաքը: Ծովի վրայից դիտողի համար նա բաւականին հրապուրիչ է. գոյն զգոյն և գեղեցիկ ապարանքներ, տներ, գմբէթներ, կաթուղիկէները գրաւում են դիտողի ուշադրութիւնը: Մեր շոգենաւն անվրդով անցնելով նաւահանգստի քարեայ պատսպարանները, որոնք շինուած են փոթորկից ապահով պահելու համար, մօտեցաւ կամրջին: Մենք դուրս եկանք շոգենա-

(1151) 13219-58

Գլխ. հանրային գրադարան ՀԱՅԿ-ՍՍՌ


ւից, նախասէս մեր շնորհակալութիւնը յայտնելով նաւապետին այն յաջողութեան համար, որով նա ղեկավարեց մեր ճանապարհորդութիւնը։

Կաս քով ծովափից դէպի քաղաքի կեդրոնը բարձրացանք։ Օդեսսան նոր քաղաք է։ Ամեն բան, որ ձեր աչքին է ընկնում, նոր է երևում։ Կարծես ամեն ինչ նոր է այստեղ ստեղծուած։ Նաւահանգստում կամրջների մօտ բազմաթիւ շոգենաւներ և զանազան մեծութեան առագաստաւոր նաւեր խարիսխ ձգած, կանգնած են կարգով։ Նաւերը բարձում և դատարկում են կատարելագործուած կերպով, մեքենաների օգնութեամբ։ Պարսալ և անգործ մարդիկ գրեթէ չեն հանդիպում։ Ամեն մարդ որ և է զբաղմունք ունի։ Օրինակելի է քաղաքի մաքրութիւնը։ Փողոցները սալայատակած են սրբատաշ քարերով, որոնք, ինչպէս ասում են, բերուած են արտասահմանից։

Փողոցներում՝ տների առջև շարքով տնկուած են ակացիի ծառեր։ Բացերը ևս ծառազարդ են. գրեթէ իւրաքանչիւր տան առջև մի պարտէզ կայ։ Յաճախ են պատահում այնպիսի տներ, որոնք թաղուած են խիտ ծառաստանի մէջ։

Բազմաթիւ են նոյնպէս զբօսավայրերը, քաղաքային այգիները և պարտէզները, ուր բնութիւնն և արուեստը անխնայ թափել են ամենայն բարիք։ Ռուսականութեամբ հարուստ են և քաղաքի շրջակայքը։

Հրէաները այստեղ ևս իրանց ձեռքն են գցել առևտուրը։ Նրանց են պատկանում քաղաքի հոյակապ տները, նրանց են պատկանում նշանաւոր գրասենեակները և առևտրական տները։ Ով որ արտասահմանի հետ գործ ունի, ով որ կամենում է փող փոխադրել կամ մուրհակ զեղչել, կամայ թէ ակամայ պէտք է հրէաներին դիմի։ Իսրայէլի որդիքը այդպէս են ամեն տեղ։ Փող ձեռք բերելու համար նրանք սուրբ են համարում բոլոր միջոցները։



IV



Օրն անցաւ. երեկոյեան դէպի Վիեննա ճանապարհուեցինք։ Այդ այն Վիեննան է, որին կարօտում էի մանկութեանս օրերից, այնքան էի նրա մասին գովեստները լսել մեր տանը։ Հետևեալ օրը ցերեկուայ երկու ժամին մենք Աւստրիայի սահմանը հասանք։ Պէտք է Աւստրիական շոգեկառքը փոխուէինք։ Իսկ մինչ այդ՝ Աւստրիական մաքսատան աստիճանաւորները պէտք է խուզարկէին մեր պայուսակն ու արկղիկները և ըստ օրինի մաքսի

ենթակայ իրերի համար մաքս վերցնէին։ Մենք անհոգ կանգնած՝ այդ արարողութեան վերջին էինք սպասում, ըստ որում վստահ էի, որ մաքսի ենթարկուող ոչինչ չպիտի գտնէին։ Բայց մենք սըխալուել էինք. մաքսաւորները իմ պայուսակի մէջ կէս ֆունտ ծխախոտ և եօթանասուն հատ սիգար գտան և լրբաբար դրանց համար մէկ գուլդէն մաքս պահանջեցին։ Առանց որևէ նկատողութեան ես կատարեցի նրանց պահանջը։ Բայց գա, իմ այդ քաղաքավարի թուլութիւնը աւելի երես տուաւ նրանց և յանդուգն դարձրեց։ Այժմ էլ նըրանք մաքս պահանջեցին իմ նոր կարել տուած կրկնակօշիկներիս համար, որ գտան պայուսակիս մէջ, ըստ որում ցեխ և անձրև չլինելու պատճառով չէի հագել։ Կրկնակօշիկներիս միջից կպցրած էին ազգանունս սկզբնատառերն «A»։

Մաքսաւորների վրայ ծիծաղեցի, և, հասկացրի նրանց՝ թէ ինչ բան է կրկնակօշիկը, երբ և ինչո՞ւ համար են հագնում։ Այլ և աւելցրի.— Այստեղ իշխանութիւնը ձերն է, եթէ պահանջէք, ես կվճարեմ մաքսը, բայց և Աւստրիական թերթերի ընթերցողներին զուարճացնելու համար կհաղորդեմ նրանց ձեր հաւատարիմ պաշտօնէութիւնը, ձեր անսահման եռանդը, որ Աւստրիայի պետական գանձարանը լցնելու նպատակով՝ կրկնակօշիկների համար էլ էք մաքս պահանջում։

Նրանք մի փոքր կարմրեցին և թողնելով ի—

բենց պահանջը՝ հեռացան։ Իսկ մենք Աւստրիական գնացքով Վեննա ճանապարհուեցինք։

Երկրորդ օրն էր, առաւօտեան տասը ժամը. շոգեկառքը կանգ առաւ մի փառաւոր և բազմամարդ կայարանի առջև։ Մենք կառք նստեցինք և Մետրոպոլ հիւրանոցը գնացինք։ Դա մի ահագին հիւրանոց է՝ չորս թէ հինգ յարկանի։ Որովհետև առաջին յարկերում ազատ սենեակ չկար, մեզ մեքենայով բարձրացրին չորրորդ յարկը։ Այդ հետաքրքիր գործողութիւնն այսպէս է կատարւում։ Շինութեան ստորոտից մինչև վեր հիւրանոցը մի սենեակի տարածութեամբ դատարկ տեղ ունի։ Այդ տարածութեան չափով մի սենեակ է շինուած փայտից որ և պատշաճաւոր կերպով կահաւորած է. ներքևում մտնում էք այդ սենեակը, մեքենաները նրան վեր են բարձրացնում, նայելով՝ թէ ո՞ր յարկումն է ձեր սենեակը, դուք այն յարկի հաշտում (կորիդոր) իջնում էք վեր բարձրացող սենեակից։ Մենք բարձրացանք չորրորդ յարկը և իջանք այդ տեղի հաշտում։

Գեղեցիկ է ու հոյակապ Աւստրիոյ մայրաքաղաքը՝ միջովն հոսող Դանուբ գետով։ Առևտուրը ծաղկած, բնակչաց թիւը մեծ, մօտ մէկու կէս միլիօն, որի մի խոշոր մասը հրէայք են։ Դրանք այստեղ ահագին այժ են կազմում թէ առևտրական աշխարհում և թէ Պարլամենտում և առ հասարակ քաղաքական շրջաններում։

Հալորդակցութեան բազմաթիւ ճանապարհները, որոնք՝ ինչպէս մի հսկայական անուի ճաղերը, այս տեղից դէպի զանազան կողմեր են բաժանւում, Վեննային կենտրոնական ամենանշանաւոր քաղաքներից մէկն են դարձնում. ճանապարհորդների ահագին բազմութեամբ և ապրանքների հսկայական շտեմարաններով միշտ լիքն է Վեննան։

Հետևեալ օրը մենք գնացինք ցուցահանդէսը տեսնելու։ Այդ տեղ ի ցոյց էին դրուած, արհեստի և արդիւնաբերութեան բոլոր արդիւնքները։ Մեծ մեծ խանութաձև տնակներում և քէօշկերում կարգով զետեղուած էին մետաքսեայ, բամբակեայ և բրդեայ ապրանքներ, ալակեղէն, մետաղեայ իրեղէններ, մեքենաներ և այլն։ Մի առանձին բաժանմունքում տեղաւորուած էին չորքոտանի կենդանիները։ Առանձին բաժանմունք էին կազմում և թռչունները։ Բակի մէջ տեղում մի գեղեցիկ շատրուան էր շինուած, որից բղխող ջուրը ամեն մի վայրկեանում փոխում էր իւր գոյնը։ Նայում էք. ահա բղխում է ջուրը ճերմակ գոյնով, ապա նա կարմիր գոյն է առնում, յետոյ դեղին, կապոյտ, մանիշակի գոյն, կանաչ և այլն։ Գիտութեան և արուեստի այդ ֆօկուսը առաջին անգամն էինք տեսնում, ուստի և շատ զարմացանք, բայց յետոյ այնքան տեսանք Փարիզում, որ սովորական իրերի կարգն անցաւ։

V



Այցելեցինք Մխիթարեան վանքը։ Երիտասարդ վարդապետ Հ. Գրիգորիս Գալէմքարեանը շատ սիրով ընդունեց մեզ։ Կարճատև հարց և պատասխանից, խօսք և զրոյցից յետոյ՝ ես դիմեցի նորան և ասացի.

«Թոյլ կտա՞ք արդեօք տեսնել Ձեր թանկագին գրատունը և միւս հազուագիւտ բանները, որոնց մասին մենք հեռուից լսել ենք։

—Մեծաւ ուրախութեամբ, պատասխանեց վերապատուելի հայրը, աւելացնելով.—եթէ հաճիք,

ես ձեզ կներկայացնեմ մեր Աբբահօրը՝ հայր Այտընեանին։

«Շատ ուրախ կլինիմ, պատասխանեցի ես։ Եւ բարձրացանք վերին յարկը, մտանք դասարանները, որոնք փոքր էին, բայց մաքուր և լոյս։ Նստարանները կարգով շարուած, բայց սովորող ոչ ոք էր կար։ Ես յիշեցի վեր. հօրը Իսահակի առ Աբրահամն ուղղած հարցը, թէ ահաւասիկ հուր և փայտ, ո՞ւր է ոչխակեզը,—և աւելացրի «ո՞ւր են սովորողները»։

Նա պատասխանեց. «Շոգերի պատճառով նրբանք այժմ ամարանոցումն են»։

Գրադարանում նրա համբաւի չափ նշանաւոր բան չը տեսայ։ Աչքի էին ընկնում մի քանի հին գրչագրեր, որոնց մէջ մանաւանդ գնահատելի էր Ագաթանգեղոսի պատմութիւնը՝ մագաղաթեայ։ Թանգարանում կային հայոց և այլ թագաւորութեանց զանազան դրամներ և ուրիշ ոչինչ։

Աբբահայրը մի չոր և ցամաք մարդ էր, մօտեցայ, համբուրեցի նրա աջը։ Կարծում էի և սպասում, թէ հետաքրքիր խօսակցութիւն կըսկսի։ Բայց իմ հարցերին նա սառն, անտարբեր, մասամբ և հեգնութեամբ պատասխաններ տուաւ։ Ինձ այնպէս թուաց, թէ կամ այդ մարդը չէ ուզում խօսել և կամ թէ առանձին քնքոյշ զգացմունքներ չէ տածում դէպի Հայաստան հայը։ Պէտք էր վերջ տալ անհետաքրքիր, ձանձրալի րո-

պէններին, ես վեր կացայ տեղիցս սուս ու փուս, մինչև անգամ չմօտեցայ նրա աչը համբուրելու, այլ լուռ գլուխ տուի և հրաժարուեցայ: Մեզ շաբաթնակ ուղեկցում էր հայր Գալէմքարեանը: Ես դիմեցի նրան ասելով:

«Հայր, հազար ափսոս, որ Ձեզ նման վարվըռուն և ջանասէր մարդը աշխատում է այս վանքում այդպէս անհոտ առաջնորդի ձեռքի տակ: Եթէ դուք Ձեր այդ աշխատասիրութեամբ մեր վանքերից մէկումը լինէիք, որբի տեղ կպաշտէին Ձեզ:

Հայր Գալեմքարեանը դժուարանում էր պատասխանել և վերջը կմկմալով ասաց. «խնդրեմ նեբոլամիա եղէք, մեր սրբազանը մենակեաց կեանք է վարում, գիտութիւններով է պարապում և առանձին խօսակցութիւն չէ սիրում»:


Գնում ենք տպարանը, պէտք է տորին յարկը իջնէինք փայտեայ նեղ ու մութ սանդուղներով:

«Տէր Աստուած, բացականչեցի ես՝ դիմելով մեզ ուղեկցող վեր. հօրը, միթէ սպասելի՞ էր տեսնել այդ հոյակապ վանքի մէջ այդքան «խեղճ» սանդուղներ: Միթէ չէ՞ք մտածում այլեփոքել այդ սանդուղներից և ընկնել:

—Արդարացի է Ձեր նկատողութիւնը, դիտեց նա. մինչև հիմա մէջից չունէինք նորոգելու մի քանի բաներ, ի թիւս որոց և այս սանդուղը: Բայց

եթէ գալ տարի Աստուծոյ յաջողութեամբ գաք, այդպէս քայքայուած չէք տեսնիլ [1]»:

Իսկապէս յետոյ՝ մեր ուղեկիցը հրաւիրեց մեզ ընդունարան մի բաժակ սուրճ վայելելու. իսկ մենք մեր խորին շնորհակալութիւնները յայտնելով՝ վերադարձանք հիւրանոց:



1. Հետևեալ տարին Եւրոպա գնալով՝ այցելեցի Հայր Գալեմքարեանին և յիրաւի ակնարկուած նորոգութիւնը կատարուած տեսայ. նախկին սանդուղի տեղը բռնել էր քարեայ սանդուղ՝ կողափակուած երկաթեայ վանդակներով: Բայց դարձեալ ոչ այնպէս, ինչպէս վայել էր:

VI



Երեք թէ չորս օր մնացի Վեննա. դէպքից օգտուելով, հրաւիրեցի բժշկապետ պ. Օզերին, որ պատուիրեց,— վիշի գնալ և հանքային ջրերով բուժիլ։ Մինչև Վեննայից դուրս կգայինք, ես կարողացայ տեսնել քաղաքային թանգարանը։ Այդ թանգարանի դահլիճները լիքն են զանազան ժամանակների նկարներով, տնային իրեղէններով, դաշտային, որսորդական և զինուորական գործիներով, հագուստե-

վերաբերեալ պարագաներով, կուռքերով և այլն և այլն։ Մի խօսքով այդ տեղ շօշափելի կերպով պատկերանում է մարդկային կեանքը իւր ընթացքով և զարգացումով, սկզբից մինչև վերջ։

Վեննայից կարելի էր ուղղակի Փրանսիա գընալ։ Բայց մենք թողնինք այդ ճանապարհը։ Կամեցանք գնալ Վենետիկ, տեսնել տեղւոյն Մխիթարեան վանքը և մանաւանդ Ա.ւարայրի մեղուաշուրթն բլբուլին՝ հայր Ալիշանին։

Ուստի և ճանապարհուեցինք դէպի Իտալիա։

Երկաթուղու գնացքը դէպի Իտալիա սլանում է բարձրաւանդակ լեռների վրայով։ Երբեմն անցնում է տոնելներով. այդ տեղ նա ահռելի է։ Շաւում է, շառաչում, որոտում և իւր արձագանքը տոնելի մթութեան մէջ ձգելով՝ առաջ է վազում։ Իսկ ճանապարհորդը ձեռները կրծքին բարդած, զմայլում է Նախախնամութեան խորհուրդների և գաղտնիքների վրայ։ Մահկանացու մարդը իւր խելքով և գիտութեամբ արհամարհելով արծիւներին անգամ դժուարամատչելի լեռնագագաթները՝ հաղորդակցութեան դիւրին ճանապարհ է դարձրել այն, որ մի ժամանակ նոյն մարդուն միայն ահ և սարսափ էր պատճառում։ Վեննայից մինչև Վենետիկ ընկած լեռների մէջ մինչև քսան տոնել է շինուած, որոնց միջով անցնում է շոգեկառքը։ Պարզ բան է, տոնելների մէջ արևի լոյսը չէ թափանցում,

ուստի և շոգեկառքն այդտեղ ժամերով լուսաւորուած է լինում։

Ճանապարհը հարուստ է ամենագեղեցիկ տեսարաններով։ Տեսնում էք կանաչապատ լեռներ և բլուրներ և յանկարծ ձիւն լեռնագագաթների վերայ և ձորերի և հովիտների խորքերում, ուր արևի այրող զօրութիւնը թուլանում է, անզօր է դառնում։ Տեսնում էք լեռներից իջնող հազարաւոր առուակներ, որոնք միանալով մեծանում են, մի բարձրութիւնից վայրենի կատաղութեամբ թափւում է և մի հրաշալի ջրվէժ կազմում։ Դուք հիանում էք, չէք ուզում աչքերդ հեռացնել այդ տեսարաններից։ Բայց շոգին չգիտէ ձեր ցանկութիւնները, նա վազում է, և ձեզ էլ հեռը տանում։

Գիշերուայ տասնումէկ ժամն էր, երբ մենք հասանք Վենետկի կայարանը։ Բազմաթիւ կօմիսիօներների ձեռքից չգիտէինք ինչ անենք։ Դրանցից ամեն մէկը մեզ հրաւիրում էր այն հիւրանոցը, որի ներկայացուցիչն էր ինքը։ Ձափազանց եռանդից նրանք միմեանց ձեռքից խլում էին մեր պայուսակներն ու արկղները։ Դրանց ձանձրալի մրցմանն ու պայքարին վերջ տալու համար՝ մենք ընտրեցինք Եւրոպա հիւրանոցը։

«Եւրոպալի» կօմիսիօները հենց որ լսեց մեր վճիռը, իսկոյն խլեց մնացեալի ձեռքից մեր իրերը և մի հպարտ հայեացք գցելով նրանց

վրայ՝ կարծես ասում էր՝ «լաւ նայեցէք, յաղթանակը իմն է»։

Հիւրանոց գնալուց յետոյ իմացայ, որ իւրաքանչիւր կօմիսիօներ հիւրանոցը հիւր տանելու համար առանձին վարձ է տանում հիւրանոցի տիրոջից։ Միտս ընկաւ մեր Սաքօն։ Դա զարթաղցի տղայ էր, որ երկար ժամանակ ջուր էր բերում մեր տուն Բագուում։ Մի էշ ունէր, որի յետևից ընկած ամեն օր մեր տունն էր մտնում, ջուրը դատարկում, գնում։ Մի օր էլ ջրաբեր Սաքօն մօտեցաւ ինձ և ասաց.

«Աղա, հալալ ըրա, հինչ վեր ինձ տուալ ըս. մնաք բարով. ես տօն ըմ քինում»։

— Աղա, բա մեր ջուրը հո՞ւ ա բըրլական, վեր դու քինում ըս։

«Աղա, հիւր վեր էշս ծախալ ըմ, նա կբերի։

— Բա էշդ քանա՞ւ ըս ծախալ։

«Աղա, իժան տուի, վաթսուն մնեթա։

— Ա՛ էշին գինը 10 եա 15 մանեթ կինի. հունց թա վացուն մանեթ։

«Հ՛ը, աղա, ախր էշս ձեր տանաւն ըմ ծախալ։

— Աղա գիժուա՞լ ըս, թա հինչ ըս ասում։

«Ջը մատաղ, աղա, էլ խէ՛ ըմ գիժւում. մին ասի տեսնամ դու իմ մուշտարին ըս, թա չէ։

— Հա՛, մուշտարիդ ըմ։

«Դէ գլխաւդ շուռ տամ, էշս առնողը վեր օրիշ էշ առնար, պետմա թագա մուշտարի քինար, մհեկ

հազըը համ մուշտարի, համ էշ. դէ թող լակուտը ինձ շահի, ինքն էլ փուլ աշխատի, չիշէ»։

Նոր հասկացայ բանի էութիւնը. ուրեմն լաւ մուշտարի լինելուց, էշը թանգ գնով է ծախւում։

Վենետկի կայարանից շատ հեռի չեն Վենետկի ջրերը։ Այդտեղ շարքով կանգնած են գեղեցիկ գօնդոլները՝ լուսաւորուած լապտերներով։ Մենք վարձեցինք դրանցից մէկը։ Զլապինդ նաւաստիներն սկսեցին աշխոյժով թիավարել։ Մեր գօնդօլը լողալով՝ առաջ անցաւ ջրային փողոցները և կանգնեց մի գեղեցիկ հիւրանոցի առջև։ Մենք բարձրացանք «Եւրոպա» հիւրանոցը։ Հիւրանոցի վերին յարկում մեզ երկու սենեակ տուին։ Ոտ դրինք այդ սենեակները թէ չէ՝ խոնաւութեան հոտը բռնեց մեզ. մի և նոյն ժամանակ այնքան տաք էր, որ կարծեցինք, թէ բաղնիք ենք մտել։ Սակայն շուտով ընտելացանք այդ օդին և ընթրիք անելով՝ պառկեցանք քնելու։



VII



Հետևեալ օրը առաւօտեան շատ վաղ զարթնեցայ և պատուհանից դիտում էի դուրսը։ Հիւրանոցի երկու կողմն է միայն բաց, արձակ և այն էլ ջուր է։ Հիւրանոցի առջև փողոցի երկարութեամբ շարուած են նախշուն գորգերով զարդարուն գօնդոլները։ Աղէքսանդրն և Նիկողայոսն էլ զարթեցան։ Սուրճ խմելուց յետոյ՝ գնացինք քաղաքը շրջելու։ Մենք անցնում էինք նեղ փողոցներով և հանդիպում զուարթադէմ իտալացիների և ֆրանսիացիների։ Վերջիններըը շատ հիւրասէր են, նրանք գիտեն ընդունել ձեզ նուրբ քաղաքավարութեամբ և պատուել ամենահամեղ և ճաշակաւոր կերակուրներով։ Տեսայ Վենետկի բոլոր փողոցները և շուկան. այդ-

տեղ ծախսում էին բազմատեսակ ձկները, որոնց մէջ առանձնապէս մեր ուշադրութիւնը գրաւեցին՝ ոսկեձուկը՝ իբրև հայրենի երկրի ձուկ ու օմար խեցգետինը իւր ահագին մեծութեամբ։

Հիւրանոցում պատուիրել էի ս. Ղազարու վանքը գնալու համար գոնդոլ վարձել։ Ճաշի նստեցինք. իւր համեղութեամբ հրաշալի էր այդ ճաշը, չգիտեմ կերակուրների որակութիւնից, թէ մեր ախորժակի դիւցազնական տրամադրութիւնից։ Բայց ահա և գօնդոլը պատրաստ է իւր նախշուն գորգովը։

Մենք գնում ենք վանքը։ Քաղաքից մինչև այդտեղ մի ժամուայ ճանապարհ է։ Դուրս գալով ջրային փողոցներից՝ մտնում էք մի մեծ լիճ, ուր հանդիպում ենք երթևեկող բազմաթիւ նաւակների։ Ի վաղուց անտի մի գեղասիրական սովորութիւն է հաստատուած այս տեղ, ճանապարհորդները այդ տեղ լճի վրայ իրանց գօնդոլի մէջ նկարուում են։ Հետեւելով այդ սովորութեանը՝ վաղօրօք պատուիրել էի լուսանկարչի, որ իւր մեքենայով սպասէ մեզ լճի միւս ափին։ Մենք մօտեցանք նրան։ Թիավարները սովոր այդ արարողութեանը՝ գօնդոլին այն դիրքը տուին, որ ամենայարմարն էր նկարուելու համար։ Լուսանկարիչը արագութեամբ իւր գործը տեսաւ։ Իմանալով որ արդէն նկարուել ենք, մենք յառաջ լողացինք և վերջապէս Վենետկի Մխիթարեան վանքը հասանք։

Գեղեցիկ է Վենետկի ծոցը. ջուրը բիւրեղի պէս յստակ է, պարզ և խաղաղ։ Աչքիդ առջև բացուում է մի ընդարձակ և խիստ գեղեցիկ հորիզոն՝ լի ճոխ տեսարաններով։ Ջրերի կապուտակութեան հետ դուք տեսնում էք հոյակապ և բազմայարկ տներ, որոնք զմայլեցնում են ձեզ իրանց գօթական ճարտարապետութեամբ, իրանց ոճի, ձևերի և շինուածքի փարթամութեամբ և վեհութեամբ։ Տեսնում էք ահագին շէնքեր, հսկայական տներ, որոնք յենուած են ձեռակերտ արձանների վրայ, իսկ այդ արձանները կամ հրեշտակներ են պատկերացնում, կամ յաւերժահարսներ, կամ երևակայութեան ստեղծած արարածներ։

Հեռուում կապուտին է տալիս Ադրիական ծովի նեղուցը։ Երևում են շոգենաւեր և առագաստանաւեր։ Փոքրիկ նաւակներն առագաստները բաց արած շրջում են այդ դիւթական ջրերի վրայ։ Նաւակներից լսւում են երգի և նուագածութեան ձայներ, դրանք գրաւում յափշտակում են ինձ, և տանում մի ոչ երկրային աշխարհ, հրեշտակների բնակավայր։ Թւում էր, թէ ես ընկել եմ մի այնպիսի աշխարհ, որպիսին նկարագրում է «Հազար և մէկ գիշերների» հեղինակը։

Վենետկեցիք գրեթէ ամբողջ գիշերն այդ ջրերի վրայ են անցկացնում, գօնդոլների մէջ, կապոյտ երկնակամարի տակ։ Եւ ո՛րքան սքանչելի է այդ երկնակամարը, որքան գեղեցիկ և պայծառ

են փայլում աստղերը, որոնց համարել կարող ես։

Մօտեցանք վանքին, մեր գօնդոլը մտաւ սրահը։ Հիւրընկալ վարդապետը նկատելով մեզ՝ մօտեցաւ, բարևեց և մաքուր հայերէնով հրաւիրեց մեզ ընդունարանը։ Ո՜րքան ուրախացայ, այդ օտար երկնակամարի տակ այդքան մաքուր հայերէն լսելով։

Վանքի բակը չափազանց գեղեցիկ երևաց ինձ. մի մեծ պարտէզ իւր պտղաբեր ծառերով զարդարում էր նրա մի կողմը։ Բակի մէջ տեղը հսկայ հսկայ կանգնել էր Մագնոլիայի մի վիթխարի ծառ. նրա սպիտակ վարդանման ծաղիկները բայուսել և իրանց սուր և ախորժ բուրմունքով լցրել էին օդը։

Կարճատև խօսակցութիւնից յետոյ վարդապետը ներողութիւն խնդրեց և հեռացաւ՝ Հայր Ալիշանին օտարականներիս գալուստը յայտնելու և մեզ հրաւիրելու նպատակով։ Կարծես նա էլ գիտէր, որ մեր այստեղ գալու միակ նպատակը Հայր Ալիշանին տեսնելն էր։

Մինչև Հ. Ալիշանի գալը՝ ես մի հայեացք գցեցի այս ընդունարանի վրայ։ Դա չափազանց մաքուր և շատ ընդարձակ սենեակ էր. կլոր սեղանի շուրջը շարուած էին բազկաթոռներ։ Պատերի վրայ կախուած էին զանազան պատկերներ, որոնց մէջ—ամենապատուաւոր տեղն էին բռնում Մխիթար, Աբբայի և Ֆրանցիսկոս Թագաւորի պատկերները։ Առաջինը մեծ յարգանք է վայելում իբրև այդ նշանաւոր հաստատութեան հիմնադիր, երկրորդը՝ որպէս օժանդակող. դա է, որ վանքին ընդարձակ և պարարտ կալուածք է յատկացրել։

Շատ չանցաւ և յուշիկ քայլերով ներս մտաւ Հայր Ալիշանը՝ ուղեկցութեամբ մեզ ծանօթ հերթակալ վարդապետի։ Նա ուրախ դէմքով մօտեցաւ մեզ և բարևելով՝ ասաց.—Որդեակք իմ, չափազանց ուրախ եմ այս վանքի մէջ տեսնելով մեր հայաստանեայց զաւակներին»։ Մենք արդէն ոտքի էինք կանգնած, Ալիշանի դէմքը անծանօթ չէր ինձ։ Բազում մեր տանը պահում էր նրա լուսանկար պատկերը, և ես շատ անգամ եմ նայել նրան խորին հրճուանքով։ Ես խոնարհեցայ նահապետի աչքը համբուրելու և ասացի.

«Հայր. մենք առաւել ուրախ ենք, որ Աստուածային յաջողութեամբ տեսնում ենք Ձեզ, մեր հայրենեաց անցեալ փառքի և ներկայ աւերակների երգչին և տեղագրողին։ Ձեզ տեսնելու անհուն փափագն էր, որ մեզ քարշեց այս հեռաւոր անկիւնը։ Այժմ ինձ բախտաւոր և երջանիկ եմ համարում, որ Ձեզ անձամբ տեսնում եմ և այն էլ այնպէս, ինչպէս պատկերաւորել էի իմ հոգուս մէջ»։

Ալիշանը նստեց աթոռի վրայ և մեզ էլ հրաւիրեց նստելու։ Այս սկսեց զանազան հարցեր առաջարկել մեր հայրենիքի վերաբերեալ, թէ հայե-

ըն ինչպէս են ապրում Ռուսաստանում. ինչպէս է նրանց առևտուրը, հողագործութիւնը, ուսում նասէր են արդեօք և այլն։

Այդ հարցերին ես մանրամասն պատասխաններ տուի, և նահապետը լսում էր հետաքրքրութեամբ։ Ասացի, որ ռուսաց Կայսրն այնքան ողորմածութեամբ է նայում մեր ազգին և եկեղեցուն, որ իւր հարազատ որդոց հետ հաւասարապէս նոյն արտօնութիւններն ենք վայելում։ Գիւղացիք երկրագործութեամբ են պարապում, իսկ քաղաքներում ծաղկում է վաճառականութիւնը, որ ըստ մեծի մասին Հայոց ձեռքին է։ Լուսաւորութեան և կրթութեան գործում ևս հայերն յետ չեն մնում։ Ո՛չ միայն քաղաքներում ունինք հոյակապ վարժարանները, ուր հարիւրաւոր աշակերտներ և աշակերտուհիներ են սովորում, այլ և գիւղերում հետզհետէ աւելանում են դպրոցները և ծաղկում են Կայսեր թոյլտուութեամբ և ամենայն Հայոց Կաթուղիկոսի հովանաւորութեամբ։

Խօսելիս ես անթարթ աչքով նայում էի նահապետին. թւում էր, թէ ինչպէս ծարաւը ջուր ըմպելով զովացնում է իւր ծառաւը, այդպէս էլ նահապետն էր ընդունում իմ խօսքերը. կարծես թէ իմ հաղորդած մխիթարական տեղեկութիւնները որպէս սպեղանի հովացնում էին նրա սրտի խոցերը։ Ալիշանը տեղից բարձրանալով՝ առաջարկեց մեզ շրջել և դիտել վանքի բոլոր սենեակնե-

րը։ Մենք ուրախութեամբ հետևեցինք նրան։ Սրահի մէջ պատերից կախուած էին հոգևոր անձանց բաւական նկարներ։ Հարցրի, թէ ո՞վքեր են դրանք. նահապետը պատասխանեց, թէ նրանցն է, որոնք այս վանքում ուսումն աւարտելուց յետոյ հոգևոր կոչումն են ստացել։ Ես սկսեցի որոնել ծանօթ դէմքեր, այն հոգևորականների պատկերները,—որոնք կաթոլիկութիւնը թողնելով՝ Հայաստանեայց եկեղեցու ծոցը վերադարձան։ Դրանք էին Այվազեանը, Օրմանեան, Լուսինեան...բայց ոչ մէկի էլ պատկերը չը գտայ. և չուզեցի էլ հարցնել, թէ ինչու՞ նրանց պատկերները չկան։

Այդ ինքն ըստ ինքեան հասկանալի էր։

Վերին յարկում զետեղուած էր դպրոցը, մի քանի ընդարձակ և լուսաւոր սենեակների մէջ շրջուած էին նստարանները. մեծ դահլիճի մէջ կախուած էին մեծ և փոքր քարտէզներ. այդտեղ դրուած էր մի երկրագունդ՝ ահագին մեծութեամբ, ասլա հեռադիտակներ, խոշորացոյցեր և զանազան մեքենաներ։

Մատենադարանը մի ընդարձակ սենեակ է. պահարանների մէջ կարգով շարուած են տեսակ տեսակ գրքեր ամենափառաւոր կազմերով։ Աւելորդ է խօսել այդ մատենադարանի հարստութեան մասին։ Բաւական է յիշել, որ նոյն իսկ Եւրոպայում դա ճոխ մատենադարան է համարւում։ Մի այլ սենեակում՝ հնադարանում, պահարանների մէջ կար-

գով դասաւորուած էին հայկական դրամները՝ ոսկու, արծաթի և պղնձի։ Մի պահարանի մէջ դեռ ղուռած էր եգիպտական մումիայ, որ իտալական թագաւորներից չգիտեմ ո՞րը ընծայել է վանքին։ Այսպէս շրջելով և դիտելով վայր իջանք։

Նահապետը մեզ դէպի գոմը առաջնորդեց։ Մի ընդարձակ և շատ երկար գոմի մէջ մսուրների առջև կարգով շարուած՝ որոճում էին զանազան գոյների կովեր։ Իմ հարցին թէ քանի՞ կով է, նահապետը պատասխանեց.—վաթսուն։

—Եւ մի՞թէ այդքան կովերի կաթը միայն վանքի՞ համար է։

«Ո՛չ, պատասխանեց Հայր Ալիշանը. դրանց կաթից մենք իւղ, պանիր, սեր ենք պատրաստում և քաղաք ուղարկում, ծախում։

—Ասացէ՛ք խնդրեմ, տարեկան ո՞րքան եկամուտ ունի այս վանքը։

«Մօտաւորապէս եօթանասուն հազար ֆրանկ։

—Եւ մի՞թէ այդ գումարը բաւականութիւն է տալիս։

«Այո՛, որտեղ կանոնաւոր տնտեսութիւն և խնայողութիւն կայ, այդ գումարը շատ բաւական է։

Համոզուելով որ ճշմարիտ է այդ նկատողութիւնը, մտածում էի ինքս ինձ.—չիրաւի խելացի տնտեսութիւնն և խնայողութիւնը անհատական և ընտանեկան կեանքի համար հաստատութեան սիւներ են։

Եօթանասուն հազար ֆրանկով կառավարուում է մի վանք՝ մի մեծ միաբանութեամբ, ո՛ր ունի սեպհական գպրոց, մատենադարան, հնադարան, տպարան, որ Ազգին Ալիշանի պէս որդիք է տալիս. որ Ազգային պատմութեան, գրականութեան և լեզուի վերաբերեալ տարէնը մի քանի հատոր գրքեր է լոյս ընծայում, որ «Բազմավէպ» անունով ամսագիրը է հրատարակում.—բայց մեր Աստուածապահ Բագու քաղաքում մարդիկ կան, որոնց համար տարէնը եօթանասուն հազար ֆրանկը բաւական չէ. «որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ»։

Այդին, ուր մենք գբօսնում էինք, ընդարձակ տեղ էր բռնում. ճեմելով մենք մի տեղ հասանք, ուր աջ և ձախ կողմերից խաղողի որթերը բարձրանալով՝ վերևում, վանդակաձև հիւսած տախտակների վրայով միանում էին միմեանց և մի գեղեցիկ պատկեր կազմում։ Վանդակների արանքից կախ ընկած թէ և դեռ խակ՝ ողկոյզները քիչ գեղեցկութիւն չէին տալիս այդ պատկերին։ Այգում կային նոյնպէս տանձենի, խնձորենի, կեռասի և ուրիշ տեսակ ծառեր, որոնց արանքով ճեմելով՝ մօտեցանք վանքի սեղանատունը։ Նահապետը ցանկացաւ մեզ մի մի բաժակ սուրճով հիւրասիրել։ Գոհութեամբ ընդունեցինք այդ առաջարկը։ Ապա հրաւիրեց Վենետկի Մխիթարեանց պատրաստած, լաւ ևս է ասել յօրինած ոգելից օշարակը խմելու։ Հնազանդելով Հայոց նահապետի

և այդ առաջարկին, ես բարձրացրի բաժակս և խըմեցի ամբողջ միաբանութեան և առանձնապէս Հայկեան բանաստեղծների և գիտնականների նահապետի կենացը՝ ցանկալով նրան ուրախութեամբ լի երկար տարիներ։

Հայր Ալիշանի հետ երկար խօսեցինք և այն՝ զանազան առարկաների և խնդիրների մասին։ Ի միջի այլոց նա դիմեց ինձ հետևեալ հարցով։

«Պարոն Յակոբ, այս տարի մայիս ամսում կատարուեցաւ իմ յիսնամեայ յօբելեանը. այդ առթիւ ես զանազան քաղաքներից և աւաններից շնորհաւորական հեռագիրներ ստացայ և ամենին էլ ըստ պատշաճի պատասխանեցի։ Բայց միայն ձեր Բագուայ բժիշկներին, որոնք նոյնպէս շնորհաւորել էին, դեռ չեմ պատասխանել, և դեռ այժմ էլ չըգիտեմ, թէ ինչ բովանդակութեամբ պատասխան ուղարկեմ։ Ասացէք խնդրեմ, ինչ խորհուրդ կտաք, ինչ գրեմ»։

Յիշելով Աւետարանի խօսքը թէ Ինձ պիտոյ է ի քէն մկրտիլ, և դու առնես գաս, աւելացրի ծիծաղելով. «Հայր, ես պէտք է ասեմ, թէ նահապետը ինչ պէտք է գրի՝ նա ինքը լաւ գիտէ իւր գրելիքը»։

«Այո՛ գիտեմ ի հարկէ. բայց ինչ վնաս, եթէ ձեր կարծիքն էլ իմանամ։

—Շատ բարի, ասացի ես. միայն խնդրեմ իրաւունք և մի փոքր ժամանակ տաք, որ մի պատմուճիւն անեմ։

«Հրամայեցէք, ուրախութեամբ և ուշադրութեամբ կլսեմ Ձեզ։

—Հայր, լսել էք արդեօք, որ մեր Հայաստանեայց կողմերում խնջոյքի ժամանակ տանտէրը բոլոր հիւրերի ցանկութեամբ և համաձայնութեամբ բազմականներից մէկին սեղանի կառավարիչ, կամ ինչպէս սովորութիւն է ասել թամադա է ընտրում։ Դրա պարտաւորութիւնն է բոլորի կենացն առաջարկել և աշխատել, որ խնջոյքը ամեն կերպ ուրախ և զուարթ անցնի։

«Լսել եմ, պարոն Յակոբ, շարունակեցէք։

—Ահա այդ տեսակ մի բազմամարդ ճաշկերոյթի ժամանակ մի սրախօս Թիֆլիսցի թամադա է ընտրուում։

Դա սրամիտ զուարճախօսութիւններով և սրախօսութիւններով խմում և խմեցնում է ամենքի կենացը. թողնում է միայն Տէր Հօրը, չգիտեմ մոռացմամբ, թէ դիտմամբ։ Թամադայի կողքին նստած է լինում Անդրէաս անունով մի պարոն. դա յիշեցնում է, որ մոռացուած է քահանայի կենացը։ Թամադան իսկոյն տեղից վեր է կենում, բաժակը գինով լցնում, հրամայում է ամենքին էլ լցնել և ապա սկսում է հետևեալ ճառը.— Տէր Հայր, ներեցէք խնդրեմ, որ ձեր կենաց համար բաժակ չեմ առաջարկել։ Պարոն Անդրէասը,

ոմ գիտէ, գուցէ և բոլոր սեղանակիցները կարծում է, թէ ես մոռացմամբ չեմ առաջարկել: Բայց ես գիտութեամբ եմ լռութեան տուել, որովհետև չգիտէի, թէ ինչ խօսեմ, ինչ ցանկամ Ձեզ: Եթէ ասեմ՝ Աստուած գործիդ յաջողութիւն տայ, այն ժամանակ պէտք է մենք մեռնենք, որ դու փող աշխատես: Եթէ ասենք, Տէր Հայր, Աստուած կարգդ աւելացնի, այն ժամանակ էլ պէտք է Տիրուհին մեռնի, որ դու վարդապետ դառնաս: Ուրեմն Ձեր կենացը խմելով, ցանկանանք, որ ինչպէս այժմ կաս, այդպէս էլ մնաս, Աստուած ոչ աւելացնի, ոչ էլ պակասցնի»:

«Հանգիստականները ծիծաղում են և նոյնը ցանկանում քահանային: Այժմ, Հայր, Ձեր հարցին գալով, խորհուրդ կտամ, որ Բագուայ բժիշկներին ինչ էլ գրելու լինէք, ի նկատի ունենաք սրամիտ թամադայի խօսքը, որովհետև բժիշկների գործի յաջողութիւնը աւելի ևս ժողովրդի դժբաղդութիւնից է ծագում:

Ընդհանրապէս հայր Ալիշանը ինձ վրայ շատ քաղցր ազդեցութիւն թողեց: Մի առանձին ուշադրութեան արժանի է նրա վերին աստիճանի հետաքրքիր բնաւորութիւնը, զարմանալի վարպետութեամբ նա ձգտում է իւր խօսակցի ունեցած տեղեկութիւնները ձեռք բերել, և, եթէ արժանի բան կայ, սովորել:

—Դուք եղե՞լ էք Հայաստանում, հարցրի ես:

«Ո՛չ:

—Հապա ինչպէս էք կարողացել Ձեր «Յուշիկ» ներում և տեղագիրներում այնքան մանրամասնութեամբ և ճշտութեամբ նկարագրել Հայրենի սովորութիւնները և վայրերը:

«Անդադար սովորելով, կարդալով զանազան գրքեր, լրագիրներ, և ամենքից էլ օգտուելով:

Ես հիացած՝ մտածում էի. այս մարդը այս հեռաւոր վանքում նստած՝ գիտէ Հայաստան աշխարհի ամեն մի քարն ու թուփը: Ո՜հ, ինչքե՜ր չի կարող անել աշխատասիրութիւնը:

—Հայր, ուրեմն մի որ էլ մեր այս օրուայ խօսակցութիւնը պէտք է Ձեր գրութեան նիւթ դառնայ, ասացի ես ծիծաղելով:

«Չկարծեմ, պատասխանեց նա, արդէն ծերացել եմ, և այլ ևս նախկին աշխոյժը չկայ:

Մնաք բարով ասելով Հայր Ալիշանին և ս. Ղազարու վանքին, մենք միևնոյն գոնդոլով վերադարձանք Վենետիկ: Արդէն երեկոյ էր, երբ մենք հիւրանոց հասանք: Բագուայ մեր նաւթագործարանի և նաւթահանքի նկարները, որ ունէի ինձ մօտ, մի կարճ նամակի հետ ծրարեցի և կոմիսիոներին յանձնեցի, որ միւս օրը վանքը տանի և Հայր Ալիշանին տայ, ինչպէս խոստացել էի:

Քնեցինք. և ես երազ տեսայ: Փոքրիկ տղայ եմ, հայրս ինձ Վենետիկ վանքն է ուղարկել ու-

սում առնելու։ Սրբազան պատմութեան դաս է։ Ուսուցիչը դիմում է ինձ հետևեալ հարցով.

«Յակովը, Քրիստոսի աշակերտների մէջ մեծը ո՞րն է։

—Առաքեալների ժամանակ մօրից էլ չէի ծնուած, պատասխանեցի. ինչպէս կարող եմ իմանալ, թէ նրանցից ո՞րն էր մեծ։

«Յիմա՛ր. գոռաց նա, ես հարցնում եմ, թէ դրանցից ո՞րն էր աւելի պատուելի։

—Դրանք ամենքն էլ հաւասարապէս սիրելի էին Քրիստոսին, ուստի և մեր կողմից էլ հաւասարապէս պատուելի են, պատասխանեցի ես կարմրելով։

«Ո՛չ, պատասխանեց վարժապետը. դրանցից մեծը Պետրոսն է. նա ամենի գլուխն է։

Այստեղ սկսուեց մի հակաճառութիւն, ես ասում եմ՝ ո՛չ, վարժապետս ասում է՝ այո՛։ Այսպէս երկար հակաճառեցինք, մինչև վարժապետս տառնասրտութիւնը կորցրեց և յանկարծ տողաշարն առնելով ձեռքիս զարկեց։ Ես չկարողացայ տանել ուսուցչի այդ վայրենի վարմունքը. վերցրի մի նրբակազմ հաստ գիրք և այնպէս ուժով զարկեցի նրա գլխին, որ գլուխը ճղուեց և արիւն դուրս վազեց։ Այդ միջոցին վեր թռայ և շատ ուրախացայ, որ տեսածս երազ էր։

VIII



Ս. Մ.

Արևն արդէն բաւական բարձրացել էր։ Մի մի բաժակ սուրճ խմեցինք և գընացինք Ս. Մարկոսի տաճարը տեսնելու։ Այս մեծ և հոյակապ եկեղեցին կանգնած է համանուն հրապարակի մի անկիւնում։ Դրա դիմացը բարձրա-

նում է Դօժերի պալատը։ Ս. Մարկոսի հրապարակում անթիւ, անհամար աղաւնիք տեսայ. մանր երեխաներն ափսէների և պնակների մէջ աղաւնեաց համար կերակուր էին ծախում՝ ցորեան, գարի, բըրինձ, կորեկ։ Իսկ անցուդարձ անողները գնում էին և աղաւնիների առջևն ածում։ Դրանք այնքան ընտելացած էին, որ համարձակութեամբ մօտենում էին անցորդներին, նստում նրանց ուսերի կամ գլխների վրայ։ Զկամենալով յետ մնալ այդ դաբաւոր սովորութիւնից, մենք էլ մեր լուման ձրգեցինք գանձանակի մէջ և կերակրեցինք աղաւնիներին։

Ս. Մարկոսի տաճարում կանանց և տղամարդկանց ահագին բազմութիւն կայ. ամենքը ծնկաչոք աղօթում էին։ Մենք էլ աղօթեցինք։ Եւ ապա սկսեցինք դիտել տաճարի շինուածքը։ Հինաւուրց տաճարը մի հիանալի և փառաւոր շէնք է։ Դէպի խորանը տանող մետաղեայ դռները մոզայիկի մի հրաշակերտ են ներկայացնում։ Տաճարի պատերը շինուած են թուխ մարմարիօնից։ Զարդերի և ճոխութեան մասին այլ ևս չեմ խօսում. դրանք վեր են ամեն գովեստից։ Տաճարի կամարներն այնքան նուրբ են, որ մարդ զարմանում է, թէ այդ ահագին գմբէթի և կամուղիկէն ինչպէս են այդքան դարերի ընթացքում իրանց հաստատութիւնը պահել։

Դօժերի պալատը մտնելու համար նախապէս

տոմսակ պիտի վերցնէինք։ Մօտեցանք կասսային, վճարեցինք ինչ որ պէտք էր մեզ և մեր չիչերոնի համար և սրբատաշ ու մաքուր սանդուղներով վերի յարկը բարձրացանք։ Սանդուղներն այնքան էին կոկուած, որ ամեն քայլափոխում վայր գլորուելու վտանգի մէջ էինք։ Վերին յարկում մեզ իւր ծառայութիւնն առաջարկեց մի այլ չիչերոն, որ մշտապէս պալատումն է լինում։ Դրա առաջնորդութեամբ ահա մենք պտտեցինք ամբողջ պալատը։ Մենք տեսանք Միքել Անժելոյի, Ռաֆայելի և այլ համաշխարհային հանճարների նկարները, որոնցով զարդարուած էին դահլիճների ոչ միայն պատերը, այլ և առաստաղները։ Բոլոր պատկերները ամփոփուած են ոսկեզօծ շրջանակների մէջ։ Նայում ես այդ պատկերներին և հիանում։ Ստուծոյ ստեղծագործութեան մօտ ես տեսնում եմ մի այլ ստեղծագործութիւն, որ դարձեալ Աստուածային է շնորհիւ մարդկային հոգու մէջ պահուած Աստուածային բնութեան, շնորհիւ այն ստեղծագործող կրակի, որ Պրօմոթևսը երկնքից ցած բերաւ մարդկանց համար։ Տեսանք մի ընդարձակ դահլիճ, որ շինուած և սարքուած էր թատրոնի ձևով։ Բեմի վրայ դրուած էր մի մեծ սեղան և նրա երեք կողմից տասն երեք բազկաթոռ։ Ներքևում շարուած էին աթոռներ, և այնպէս, ինչպէս առ հասարակ թատրոններումն են լինում շարուած։

Իմ հարցին մեր առաջնորդը պատասխանեց, թէ դա հնում արդարութեան դահլիճ էր կոչւում։ «Այդ բազկաթոռների վրայ, շարունակեց նա, մի ժամանակ նստում էին կաթոլիկ կղերականները և եզուիտները և դատում էին նրանց, որոնք մեղադրւում էին հոգևոր-կրօնական խնդիրների մէջ։ Դրանց դատաստանին կայսրներն անգամ իրաւունք չունէին խառնուելու։ Դեռ գահ չբարձրացած՝ նրբանք պարտագիր էին տալիս կրօնական առեներին, որ չեն խառնուիլ նրա գործերում։ Դատողները մեղադրեալների վերաբերեալ կայացած վճիռը յայտնում էին ներկայութեամբ բոլոր հանդիսականների, որոնք նստած էին լինում այդ աթոռների վրայ։ Անմեղ զոհերին առեանի առջևն էին քարշում ու եզուիտ սպասաւորներից մէկը թւում էր նրա յանցանքները՝ այս ինչ ժամանակ սրբազան պապի մասին վատ է խօսել, եկեղեցուց բանադրուած այս ինչ մարդուն իւր մօտ է ընդունել և այլն և այլն, ընդհանրապէս հնարովի, շինծու բաներ և կամ չարամիտ մարդկանց սարքած զրպարտութիւններ։ Եթէ մեղադրեալը իւր վրայ բարդուած յանցանքները յանձն չէր առնում, անողոք դատաւորները հրամայում էին բանտը տանել։ Այդտեղ նրան չարչարում են անասելի չարչարանքներով. կախ են տալիս մի ոտը կամ մի ձեռը գամելով առաստաղից կամ պատից, քերթում են կաշին, դժոխային այնպիսի տանջանքներ են տա-

լիս, որ մեղադրեալն ստիպւում է իւր լեզուով խոստովանել իւր չարած յանցանքը, որպէս զի մահուան դատապարտուելով և միանգամից մեռնելով՝ ազատուի այդ սոսկալի դրութիւնից։ Դատաւորները, որ դրանն էին սպասում, հիմնուելով մեղադրեալի խոստովանութեան վրայ, հանդիսականների ներկայութեամբ վճռում էին, թէ այս ինչ օրը պէտք է այրել նրան։ Նշանակուած օրը ս. Հաղորդութիւնից յետոյ նրան որոշեալ տեղն էին տանում, խարոյկի վրայ բարձրացնում և այրում։ Խարոյկի մօտ նուագածուների խումբը նուագում էր, թմբուկները զարնում, որպէս զի զոհի աղիողորմ ձայները գիտող բազմութեան կողմից անլսելի մնան։ Այդ անողորմների ձեռքից ազատուելու հնար չկար»։

Այդպէս վերջացրեց մեր առաջնորդն իւր խօսքը, ապա դիմելով ինձ՝ հարցրեց

«Ինքվիզիցիայի վերաբերմամբ արդեօք կարդացել էք որ և է գիրք»։

—Կարդացել եմ։

«Ուրեմն իմ կողմից աւելորդ է պատմել, թէ ինչո՞ւ էին այդքան տանջում և թէ գլխաւորապէս ո՞ր կարգի մարդկանց էին որսում։

—Գիտեմ, ասացի ես, երբեմն որսում էին հարուստ մարդկանց, մահուան դատապարտում, որպէս զի յափշտակեն նրանց հարստութիւնը։ Բայց ընդհանրապէս ազատ մտածողներին։

«Այդպէս է, եթէ կամենաք, ես ցոյց կտամ

այն բանտերը, ուր տանջում էին ինքվիզիցիայի զոհերին։

Թէև չիչերոնիս պատմութիւնը արդէն բաւական ծանր տպաւորութիւն էր թողել մեզ վրայ, բայց և այնպէս մենք ցանկացանք տեսնել բանտը։ Մեզ տարաւ մի առանձին սենեակ. այստեղ բացւում էր պատուհանի մօտից մի սանդուղ, որ տանում էր դէպ ստորերկրեայ անդունդ։ Սանդուղը լուսաւորւում էր մի փոքրիկ կանթեղի աղօտ լոյսով։ Միմեանց ձեռքից բռնած՝ խաւարի մէջ մենք ցած էինք իջնում, առանց իմանալու, թէ ուր ենք գտնւում։ Մենք հասանք մի հաշտ (կորիդօր)։ Առաստաղից կախուած կանթեղը լուսաւորում էր այդ հաշտը։ Շարքով շինուած էին քարեայ խցեր, որոնց երկաթեայ ծանր դռները և պատուհանի պաշտօն կատարող ծակերը բացւում էին հաշտի վրայ։

—Ահա բանտը, ասաց մեր առաջնորդը՝ ցոյց տալով վերոյիշեալ խցերը։ Այդտեղ անասելի տանջանքներ են կրել հազարաւոր անմեղ մարդիկ, ամեն օր այդ պատուհանաձև ծակերից կերակուր և ջուր ստանալով, որպէս զի սովամահ չլինեն, այլ շարունակեն տանջուիլ ի փառս ինքվիզիցիայի։

Բանտի մնացեալ տեսքը միայն սարսափ էր ազդում։ Այնտեղ յատակի վրայ ոչինչ չկար, ոչ նոյն իսկ մի աթոռ։ Ողորմելիքն ամբողջ տարին խոնաւ հողի և քարի վրայ են անցրել իրանց օրերը։


Բայց ահա բանտի զարդարանքը. ահա պատից և առաստաղից կախուած այն դժոխային գործիքները, որոնցով ինքվիզիցիայի սպասաւորները տանջում էին իրանց զոհերին։

Մեր առաջնորդը պատմում է՝ թէ ինչպէս էին տանջում։ Լսելով այդ պատմութիւնը, տեսնելով այդ սոսկալի սղոցները, ունելիքները և այլն, մի սարսուռ պատեց ինձ։ Յուզուած՝ ես վարձատրեցի մեր առաջնորդին և դուրս ելանք այդ անիծեալ տեղից։

Գալիս էինք Հիւրանոց։ Ինձ պաշարել էի ծանր մտքեր։ Մտածում էի, թէ ինչ սոսկալի չարագործութիւններ են կատարուել աշխարհի երեսին յանուն Աստուծոյ։ Եւ ովքեր են այդ չարագործութեանց հեղինակները։—Նրանք, որոնք ի պաշտօնէ կոչուած են մարդկանց համար միջնորդ լինել Աստուծոյ մօտ, բայց ոչ միայն չեն միջնորդում, այլ իրանք են չարութեամբ դատում յանուն Ամենաբարի Աստուծոյ, այնպիսի չարութեամբ, որից դևերն էլ կսարսափեն։ Դրանք հովիւ էին կարգուած բանաւոր հօտին Քրիստոսանդ հեզութիւնն և սիրոյ վարդապետութիւնն ուսուցանելու. բայց գայլ դարձան և հօտը պատառեցին։ Բայց դեռ պարծենում էին իրանց արարքներով. թէ ահա մենք, որպէս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներ, որպէս առաքելոց իսկական փոխանորդներ սրբութեամբ կատարում ենք մեր

պարտքը և Աստուծոյ պատուիրանները. ուստի և մի օր պէտք է կանգնենք Փրկչի առաջ և ասենք. «Ահա մենք և մեր ոչխարները, գրանք մոլորուած էին, բայց մենք ուղիղ ճանապարհի բերինք, երկրային պատիժներով պատժեցինք գրանց. այժմ վարձատրիր գրանց. իսկ մեզ էլ Ձո աջակողմեան դասուն արժանացրու»:

Ո՛հ, անիծեալ մարդիկ, անիծեալ ժամանակներ:





IX



Իւս օրն առաւօտեան արևն արդէն բաւական բարձրացել էր, երբ մենք մնաք բարև ասելով Վենետկին և ս. Ղազարու վանքին, մեկնեցանք դէպի Միլան: Միլանը գեղեցիկ քաղաք է, առևտրական յայտնի կենտրոն, նշանաւոր իւր գործարաններով, ուր պատրաստում են բամբակեայ և բրդեայ գործուածքներ: Բայց մենք Միլանում կանգ չառինք, այլ ուղղակի անցանք, կտրեցինք Ալպեներայի լեռները, Բերն և Ժընև քաղաքները և մտանք Ֆրանսիական Լիոն քաղաքը:

Հիացումն և զարմացումն տիրում է ձեզ, երբ շոգեկառքը շաչելով և շառաչելով՝ թռչում է այդ բլրակների վրայով: Իսկ աչքիդ առջև շուտ շուտ փոխւում են տեսարանները: Ահա բլուրներից, երբեմն և ահաւոր լեռներից ցած են գլորւում ա-

ռուներ, վտակներ և թափւում են Ռէյնի ծոցը։ Տեսնում էք անտառներ, խոտաւէտ ձորակներ, կանաչազարդ հովիտներ։ Անսովոր է մանաւանդ պարտէզների և մարգագետինների տեսքը։ Իսկ ինչ ասեմ քարափներին և քերթերին, որոնց բարձրութիւնից գահավիժուելով լեռնի վայր հոսող գետը —փրփուր և փոշի է դառնում...

Լիօնում գիշերեցինք, իսկ հետևեալ օրը կէս օրից յետոյ արդէն Վիշի քաղաքումն էինք։ Կայարանի առջև ամեն մի հիւրանոցի կողմից ուղարկուած կառքեր էին կանգնած։ Մենք վճռեցինք երթալ Բելկուր հիւրանոցը, որի տէրն էլ մեզ այնտեղ առաջնորդեց։

Աշխարհիս ամենանշանաւոր ջրաբուժարաններից մէկն է Վիշին։ Իսկ Փրանսիայում դրանից նշանաւորը չ'կայ։ Ամեն տարի 25,000 ից աւելի հիւանդներ են գալիս այստեղ բժշկուելու։ Լոգարանների դահլիճները, այգիներն և անտառը «սեզոնի» ժամանակ մշտապէս լիքն են զանազան ազգութեանց ներկայացուցիչներից կազմուած բարձր դասակարգի հասարակութեամբ, որ մշտապէս փոփոխւում է։ Հրաշալի աղբիւրների շուրջը առաւօտից մինչև իրիկուն խռնուած է խուռն բազմութիւն. մէկի մարսողութիւնն է խանգարուած, միւսը փայծաղի և երիկամունքի հիւանդութիւն ունի, երրորդը քարի և շաքարի ախտ, չորրորդը սակաւարիւն է, հինգերորդը վատուժ է և այլն։ Աղբիւր-

ների մօտ կանգնած օրիորդները ցանկացողներին բաժակով ջուր են տալիս։ Վիշին բազմատեսակ ջրեր ունի, կան տաք ջրեր, ցուրտ ջրեր, ածխաթթուային աղի և սօդային ջրեր։

Քսան և եօթն օր այդ տեղ մնալով և ինձ բաւականին կազդուրուած համարելով ճանապարհուեցինք դէպի Փարիզ՝ մնաք բարեաւ ասելով մօնսիօ Դիւմային, նորա կնոջը և օրիորդին՝ մադմուազէլ Կլարայ Դիւմային։

Փարիզում իջանք «Գրանդ օտել» հիւրանոցում, որ տեղւոյն լաւագոյն հիւրանոցներից մէկն է։ Գրչիս ուժիցը վեր է գովել Փարիզն և նրա արժանաւորութիւնները։ Նրա գովքն արել են շատ նշանաւոր բանաստեղծներ. նրան նկարագրել են եւրևելի ճանապարհորդները։ Ֆրանսիացիք նրան անուանում են աշխարհի մայրաքաղաք։

Օտարականի ուշադրութիւնն ամենից առաջ գրաւում են Փարիզի հոյակապ շինութիւնները։ Այդտեղ կան ճարտարապետութեան հրաշալի կոթողներ՝ սկսած հռովմէական տիրապետութեան օրերից։ Մեզ գրաւեց աւելի Էյֆելի աշտարակը, որ մեր դարում կառուցուած նշանաւորագոյն շինութիւններից մէկն է։ Մենք բարձրացանք մինչև երրորդ յարկը։ Աշտարակն իւրաքանչիւր յարկում իւր շուրջն ունի բաւականին ընդարձակ սրահ։ Սրահների շուրջը պանդոկներ և խանութներ կան։ Այդտեղ մի օդապարիկ գնեցի, նրանից մի նամակ

կցեցի և բաց թողեցի։ Նամակի հասցէն գրել էի։ Խնդրեմ նամակս բերել ինձ մօտ՝ Գրան'դ Օտել № 27։ Հետևեալ օրը նամակս ինձ հասցրին։ Դիշերը նամակը օդապարիկի հետ ընկել էր մի հեռաւոր գիւղ. այնտեղ վերցրել, փոստան էին ձգել, որև բերել և ինձ էր հասցրել։

Հետևեալ օրը գնացինք Փարիզից մի ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Կեղեստինեան կոչուող յայտնի վանքը։ Այդ տեղ էին թաղուած ֆրանսիական թագաւորները։ Այդտեղ էր թաղուած և մեր Լևոն վեցերորդը, Ռուբինեան վերջին թագաւորը։ Դա միայնակ յուսահատ կռիւ մղելով մահմեդական ցեղերի դէմ, որոնք մանաւանդ զայրացել էին հայերի վրայ, տեսնելով՝ թէ ինչպէս դրանք օգնում և համակրում են եւրոպացիներին, — ընկճուեց։ Յանուն քրիստոնէութեան Եւրոպայից օգնութիւն գտնելու նպատակով, դիմեց արքունիքներին։ Բայց մեծամեծ խոստումներից զատ ոչինչ չստանալով՝ յուսահատութեան մէջ մեռաւ Փարիզում 1393 թ. և թաղուեցաւ այստեղ։

Ներս մտնելուց առաջ սրահում մի գրքոյկ գնեցի, ուր համարով նշանակուած էին բոլոր թագաւորների անունները։ Առանձին համարի տակ նշանակուած էր և մեր Լևոնի անունը։ Դրա մասին ֆրանսերէն լեզուով հետևեալն էր գրուած. «1393 թ. Փարիզում ի Տէր հանգեաւ Հայոց թագաւոր Լևոնը և թաղուեցաւ «Սանտինի» ի Տէր

հանգեալ թագաւորների շարքում արքայավայել փառքով և շքեղութեամբ»։ Ապա աւելացրած են հետևեալ բառերը.—«Ասում են թէ մեր Տէր Յիսուս Քրիստոսն անց է կացել դրանց կողմերովը»։

Մտանք տաճարը. ահագին շինութիւն է, որի մէջ համարաշէն բազմաթիւ բաժանմունքներ կան՝ սենեակների ձևով։ Դրանցից իւրաքանչիւրի մէջ մի դամբարան կայ, ուր հանգչում են թագաւորների ոսկերքը։ Վանդակների առջևից դիտելով բոլոր դամբարանները, մենք մօտեցանք այն վանդակին, որի ետևումն էր մեր Լևոնի գերեզմանը։ Մի քանի արծաթ տալով վերակացուին՝ մենք ներս մտնելու թոյլտուութիւն ստացանք։ Վանդակի դռնակը բացուեց և մենք սրահակը մտանք։ (Ո՛հ, փո՛ղ, ինչեր չես անիլ)։ Զգացուած մօտեցայ գերեզմանին և «Հայր մեր» ասացի։ Ապա սկսեցի զննել մարմարեայ սպիտակ գերեզմանաքարը, որ յատակից բարձր էր մօտաւորապէս $^1/_2$ արշին։ Տապանագիրն այնպէս էր, ինչպէս յիշատակեցի վերևում, մեր ձեռքի գրքոյկից քաղելով։

Երեկոյացել էր։ Էլէքտրական կառք նստեցինք և Փարիզ վերադարձանք։ Հազիւ մի բաժակ գարեջուր էի խմել, որ պանդոկապետը բաղխեց մեր դուռը, ներս մտնելու թոյլտուութիւն խնդրելով։ Ներս հրաւիրեցի. խիստ քաղաքավարութեամբ ներս մտաւ և մեծ խոնարհութեամբ ասաց.

«Պարոնայք, արդեօք չէ՞ք կամենալ թատրոն

գնալ. այս գիշեր ներկայացնում են Ֆրանսիային սիրելի «Ժան Դ'արկի» պիէսը:

Մեր կողմերում Հայոց և Ռուսաց բեմերի վրայ ես շատ անգամ էի տեսել «Օրլէանի կոյսը» և միշտ էլ ինձ վրայ լաւ տպաւորութիւն էր թողել. ես ցանկացայ ֆրանսիական բեմի վրայ էս տեսնել, ուստի պատասխանեցի.

—Պարո՛ն, ես մեծ ուրախութեամբ կգնամ այդ ներկայացումը տեսնելու, նեղութիւն քաշեցէք հեռախօսով առաջին կարգի երեք տոմսակ պահանջելու. աւելի լաւ կլինէր, եթէ մի օթեակի տոմսակ պահանջէիք: Ես շատ սիրում եմ այդ պիեսը և ցանկանում եմ տեսնել, թէ ինչպէս են խաղում Ֆրանսիայում:

Պանդոկապետի աչքին արտասուքի կաթիլներ երևացին: Օրլէանի կոյսի մասին ինձնից այնքան համակրական խօսքեր լսելով՝ նա զարմացել էր: Եւ դիմեց ինձ և հարցրեց.

«Երևի դո՞ւք էլ ֆրանսիացի էք, իսկ եթէ ոչ՝ ապա ուրեմն դուք շատ էք սիրում Ֆրանսիան:

—Ես ֆրանսիացի չեմ, պատասխանեցի. միայն սիրում եմ այն ազգը, որ պատուում է իւր հերոսներին և սիրում է իւր անցեալը:

Երեկոյեան թատրոնում էինք: Դահլիճը փառաւորապէս լուսաւորուած էր էլէքտրական լուսաւորութեամբ: Օթեակներն և առաստաղը զարդարուած էին ոսկեզօծ պատկերներով: Զանգը հնչեց. ամենքն ուշադրութեամբ իրանց տեղը բռնեցին: Ծիրանի բեհեզեայ վարագոյրը նազելով բարձրացաւ-բացուեցաւ բեմը: Կոյսը լի համեստութեամբ, ծնկաչոք ընկած՝ ձեռները տարածած աղօթում է և երկնքից օգնութիւն է խնդրում ֆրանսիայի համար, որի քաղաքները մխմեանց եռևից թշնամու ձեռքն են ընկնում: Նա դիմում է Աստուածամօրը և խնդրում, որ «ազատէ Ֆրանսիան օտարի լծից և չզրկէ նրան բնիկ Արքայից»: Եւ ահա մթութիւնը սկսուեց փարատուիլ: Երկինքը լուսաւորուեց մի աննման լուսաւորութեամբ. (այդ բոլորը բեմի վրայ կատարւում էր գեղարուեստական ամենաբարձր կատարելութեամբ): Մի լուսեղէն հրեշտակ լուսաճաճանչ ճառագայթներով թևերը ճախրելով իջաւ երկնքից և կանգնեց Ժան Դ'արկի մօտ: Թևերը հովանու պէս տարածեց նրա վրայ, և խօսում էր Աստուածայինն խօսքերով և խրախուսում, համոզում էր կոյսին, որ մարմինը պատի Ժանր զրահով, պողպատով ծածկի քնքոյշ կուրծքը, գրօշակը ձեռքն առնի, ֆրանսիական զօրքի գլուխն անցնի և գետին տապալէ հպարտ թշնամուն... Ու յետոյ «լուսոյ կամարով պատած ոսկիափայլ ամպերի վրայ բազմած բարձրացաւ և կամաց կամաց աչքից ծածկուելով երանութեան լոյս աշխարհը մտաւ»: Պիեսը մանրամասն նկարագրելը չէ իմ նպատակը. որովհետև նա պէտք է ամենքին լաւ ծանօթ լինի:

Առաւօտեան ուր ժամին Փարիզից դուրս գալով՝ երկու ու կէս ժամին Դուվր Լամանշ նեղուցի ափին էինք։ Շոգենաւն այդ տեղից 2¹/₂ ժամում մեզ Անգլիա հասցրեց։ Իսկ երեկոյեան 8 ժամին կառքով անցնելով Թեմզայ գետը ճաշում էինք Լօնդօնի հիւրանոցներից մէկում։

Մառախուղով պատած է Լօնդօնը, բայց դա բնական մառախուղ չէ, այլ անթիւ անհամար գործարաններից բարձրացող ծուխը, որ ծածկում է երկինքն ու արևը։ Լաւ է, որ անձրևներն այդ տեղ այդքան առատ են. որոնք մաքրում են օդը և ճոխացնում բուսականութիւնը։ Լօնդօնի կանաչը ոչ մի տեղ չկայ. ծառերի տերևները կարծես հենց տեսածդ օրն են բացուել, այնքան մուգ են։

Քաղաքի միջով անցնում է Թայմզ գետը, որի վրայ տեսնում էք շոգենաւների ահագին բազմութիւն։ Տներն ահագին մեծութիւն ունին, իրանց բարձրութեամբը մանաւանդ անսովոր աչքի վրայ օտարոտի տպաւորութիւն են թողնում։ Փողոցներն և խանութները լի են մարդկանց բազմութեամբ։ Ամենքն էլ շտապում են մի այնպիսի հպարտութեամբ, որ Անգլիայից դուրս ամեն տեղ յայտնի է «Ալբիոնի հպարտութիւն» անունով։ Նայելով այդ խառնիճաղանճ ամբոխին, ինձ թուաց, թէ Բաբելոնումն եմ, ուր մարդիկ մի հպարտ խոհուրդ են յղացել մի աշտարակ բարձրացնելու և

Աստուծոյ դէմ կռուելու։ Մարդիկ այնքան զբաղուած են երևում, որ փողոցում չես կարող մէկին մի բան հարցնել։ Եթէ հարցնես էլ՝ պատասխան չես ստանալ։ Ամենքը գործի են, պարապ մարդ չկայ։

Եթէ խանութում մի բան էք գնել, պէտք է անպատճառ անգլիական դրամ վճարէք, ֆրանսիականը չի ընդունուում։ Քինոտ ազգ են, կոշտ բնաւորութեամբ, բոլորովին տարբեր ֆրանսիացիներից, բայց աշխատասէր են և տոկուն գործի մէջ, յամառութեան չափ տոկուն։

Գործարաններով լի է Լօնդօնը։ Դրանց գործուածքները՝ ըրդեայ թէ բամբակեայ, բոլոր երկրների շուկաներում առաջնակարգ տեղ են գրաւում, և աւելի բարձր գնով են վաճառուում, քան ուրիշ երկրների արտադրածները։ Մեքենագործութիւնը նոյնպէս զարգացած և բարձր կատարելութեան է հասցրած։ Մեր կողմերումն էլ լաւագոյն շոգեշարժ մեքենաները այս տեղից են ստանում։

Մի օր պատահմամբ մտանք յայտնի Էդիսոնի գործարանը։ Այդ տեղ զանազան մեքենաներ և ֆօնօգրաֆներ տեսանք։ Դրանց շարքում մի գեղեցիկ ապակեայ արկղիկի մէջ զետեղուած կար մի ֆօնօգրաֆ, որ պատրաստուած էր յատկապէս ի-

րև ընծայ Էդիսսօնից յայտնի ճանապարհորդ միստր Ստենլիին։

Ֆօնօգրաֆով խօսեցինք և միևնոյն խօսքերը մեր միևնոյն ձայնով և ելևէջներով յետ լսեցինք. ես կամեցայ ֆօնօգրաֆներից մէկն առնել և Բագու բերել։ Բայց նրանք ինձ չը ծախեցին, ասելով—եթէ մէկ ամիս կմնաք մեզ մօտ և կսովորէք ֆօնօգրաֆի հետ վարուելու ձևը, այն ժամանակ կարող ենք միայն ծախել։ Թէ չէ՝ դուք մի օրուայ մէջ չէք կարող դրա հետ ընտելանալ. ի վերջոյ ձեր փողը կկորչի և մեզ էլ անխիղճ մարդիկ կհամարէք»։

Մի քանի օր Լօնդօնում մնալուց յետոյ՝ յետ դարձանք նոյն ճանապարհով։ Փարիզը մի կողմ թողեցինք և Բելժիայի մայրաքաղաք Բրիւսելի վրայով գերմանական կեօլն քաղաքը մտանք։

Այս տեղ պէտք է մի քանի ժամ սպասէինք, մինչև վեննական գնացքը ճանապարհ կընկնէր։ Այդ ժամերը զուր չկորցնելու նպատակով մենք քաղաքը մտանք, շրջեցինք։ Առանձնապէս ցանկանում էի տեսնել—կեօլնի հռչակաւոր տաճարը։ Եւ գնացինք տեսնելու։ Սա աւելի մեծ է, քան Փարիզի Աստուածամայրը Նօտր-դամը, իմ կարծիքով նա էս աւելի գեղեցիկ է մանաւանդ դրսի կողմից։

Բայց ահա երկաթուղու կայարանից զանգակը

հնչում է։ Դա նշան է, թէ ճանապարհուելու ժամը հասել է։ Մենք հապճեպ կարողացանք մի բաժակ սուրճ խմել, շոգեկառքը մի քանի անգամ սուլելով անիւները գլորեց և սլացաւ, մեզ դէպի Վեննա տարաւ։


Երկու օրից յետոյ այդ տեղ էինք, Աւստրօ-Հունգարիայի մայրաքաղաքում։

Մեր Աղեքսանդրը տակաւին թոյլ էր։ Հանքային ջրերը դեռ բոլորովին չէին կազդուրել նրան։ Բժիշկների խորհրդով նրան թողեցինք Կալտենլէյտբօգեն՝ Վեննայի մօտ՝ սառն ջրով բժշկուելու։ Իսկ ես և Նիկողայոսը ճանապարհորդեցինք Վարշաւա, և ապա Պետերբուրգի վրայով Մոսկուա, Վլադիկավկազ, Թիֆլիզ և Բագու։



ՆԱՄԱԿՆԵՐ

ԱՌ ՍԱՄՈՒԷԼ



ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆ

Աբասլուհան 25-ն յունիսի 1897 ամի

Սիրելի՛ Սահակեղ

Անցեալ օրը ճաշելուց և մի փոքր հանգստանալուց յետոյ անտառակի կողմերն էի գնացել զբօսնելու։ Աբասթումանի ամարանոցներում բնակուողները ամենայն օր այդտեղ են ժողովւում մաքուր օդ ծծելու։ Ինձ հրապուրում են իրիկնադէմի հովը, անտառի կենդանասուն, թարմ օդը, թռչունների ճռուողիւնը, առուակների խոխոջիւնը. հրապուրում են, յափշտակում և մտածմունքներն խաղաղ ծովը խորասուզում։ Այդպէս հրապուրուած և մտքի խորն ընկղմուած գնում եմ, գնում, և յոգնածութիւնից գադրած հազիւ զգում, որ ահագին տարածութիւն եմ անցել և սարալանջի բարձրերը հասել։

Նստեցի ծառուղիների խորքում շարուած նըստարաններից մէկի վրայ հանգստանալու։ Նայում եմ շուրջս. ոչ ոք չկայ։ Սրընթաց առուակները արծաթանման կոհակները գլորելով՝ վազում են դէպի սարի ստորոտը։ Ծառերը պինդ գրկել են

միմեանց. նրանց տերևների ուրախ շշուկը կարծես մրմնջում է բանաստեղծի խօսքը.

«Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն,
«Քան զանձկալին եղբայր անուն։

Արևը բաւական համարելով՝ որքան լուսաւորել է Աբասթումանը, հաւաքում էր իւր վերջին անզօր ճառագայթները։ Նա կարծես բաղխում էր արևմուտքի դռները որ գնայ, ուրիշ աշխարհներին էլ լոյս տայ, մեր երկնակամարը մի առ ժամանակ լուսնի իշխանութեանը թողնելով։ Դողդոջ լուսինն էլ լողալէն վեր բարձրանալով, կարծես արևից հէնց այդ էր խնդրում, մի քանի ժամուայ թագաւորութիւն պարզ երկնակամարի վերայ։

Հեռուից լսւում էր երաժշտութեան ձայնը. կառքերի դղրդոցն էլ մի կողմից է խանգարում անուսում հետզհետէ տիրող լռութիւնը։ Ամարանոցի հասարակութիւնը խնդում է։ Բայց այդ խինդն և աղմուկը ինձ չեն հետաքրքրում, չեն գրաւում՝ «Ոչ մի բերկրանք չեն ինձ համար»։ Նստած եմ միայնակ, ընկղմուած խորը մտքերի մէջ։ Մտածում եմ.—ինչու եմ խուսափում հասարակական զուարճութիւններից, ծերութիւնից է արդեօք, թէ ուրիշ պատճառ կայ։

Մտածում եմ, լուռ և մտախոհ բայց եմ անում յիշողութեանս մեծահատոր գիրքը և թերթում։ Տէր Աստուած, քինչ գրաւիչ էջեր. որքան զուարթութիւն, խինդ և բերկրանք, որքան աշ-

խոյժ և եռանդ։ Բայց այդ ամենը անցել են, գնացել, միայն վերք անբոյժ սրտումս թողուցել։ Եւ այդ անբոյժ վերքի գոյանալու պատճառը հարկաւ այն է, որ իմ ընկերներս ինձ հետ չէն։ Իմ հասակակիցները, նրանք, որոնց հետ անցրել եմ աշխոյժ և անհոգ մանկութիւն, կայտառ երիտասարդութիւն, գործունեայ արբուն հասակ, նրանք, որոնց հետ մտել եմ կեանքի սպիտակափառ ձմեռը, այժմիկ չկան։ Նախախնամութեան անքննելի կամքով նրանք թողեցին այս աշխարհը և գնացին յաւիտենական կեանքով ապրելու։ Եւ ես մնացի միայնակ, սպիտակափառ ձմեռուայ բոլոր խստութիւնների հանդէպ, միայնակ, զուրկ հաւատարիմ և սրտակից ընկերներից։ Ահա իմ տրխութեան, ինձ վրայ տիրող տաղտկութեան պատճառը։

Եւ այսպէս, ընկղմուած խորը մտածութեանց մէջ, իմ սիրելի Սամուէլ, յանկարծ առջևս իբրև կենդանի, իւր ամբողջ հասակով կանգնեց քո ծնող հայրը։ Երևակայութեանս ստեղծած ուժեղ պատկերն էր այդ, հետևանք այն ներքին դրութեան, որ ինձ շրջապատող իրականութիւնը մոռացած՝ ամբողջովին յանձնուել էի հոգւոյս թևերին։

Լսիր, Սամուէլ, պատանեկութեան վաղ օրերից սկսած՝ քո հօր հետ միասին ենք սովորել ու զարգացել։ Բայց այժմ նա չկայ։ Նա գնաց Աստուծոյ մօտ։ Երևի նա, որ դարբնում է մարդկանց վիճակը և

ճակատագիրը, այնպէս էր սահմանել, որ իմ պատուական ընկերը վաղ թողնէր այս աշխարհը։ Եւ վերին որոշման շնորհիւ դու զրկուեցիր քո բարեբար և սիրելի ծնողից, իսկ ես կորցրի իմ թանկագին, իմ անփոխարինելի բարեկամիս։ Հիմա, հոգիս, եկ բաղդադրենք երկուսիս վշտի չափը, տեսնենք, թէ որի՞ կորուստն է աւելի մեծ։ Գիտեմ, շատերը քո վիշտը սաստկագոյն կհամարեն։ Կասեն,—այնտեղ մեռնողը հարազատ հայր է, որից այլ ևս չկայ աշխարհումս, իսկ այստեղ պակասել է մի ընկեր, որից շատ կան... Բայց ես այդպիսի դատողութեանց հետ համաձայն չեմ կարող լինել։ Եւ ահա պատճառը։ Դու դեռ երիտասարդ ես. աշխարհը նայում է քեզ ժպտադէմ, նա դեռ շատ հրապոյրներ ունի քեզ համար պահած։ Կբացուին քիչ քիչ այդ հրապոյրները, քնքոյշ սպեղանի կը դնեն քո վէրքերի վրայ. և քո վշտերը կմոռացուին կանցնեն։ Բայց իմ վէրքը խոր է, անբուժելի, նա ինձ կհետևի մինչև գերեզման։ Եւ աշխարհը չունի ինձ համար այլ ևս այնպիսի նոր հրապոյրներ, որ կարողանայ մոռացնել մի ազնիւ բարեկամի, մի հաւատարիմ ընկերի կորուստը։

Բարեկամ և ընկեր գտնելը ժամուայ, օրուայ, նոյն իսկ ամիսների գործ չէ։ Երկար տարիների բովից անցնելով, բարեկամութիւնը զաւում է, ազնիւ, ոսկի, փոխադարձ սէր դառնում։ Իսկ դու լաւ գիտես, որ իմ առջև այլ ևս երկար տարիների բովը

չկայ։ Տարածութիւնը, որ ընկած է իմ և գերեզմանի միջև, այնքան էլ մեծ չէ։ Ինձ համար կեանքն այլ ևս հրապոյր չունի. ինձ սիրելի են իմ յիշողութիւնները, իմ անցեալը, այն բոլորը, որ կազմում է անցեալի բովանդակութիւնը։ Ահա ինչու համար ես խոյս եմ տալիս զուարճութիւններից, ահա ինչու համար՝ «ոչ մի բերկրանք չեն ինձ համար»։

Այսուհետև, Սամուէլ, քո հօր տեղ ընդունիր ինձ։ Գիտես, որ միշտ սիրել, միշտ քո բարին եմ ցանկացել։ Վստահ եղիր, որ այդպէս կլինեմ և ապագայում։ Նամակովդ տեղեկութիւն տուր մօրդ առողջութեան մասին։ Յայտնիր՝ ամուսնացել ես, թէ ոչ։ Այլ ևս մի անզգոյշ հարց. ինչպէս լսում եմ, Ձեր քաղաքի հայերի գրեթէ կէսը թողել է Հայաստանեայց առաքելական եկեղեցին և մտել է Լիւտերի փարախը։ Դու էլ նրանց շարքումն ես, թէ հաւատարիմ ես մնացել ազգային եկեղեցուն։ Կինս ու բոլոր երեխայքը կարօտով բարևներ են յիշում ամենքիդ։

Ձեզ համար աղօթող՝ ՅԱՒՈՒՐ։



ՆԱՄԱԿ ԵՐԿՐՈՐԴ

Աքսոլուհան 10-ն յուլիսի 1897 ամ

Սիրելի՛ Սաւուել:

Այսօր փոստից բերին զանազան լրագիրներ և նամակներ, որոնց հետ և քո նամակը՝ գրուած ամսոյս 5 ից: Ծրարի երեսի ձեռագրից իսկոյն և եթ ճանաչեցի որ քո նամակն է. ուստի և շտապով առաջինն այդ բաց արի: Գրում ես, որ մայրդ առողջ է և միշտ յիշում է ինձ և մերայնոց: Իսկ դու տակաւին չես ամուսնացել և չես էլ մտածում ամուսնանալ: Պատճառն էլ յայտնում ես, մեր ժամանակուայ երիտասարդ բերաններում ծամոն դարձած պատճառ—ամուսնութիւնը չափազանց ծանր լուծ է, այդպիսի մի ծանր լծի տակ չես կամենում մտնել. քո ներկայ ազատութիւնը չես կամենում շղթաների տակ դնել:

Երրորդ հարցիս վերաբերմամբ հաղորդում ես, թէ մի քանի ամիս է արդէն, որ թողել ես մեր մայրենի եկեղեցին և մտել լուտերական ժողովարանը. միշտ կարդում ես աւետարանը, յաճախում ես ժողովարանը: Եւ այդ պատճառաբանում ես

նրանով, որ մեր եկեղեցու մէջ չափից դուրս աւելորդապաշտութիւնները ես նկատում, մեր քահանաների տգիտութեան չափ և սահման չես տեսնում, նրանք մինչև անգամ զզուանք են պատճառում քեզ: Դու գովում ես լուտերական պաստորների լուսաւորութիւնը, գովում ես նրանց քարոզները, որոնք իբր թէ բացատրում են Աւետարանի իմաստը պարզ և ամենքին հասկանալի կերպով: Այնտեղ, ասում ես, թէ և չկայ շարական, մեղեդի և պատարագի արարողութիւններ, բայց կան երգեր, որ երգում են բոլոր աղօթողները՝ կանայք և տղամարդիկ միասին, և աւելի հաւանում ես այն, որ առաջին տեղը քարոզն է բռնում: Մեր քահանաներին ծոյլ, անաշխատ ես համարում: Ի վերջոյ պնդում ես, թէ միայն այդ եկեղեցու մէջ կարելի է հոգու փրկութիւն գտնել:

Հետեւեալ նամակներովս ես խոստանում եմ դառնալ այդ հարցերին և դրանց վերաբերմամբ փոքր ինչ խօսել քեզ հետ: Իսկ այժմ պատուական մօրդ յանձնիր իմ ։ և կնոջս բարեւները: Ասա մօրդ, որ մենք էլ չենք մոռանում իրեն, մանաւանդ նրա վերջին հիւրասիրութիւնը, երբ հիւր էինք ընկել Ձեր տուն՝ նա մեզ պատուեց իւր ձեռքով պատրաստելով հայկական հարիսայն:

Կինս այսօրուայ փոստով ուղարկում է մօրդ համար ինչ ինչ բաներ, կստանաս և կյանձնես ըստ պատկանելոյն:

Ողջ լերուք ի Տէր՛



ՆԱՄԱԿ ԵՐՐՈՐԴ

Աքսելո–ման 5 օգոստոսի:

Սիրելի՛դ իմ Սամուէլ:

Մարդկային կեանքը մի ճանապարհորդութիւն է, որ սկսւում է օրօրոցից և շարունակւում է մինչև գագաղը. ուրիշ խօսքով, որի մի ծայրը ծնարանն է, միւսը՝ քնարանը: Բազմաթիւ են այն պատճառները, որոնք այդ ճանապարհորդութիւնը երջանիկ և թշուառ են կացուցանում. բայց այդ երկու դէպքումն էլ հաւատարիմ, սրտակից անձնուէր ընկերի անհրաժեշտ կարևորութիւնը խիստ զգալի է լինում: Երբ մեր ուրախութեանը մասնակցող ընկեր ունինք, համարեա կրկնապատիկ աւելի է մեծանում այդ ուրախութիւնը: Իսկ երբ տխուր ենք, երբ սև օրերի լուծը ծանրացել է մեր ուսերի վրայ և ճնշում, հալում և մաշում է մեզ, այդ ժամանակ էլ սրտակից ընկերը մասնակից լինելով մեր վշտին, կարծես մեզ վրայ ծանրացող բեռը կիսում և կէսը իւր շլինքն է առնում և այդպէս թեթևացնում մեր վիշտը: Լաւ է ասում բանաստեղծը.

«Երբ մենք սև օրուան ունինք կարեկից,
«Ասում են՝ կէսն է պակսում մեր ցաւից:

Հոգեակդ իմ Սամուէլ. կեանքիս մէջ ես շատ ճանապարհորդութիւններ եմ արել: Եւ լաւ եմ յիշում, ամեն անգամ ճանապարհորդութեան պատրաստուելիս՝ ինձ զբաղեցնող գլխաւոր միտքն այն է եղել, թէ ո՛վ կլինի ընկերս, որովհետև ճանապարհին գրեթէ ամեն քայլափոխում նրա կարօտն զգացւում է: Մէթէ նոյնը չէ պատահել քեզ հետ: Մըտնում ես մի օտար քաղաք, իջևանում ես հիւրանոցներից մէկում: Հիւրանոցի սպասաւորը առաջնորդում է քեզ դէպի քո խնդրած սենեակը, ճրագը վառում է, եթէ մութ է, և հեռանում: Յուրա սենեակում ձեռներդ շփելով, ծխախոտը ծխելով՝ մի քանի անգամ անցուդարձ ես անում: Նուտով յոգնում ես, ձանձրանում և նստում: Նայում ես շուրջդ, տեսնում ես՝ պատից կախած մի քանի իւղաներկ պատկերներ: Ինչ որ է, դիտելու, ուրեմն և ժամանակ անցկացնելու բաներ են: Դրանցից մէկի վրայ նկարուած է մի կաթոլիկ կղերական, որ փրփրալից բաժակից մեծ ախորժակով գարեջուր է խմում և գոհութեան ժպիտը երեսին—աջ ձեռքի ցուցամատով ուրախարար հեղուկն է ցոյց տալիս՝ կարծես ասելով. այդ խակ են վարձք մեր: Միւս նկարը մանկական աշխարհի պատկերներից մէկն է ներկայացնում. գորգի վրայ նստած է մի փոքրիկ երեխայ: Մի ոտքին գուլպայ միւսը բոլիկ է: Ծամացույցը մի ձեռքն

է առել և միւս ձեռքով մեծ աշխոյժով ժամացոյցի լարելու ծակը և լցնում է կաթնաճաշով։ Երրորդ նկարը շատ խրատական բովանդակութիւն ունի։ Ձոխ կահկաւորած սենեակում բազկաթոռի մէջ խրուած նիրհում է ծերացած ամուրին։ Երեսին դրոշմուած է ձանձրոյթի, տաղտկութեան, մելամաղձութեան կընիքը։ Առջևը՝ սեղանի վրայ փռուած են խաղաթղթերը. դրանցից մի քանիսն էլ տարածուած են գետնին—երևում է, դրանք ձեռքիցն են ընկել։ Նկարիչը կամեցել է ցոյց տալ, թէ ինչ է այն մարդու ապագան, որ երիտասարդութիւնը անմիտ կերպով շռայլում է և չի ցանկանում ամուսնանալ։ Մի երկու րոպէ կանգ ես առնում պատկերի առջև. մտածում ես, մի կին, մի երկու երեխայ, և այդ մոայլ, գերեզմանի չափ տխուր տունը աշխոյժ և կենդանութիւն կստանար... Ապա նստում ես և մտածում.—Ինչպէս պիտի անցուցանես ձմեռուայ երկար գիշերուայ ձանձրալի ժամերը։ Հրամայում ես ծառային վառարանը վառել և ինքնաեռը (самоваръ) բերել։ Պատուհերդ կատարուում է։ Նստում ես սեղանի վրայ կանգնած ինքնաեռի թշթշոցը, վառարանում այրուող փայտերի ճարճատիւնը, բաժակ և գդալի չխչխկոցը։ Դրանցով կարծես առ ժամ մի փարատուում է մենակութեանդ տաղտկութիւնը, խաբում ես ինքդ քեզ մի կարճ ժամանակ, բայց այդ էլ վերջանում է. և յուսահատուած չգիտես ինչ անես, ինչպէս անցընես ժամերդ։

Եւ ինչ է դրա պատճառը.—ընկերի բացակայութիւնը։

Որքան էլ միակողմանի լինի այս օրինակը, Սամուէլդ իմ, բայց և այնպէս նա քեզ կհամոզի իմ վերև ասածներիս ճշմարտութեան մէջ, կհամոզի որ ինչպէս ճանապարհորդութեան ժամանակ, նոյնպէս և կեանքի մէջ իւրաքանչիւր քայլափոխում անհրաժեշտ է անկեղծ, սրտակից ընկեր ունենալը։

Լաւ մտածիր, սիրելի Սամուէլ. ասում եմ ես, «ուզում եմ ազատ լինել, չեմ ցանկանում ինձ կաշկանդել ամուսնական լծի տակ և դրա համար չեմ պսակուում»։ Կրկնում եմ, լաւ մտածիր, թէ ինչ ես ասում։ Մի թէ ուրեմն Աստուածային իմաստութիւնը մարդկութեան թշուառութիւնն էր ուզում, երբ մարդկային կեանքի առաւօտեան առաջին մարդու մենակութիւնը տեսնելով՝ նրա համար որոշեց. «արասցուք դմա օգնական»։ Դարերի իմաստութիւնը, աշխարհիս ամենանշանաւոր փիլիսոփաները չկարողացան հերքել, այլ և հաստատեցին այդ որոշումը։ Բայց մեր ժամանակի երիտասարդը յանդգնում է հերքել այդ իմաստութիւնը. և ինչ հիմք բերելով։ «Ամուսնութեան լծի տակ չեմ կամենում մտնել և ազատութիւնս շղթաների տակ դնել»։ Ահա ինչո՛վ են ուզում հերքել Աստուածային իմաստութիւնը։ Բայց ես վախենում եմ, սիրելի Սամուէլ, որ մի անձնուէր ամուսին կնոջ երևակայական լծից ազատ լինել ցան-

կացողները մի քանի անձնապաշտ օտար կանանց իսկական ծանր լծի տակ ընկնեն։ Եւ, ինչ թագցնեմ ճշմարտութիւնը, կեանքի մէջ հէնց այդպէս էլ կատարւում է։

Հա, կան մարդիկ, որոնք չեն մտածում ամուսնական լծի մասին և իրօք էլ հեռի են մնում նրանցից։ Այդ այն մարդիկն են, որոնց հոգին ամբողջապէս լցուած, վառուած է մի կրքով, որ ուրիշ կրքի տեղ չէ տալիս։ Այդպէս են օրինակ այն բացառիկ մարդիկը, այն բարձր ոգիները, որոնք կեանքը ամբողջովին նուիրել են մարդկային ազգի երջանկութեան կամ փիլիսոփայական—գիտնական հետազօտութեան, այդպէս են Պօղոս առաքեալը, գերմանացի փիլիսոփայ Շոպէնհաուէրը և այլն։

Այդպէս են և խաղամոլները. նրանք, որոնք թղթախաղի գերի են դարձել, որոնց ամբողջ էութիւնը վառուած է թղթախաղի կրքով։ Այս կարգի մարդկանց համար յիրաւի ընտանիքը լուծ է։

Վերջապէս ամուսնութիւնից փախչում են մի ուրիշ, նոյնպէս վտանգաւոր՝ կրքից մոլուած, կուրացած մարդիկ, դա հարստութեան կիրքն է։ Կան մարդիկ, որոնք երջանիկ լինելու նպատակով ձգտում են մեծ հարստութեան, կարծելով թէ միայն դա կարող է մարդուս երջանկացնել։ Եւ ահա մոռացած ամեն մարդկային պարտաւորութիւն, խեղ-

դած ուրիշ ամեն զգացմունք, միայն հարստանալու մասին են մտածում։

Գիտեմ, հոգեակդ իմ Սամուէլ, որ առաջին երկու կարգերին չես պատկանում. բայց կուզենայի, որ երրորդ կարգին էլ չպատկանէիր։ Գգտիր հարստութեան, դրան ես դէմ չեմ։ Բայց ես ուզում եմ, որ մարդս հարստութեան վրայ իշխան լինի, ծառայեցնի նրան իւր քէֆի ուզածին պէս, համաձայն և սրտի թելադրութեան. ծառայեցնի նրան իւր իսկական երջանկութեան, իւր հոգու և խղճի խաղաղութեան համար։ Իսկ երբ մարդս գերի է դառնում հարստութեան, ինքն է ծառայում նրան,—այդ ողորմելի դրութիւն է, կատարեալ թշուառութիւն է։

Սիրելի Սամուէլ, անշուշտ տեսած և լսած կլինես, թէ մեր ծերունիները ինչպէս են հեգնում չամուսնացած երիտասարդներին «կէս մարդ է» ասում են. իսկ երբ այդ «կէս մարդը» ամուսնանում է, այն ժամանակ ծիծաղելով նկատում են, «ա՛յ հիմի կատարեալ մարդ դարձար»։ Ինչպէս երևում է այդ խօսքը լոկ զուարճախօսութիւն չէ, այլ դրա մէջ և մեծ ճշմարտութիւն կայ, որին ժողովուրդը հասել է դարերի ծանր փորձերից անցնելով։ Այդ ցոյց են տալիս այժմեան գիտնական հետազօտութիւնները, որոնք ապացուցանում են, թէ որպէս տղամարդու, նոյնպէս և կնոջ բնութիւնը մարդկային կատարելութեան է հասնում միայն այն ժա-

մանակ, երբ այդ երկուսը միացած են ամուսնութեամբ։

Աշխարհիս երեսին կատարելապէս բախտաւոր լինելու համար պէտք է, որ մարդս հոգւով և մարմնով առողջ լինի։ Իսկ հոգու և մարմնի առողջութիւնը ամենագեղեցիկ կերպով ապահովւում է միայն ամուսնական կեանքի մէջ։ Ուշադրութիւն դարձրու այն հանգամանքի վրայ, որ ինքնասպանութիւն գործողների մեծ մասը չամուսնացած տղամարդիկն են։ Պատճառն իմ կարծիքով այն է, որ դրանց հոգու վրայ ամեն օր և երբէք չի նստում կնոջ և երեխաների սիրոյ զուարթացնող և կենսատու շաղը։ Ու մենակութեան և բարոյական երաշտութեան մէջ չորանում է հոգին. դառնում է մի զարհուրելի բեռը, որից ազատուելու համար մարդ ինքնասպանութեամբ վերջ է դնում իւր թշուառ կեանքին։

Ա.հա, սիրելի Սամուէլ, քո գոված ազատութեան հրապոյրներից մէկը։

Այժմ լաւ մտածիր. օրուայ ծանր հոգսերից և աշխատութիւնից յոգնած, վաստակած երբ տուն ես դառնում, ցուրտ պատերի տեղ քեզ հանդիպում են սիրող ամուսին և հրեշտականման մանուկները, նրանք գգւում, փայփայում են քեզ, դու՝ նրանց։ Մոռանում ես աշխարհի վիշտն ու ցաւը։ Տեսնում ես, որ կռուով, փոխադարձ ատելութեամբ, չարութեամբ և տանջանքներով լի այս աշխարհում

կարելի է մի փոքրիկ դրախտ ստեղծել և հանգիստ գտնել այնտեղ։ Դա ընտանեկան դրախտն է։ Ինչպէս բոյսերը օրուայ շոգից և տապից այրուած, թոռոմած գիշերային ցօղի շնորհիւ նորից բացւում, թարմանում են, այդպէս էլ տղամարդը օրուայ աշխատութիւններից և հոգսերից նեղացած ընտանեկան յարկի տակ նորից թարմանում է, հոգու խաղաղութիւն է գտնում։ Աշխարհիս երեսին չկայ մի ընկեր, որ մարդուս տխրութեան ժամանակ մխիթարէ այնպէս, ինչպէս կարող է կինը մխիթարել։ Չկայ մի ընկեր, որ մարդուս ուրախութեանն այնպէս ջերմ և անձնուէր սրտով մասնակցէ, ինչպէս կինն է մասնակցում։ Եւ ինչ բան կարող է ուրախացնել մարդուս, որքան այն, երբ տեսնում է, թէ ինչպէս բացւում է իւր սիրասուն որդեկի թոթով լեզուն և ինչպէս առաջին անգամ «հայրիկ»—«մայրիկ» է թոթովում։

Տունը ուր չկայ կին, ուր չկան երեխաներ, նման է այնպիսի տաճարի, ուր ոչ սրբութեան սեղան կայ, ոչ խունկ, ոչ աղօթք, ոչ աստուածային կենդանարար խօսք։

Բայց ես, հոգեակդ իմ Սամուէլ, ցանկանալով ցանկանում եմ, որ քո տունը կատարեալ տաճարի նման լինի։

Զգիտեմ, կարողացայ արդեօք փոքր ի շատէ սիրելի դարձնել քեզ համար ամուսնական կեանքը, կարողացայ արդեօք սէր զարթեցնել քո մէջ դէ-

ալի ընտանեկան դրախտը։ Վստահանում եմ հաւատալ, որ եթէ նամակս մի քանի անգամ ուշադրութեամբ կարդաս, շատ չանցած քեզանից կստանամ կարգուելու համաձայնութեանդ լուրը։

Քո ամուսնութեան վերաբերմամբ, ինձ հետ համամիտ է և կինս։ Հաւատացած եմ, որ դա կլինի և քո մօր ջերմ ցանկութիւնը։ Մեր երեխայքը իրանց պատրաստած թաւշեայ ձեռագործներից մի քանիսը—առանձին արկղիկում ուղարկեցին իմ քրոջն ընծայ. կստանաս փոստից և կյանձնես մօրդ։

Ողջ լեր՝



ՆԱՄԱԿ ՉՈՐՐՈՐԴ

Աքասլուհան, 25-ն օգոստոսի 1897 թ.

Սիրելի՛ Սամուէլ.

Այն քաղաքում, ուր դու ես ապրում, ամեն օր տեսնում ես զանազան ազգութեանց պատկանող մարդիկ—հայ, ռուս, թուրք, վրացի, հրէայ... Արդ համարձակում եմ քեզնից հարցնել, ինչ կասէիր այն մարդուն, որ հեռանար իւր ծնողներից, իւր բարեկամներից ու ազգականներից, հեռանար այն հասարակութիւնից, որի մէջ ծնուել, մեծացել է ինքը, այն ազգից, որի մի անդամն է և գնար, մբռնէր մի այլ ազգութեան մէջ, պատճառ բերելով իւրայինների տգիտութիւնը, աղքատութիւնը կամ մի որևէ այլ իրական կամ կարծեցեալ պակասութիւն. գիտեմ, դու կասես, թէ անարգանքի արժանի են որպէս այդ մարդը, նոյնպէս և նրա վարմունքը։ Բայց այն էլ իմացիր, Սամուէլ, որ քաղաքակիրթ, լուսաւոր հասարակութիւնների մէջ այդպիսի մարդուն վերաբերւում են խորին արհամարհանքով և ոչ մի պատուաւոր շրջանում չեն ընդունում։

Այս օրինակը բերում եմ քեզ համար, որ դաւանափոխ լինելուդ առթիւ։ Նմանակդ կարդալով, ես տեսնում եմ, որ դու մի նոր բախտի հասած ես համարում քեզ, կարծում ես, թէ մի մեծ գիւտ ես արել, քեզ այնպէս է թւում, թէ հին և պատառոտուն շորերի փոխարէն մետաքսեայ և կերպասեայ հանդերձներ ես հագել։ Բայց ինձ թւում է, թէ սխալուած ես. ես տեսնում եմ, որ դու բաւականաչափ լրջօրէն չես քննել այն քայլը, որն արդէն կատարել ես։ Եւ յիրաւի ինչ նոր բան ես գտել, ինչով ես պարծենում։ Գուցէ մի նոր աստուած ես գտել, որին մենք չենք ճանաչում և որին չեն կարողացել ճանաչել Հայաստանեայց առաքելական եկեղեցու նահատակ որդիքը՝ Գրիգորեանք՝ Ներսեսեանք, Սահակեանք, Վարդանանք, Ղևոնդեանք..կամ գուցէ քո մարդկային պարտաւորութիւնները կատարելու մի նոր ճանապարհ, նոր սկզբունք ես գտել։

Առաջ քրիստոնեայ էիր. քո հաւատի աղբիւրը, քո պարտաւորութիւնները ցոյց տուող առաջնորդը մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աւետարանն էր։ Ա՞յժմ ինչ ես, ինչի՞ ես հաւատում, ինչո՞վ ես առաջնորդւում։ Չէ՞ որ նոյն քրիստոնեան ես, նոյն Աւետարանի աշակերտը։ Հեռւաբար—անշուշտ չես նեղանալ պարզ և անկեղծ նկատողութիւնից—դու մի մանկական խաղ ես խաղացել, սպիտակ ձուի տեղ կարմիր ձու ես առել։ Եւ ուրիշ ոչինչ։ Բայց

չէ՞ որ իրաւունք կայ քո հասակի մարդուց պահանջելու՝ միտ դարձնել ձուի և ոչ ներկի վրայ, էութեան և ոչ թէ կեղևի վրայ։ Հապա մի ինքդ էլ մտածիր, թէ իսկապէս ինչ է արածդ. թողել ես քո հայրենի փարախը, Հայաստանեայց եկեղեցին, ուր Քրիստոս պաշտւում է հայ լեզուով և մտել ես լուտերական եկեղեցին, ուր նոյն Քրիստոսը գերմանական լեզուով է պաշտւում։ Զգիտեմ, թէ քեզ ո՞րն աւելի հրապուրեց. գերմանական լեզո՞ւն, թէ գերման եկեղեցում պաշտուող Քրիստոսը։ Միայն որով էլ հրապուրուած լինիս, յանդիմանութեան արժանի ես։ Լեզուի մասին քեզ այսքանը կասեմ, աղօթքը մարդկային ամենանուրբ և ամենավսեմ զգացմունքն է. նա իւր ամբողջ խորութեամբ կարող է արտայայտուել մի՛միայն մայրենի լեզուի միջոցով։ Դրա համար էլ գերմանացի բանաստեղծն ասել է.

«Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
«Իմ սրտի սէրը, իմ երանական մտածութիւնքը
«Յայտնել արժան էր՝ ապա կխօսեմ
«Իմ մօրս խօսքը.....

Իսկ ինչ որ Քրիստոսին է վերաբերում՝ մի՛թէ դու կարծում ես, թէ Հայոց եկեղեցու Քրիստոսն ուրիշ է, բողոքական եկեղեցունը ուրիշ. կամ գուցէ քեզ հաւատացրել են, թէ Քրիստոսին մաս մաս են արել և մեծ բաժինը բողոքական եկեղեցուն տուել, Քրիստոս բոլոր քրիստոնեաների և բոլոր

քրիստոնեայ եկեղեցիների համար մէկ է։ Մէկ են և բոլոր եկեղեցիները. չկան այդտեղ ոչ Պօղոսեան և ոչ Ապօղոսեան. այլ ամենքը քոյրեր են՝ կապուած իրար հետ հաւատով ի մի Յիսուս Քրիստոս։

Սիրելի՛ Սամուէլ, եթէ փրկութիւն ես որոնում, ապա լաւ իմացիր, որ Քրիստոս չէ պահանջում, թէ այս կամ այն եկեղեցում աղօթիր. նա չէ նայում, թէ դու ո՛ր եկեղեցին ես գնում. այլ պիտում է, որ տեսնի, թէ ինչպէ՞ս ես կատարում նրա պատուէրները։ Մի՞թէ այդ պատուէրները յայտնի չէին քեզ, երբ Հայոց եկեղեցումն էիր։ Չեմ կարծում։ Ո՞րտեղ էր Լուտերը, ո՞րտեղ լուտերական եկեղեցին և ի՞նչ էր գերման ժողովուրդը, երբ Հայոց աշխարհում որոտում էր Աւետարանի քարոզը Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների բերանով, երբ Հայաստանի փափկասուն աղջկերքը՝ ինչպէս արքայադուստրն Սանդուխտ, նահատակութիւն էին յանձն առնում Քրիստոսի սիրոյ համար։ Այդ օրից ահա մօտ 1900 տարի է անցել. և Հայոց աշխարհում Աւետարանի քարոզը երբէք չի լռել։ Հայերին դրացի ոչ քրիստոնեայ ազգերն էլ հայերի հետ շփուելով, հասկացան անշուշտ, թէ Քրիստոս ինչ է պահանջում իւր հետևողներից։ Մեր ամենայետ ընկած գիւղը, խօսիր ամենայն օր կոպիտ աշխատանքով միայն պարապող տգէտ գիւղացու հետ։ Հարցրո՛ւ նրանից.—Ի՞նչէ պահանջում մեզնից մեր

Տէր Յիսուս Քրիստոսը։ Եւ նա իւր կոպիտ և տգէտ տեղովը քեզ կպատասխանէ. թէ՝ «Երկնչիր Աստծուց և պահիր պատուիրանները»։ Եւ մի՛թէ այդքան պարզ պատուէրը միայն դո՛ւ չհասկացար և ձեր քաղաքի բնակիչների մի մասը. ու դրա՛ համար Լուտերի փարախը վազեցիք, այդ պարզ պատուէրը հասկանալու համար։

Դրան էլ չեմ հաւատում. եթէ հաւատամ, կարծում եմ ձեզ ամենաճանր կերպով կվիրաւորեմ։ Հօ չեմ կարող ձեզ այնքան նուաստացնել, որ երեխայի տեղ դնեմ, անչափահաս համարեմ։

Ուրեմն ասա՛, սիրելի՛ Սամուէլ, ինչն էր որ քեզ Լուտերի գիրկը գլորեց։ Քահանաների տգիտութիւնը, պատասխանում ես՞ դու քո նախընթաց նամակով։ Խոստովանում եմ, քո այդ պատճառաբանութեամբ մինչև մի փոքր հիմնաւոր, մի փոքրը ճշմարիտ ես։ Բայց միայն այդքան։ Խելացի և արդար ասել չեմ կարող։

Ի՞նչ կանէիր, հոգիս, եթէ քո սեպհական, հաստահիմն, դեղեցիկ և հայրական—պապենական դեղեցիկ յիշատակների հետ կապուած տան մի անկիւնը կաթէր։ Արդեօք կթողնէի՞ր բախտի կամքին և հեռանալով՝ մի օտար տան վարձով բնակութիւն կհաստատէիր, թէ փող կծախսէիր, վարպետ կը-կանչէիր և կաթոցի առաջն առնել կտայիր։ Ես հաւատացած եմ, որ վերջին մէջոցին կդիմէիր։ Այդ են պահանջում խելքը, առողջ դատողութիւնը և

վերջապէս քո անձնական օգուտը։ Քահանաների տգիտութիւնն էլ մեր հասարակական տան կաթոգն է։ Դա մեր հասարակական—ազգային ցաւերից մէկն է։ Ամեն մի ազնիւ հայ պարտաւոր է իւր կարողութեան չափ աշխատել, որպէս զի այդ ցաւը վերանայ։ Այդ են պահանջում խելքը, առողջ դատողութիւնը և վերջապէս հասարակական շահը, որի ձայնին նոյնպէս պարտաւոր ենք լսել, որքան անձնական օգտի ձայնին։ Բայց դու քո պարտաւորութիւնը չկատարեցիր. և ասպարիզից վախկոտ զինուորի պէս փախար։ Ուստի այսօր քո քաղաքակիցները իրաւունք ունին վշտացած սրտով դառնալ քեզ և ասել. «այս ցաւը (քահանաների տգիտութիւնը) դառն օրերում քո և մեր հայրերը ի միասին մեզ ժառանգութիւն թողեցին. ուստի դու էլ մեզ հետ պարտաւոր էիր աշխատել՝ ընդհանուր ցաւը բժշկելու և մեր որդիներին մի առողջ քահանայական դասակարգ թողնելու։ Ինչո՞ւ չկատարեցիր քո պարտքը. ինչու փոքրոգութեամբ հեռացար ասպարիզից»։

Նոյն խօսքով իրաւունք ունի դիմել քեզ ամբողջ ազգը։ Եւ դու ո՛չ մի կերպով չես կարող պաշտպանել, արդարացնել քեզ։

Այժմ ես հասկանում եմ, հոգեակդ իմ Սամուէլ, թէ որքան մեծ է եղել քո մաքին և սրբտին տիրած մոլորութիւնը. այնքան մեծ, որ կարողացար բոլոր սրբազան կապերը կտրել, պարտականութիւնը մոռանալ և այդպէս քնած խըղճով բողոքական եկեղեցին, Լուտերի գիրկը մանել։ Հասկանում եմ, թէ խորամանկ պաստորները որքան են շփոթել քո առողջ դատողութիւնը, որ դու հիացել, յափշտակուել ես Լուտերով։ Բայց վերաւ Լուտերի կենսագրութիւններից մէկը և ուշադրութեամբ կարդա՛, տես՝ նրա գործունէութեան մէջ կա՞յ արդեօք մի այնպիսի բան, որով նա արժանի դառնայ հայ մարդու հիացմունքին, յափշտակութեանը և պաշտամունքին։ Ո՞ր հեթանոսի Լուտերը քրիստոնեայ դարձրեց, ո՞ր խաւար և բարբարոս ժողովրդի նա Աւետարանի ճշմարտութիւնը քարոզեց։ Ես չեմ յանգիմանում Լուտերին և չեմ ուրանում նրա կատարած գործի մեծութիւնը, բայց դրանով թող հիանայ և փառաւորուի գերմանացին։ Հզօր իշխանների պաշտպանութեան հովանուտակ Լուտերն ազատեց գերմանացու խիղճը կաթոլիկ կղերի բռնութիւնից և իւր հայրենիքին ազատ և անկախ եկեղեցու տէր դարձրեց։ Եւ գերման ժողովուրդը, թէև Լուտերից առաջ էր Քրիստոնեայ, այդ փառաւոր գործի համար նրան իւր մեծ որդիների կարգը դասեց։ Մենք էլ՝—իբրև մարդ, կարող ենք, նոյն իսկ պարտաւոր ենք, յարգանքով վերաբերուել դէպի Լուտերի անունը, որովհետև նա պատմութեան էջերը զարդարող մեծ մարդկանցից մէկն է, որովհետև նա մի ամբողջ երկիր ազատեց կրօնապէս Հռօմի պապի բռնակալու-

թիւնից։ Բայց յափշտակուել նրանով և նրա հիմնած եկեղեցին մտնել, երբ մենք ունենք մեր մայրենի ազատ եկեղեցին՝ այդ աւելի քան երեխայութիւն է։

Հիացմունքի և յափշտակութեան առարկայ ես ուզում, ահա քեզ մեծն Գրիգորը. Հայաստանի լուսաւորիչը։ Տես, թէ ինչպէ՞ս հաւատով զօրացած նա ընդդիմանում է Տրդատին, հեթանոս Հայաստանի հզօր թագաւորին։ Տես, թէ ինչպէս մոռանալով փառք, պատիւ, մեծութիւն, որ սպասում էին նրան թագաւորի արքունիքում, զինւում է Քրիստոսի սիրով, յանդիմանում է թագաւորի մոլորութիւնը. ցոյց է տալիս կուռքերի՝ Արամազդի, Վահագնի, Միհրի, Անահտի, Աստղկի ոչնչութիւնը, դրանց արարած լինելը և համարձակ կերպով քարոզում է Քրիստոսի Աւետարանը։ Կարդա այն սոսկալի տանջանքների պատմութիւնը, որոնց ենթարկուեց Գրիգորը. զարմացիր, թէ ինչպէ՞ս ամբողջ տասնուվեց տարի նա դիմացաւ այդ տանջանքներին. և յետոյ հաւատա՛, որ հաւատով, յոյսով և սիրով լցուած մարդը կարո՛ղ է իսկապէս հրաշքներ կատարել։ Հրաշք չէ՞ միթէ տանել այնպիսի աննկարագրելի տանջանքներ, որոնց ընթերցումն իսկ մարդուս վրայ սոսկում է բերում։ Հրաշք չէ՞ միթէ, որ նրան այդքան տանջող թագաւորը վերջ ի վերջոյ իւր նախարարների, մեծամեծների, զօրքի և ժողովրդի հետ ծունկ է չոգում կենդանի նահատակ Գրիգորի

առջև և նրանից ճշմարտութեան խոսքն է լսում։ Գրիգորը հեթանոսութեան խաւարի մէջ տառապող Հայաստանը Աւետարանի լուսով լուսաւորեց։ Այդ պատճառով ազգը նրան լուսաւորիչ է անուանում։ Երկինքն էր գործակից լուսաւորչին. Միածինն ոսկի ուռը ձեռքին իջաւ երկնքից և Գրիգորին ցոյց տուաւ, թէ ո՞րտեղ պէտք է շինուի Հայոց Հայրապետական կամ մայր Տաճարը։ Բա՛ց ասա պատմութիւնը և կարդա այդ էջերը. կարդա լուսաւորչի յաջորդների գործունէութիւնը. կարդա Հռիփսիմեանց, Գայիանեանց, Ղեւոնդեանց, Վարդանանց նահատակութիւնը։ Եւ այն ժամանակ դու կտեսնես, թէ ո՛րքան թեթևամտութիւն է այդքան բազմաթիւ սրբերի արեամբ հաստատուած մի եկեղեցի թողնել և մի նորաբոյս ժողովարան մտնել։

Այս անգամ նամակս բաւական երկարացաւ։ Միւս նամակովս դարձեալ կխօսեմ այդ հարցի մասին և ցոյց կտամ քեզ մետաղի միւս երեսը։

Իմ խորին յարգանքները կյիշես մօրդ։

Ողջ ի՛ր
Ձեր

ՆԱՄԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Աքսոլուհան, 5 սեպտեմբերի 1897 թ.

Սիրելի Սամուել.

Եթէ անցեալ նամակիս մէջ լիշած բոլոր առարկութիւնները անուշագիր թողնելու քաջութիւնն ունենաս, այն ժամանակ կարող ես ասել, «եկեղեցիս փոխելով հօ ոչինչ չեմ կորցնում. էլի նոյն մարդն եմ և նոյն քրիստոնեան»: Եթէ հարցըն այդքան սահմանափակենք և մի րոպէ համաձայնենք, որ դու ոչինչ չես կորցնում, այնու ամենայնիւ մէջ տեղ կմնայ խիստ ցաւալի իրողութիւն: Դիցուք թէ դու ոչինչ չես կորցնում. բայց ես շատ բան եմ կորցնում: Ես կորցնում եմ քեզ, վասն որոյ ցաւում եմ շատ, որովհետև իմ ազգիցս մէկ անդամ պակասում է իւր գալոց սերունդովը:

Գուցէ դու զարմանաս ինձ վրայ, որ չգիտեմ զանազանել կրօնը ազգութիւնից, և ասես. «Մէթէ եկեղեցուց հեռանալով՝ հեռանում եմ և ազգութիւնից»: Հոգեակս, ես լաւ գիտեմ, որ կրօն և ազգութիւն տարբեր բաներ են: Իմ ճանապարհորդութեանս ժամանակ Եւրոպայում ես հանդիպել եմ այնպիսի ընտանիքների, որոնց անդամները տարբեր կրօններ են դաւանում: Այն տեղ դու կտեսնես զերմանացիք, որ կաթոլիկ են դաւանութեամբ և ուրիշ ազգեր, որ բողոքական են: Բայց դա ամենևին նրանց ազգային յարաբերութիւնների մէջ շփոթութիւն չի մտցնում, դա չի թուլացնում ազգայնութեան գաղափարը, որը առանձնապէս գոյութիւն ունի և խոր արմատներ է գցել ամեն մէկի հոգու մէջ: Եւրոպայում մի և նոյն ազգութեան պատկանող մարդիկը որքան էլ տարբեր դաւանութիւնների, նոյն իսկ կրօնների լինեն հետևում, այնու ամենայնիւ իրար հետ անբաժան կապուած են անցեալի և հայրենիքի ընդհանուր շահերի գիտակցութեամբ: Մեր ժողովրդի մէջ այդ գիտակցութիւնը չկայ: Կապող օղակը միայն եկեղեցին է: Այդ պատճառով եթէ մէկը հեռանում է մայրենի եկեղեցուց, մի և նոյն ժամանակ ազգութիւնից էլ կարւում է, կորչում: Լեհաստանում մի ժամանակ հայ գաղթականութիւնը փառաւոր կերպով ծաղկում էր: Լեհաստանի թագաւորները տեսնելով թէ հայերը որքան օգտակար են երկրի տնտեսական զարգացման համար, նրանց ընդարձակ իրաւունքներ և արտօնութիւններ էին շնորհել: Բայց այդ մեծ և հարուստ գաղթական հայութիւնից այսօր ոչինչ չի մնում: Կաթոլիկ եկեղեցու գիրկը մտնելով, շատ կարճ միջոցում այդ հայերը մոռացան և իրանց ազգութիւնն և խառնուելով լեհաց

հետ՝ անհետ կորան։ Կասկած չկայ, որ եթէ դա-
ւանափոխութեան այդ տխուր դէպքը չլինէր, այս
օր Լեհաստանում մի խոշոր հայկական հատուած
կլինէր՝ մօտաւորապէս հարիւր հազար հոգի։

Տասնեւեօթներորդ և տասնեւութերորդ դա-
րերում Պարսից թագաւորները շատ հայեր և վրա-
ցիներ են բռնի կերպով գաղթեցրել և գերի տարել
Պարսկաստան։ Այսօր այնտեղ հայութիւնը մնում
է, իսկ վրացիների հետքն էլ չկայ։ Պատճառն այն
է, որ վրացիք կրօնափոխ եղան, մահմետականու-
թիւն ընդունեցին, իսկ հայերը հաւատարիմ մնա-
ցին իրանց եկեղեցուն։ Ի՞նչ ես կարծում, սիրելի
Սամուէլ, այսօր Պարսկաստանում հայութիւն կլի-
նէ՞ր, եթէ դրանք էլ ուրացած լինէին իրանց հա-
ւատը և մահմետականութիւն ընդունած։

Ձեր կողմերում հայ գիւղեր կան, որտեղ հայե-
րէն չեն խօսում։ Անհասկանալի մինչև այժմ դեռ
չբացատրուած պատճառներով այդ հայերը մոռա-
ցել-թողել են իրանց մայրենի լեզուն և խօսում
են խառն պարսկերէն։ Բայց պահպանել են ազգու-
թիւնը շնորհիւ կրօնի։ Լուսաւորչահիմն եկեղեցու
խաչի փայլը պահպանել է նրանց կորչելու վտան-
գից, ինչպէս որ անապատի մէջ լուսեղէն սիւնն էր
պահպանում հրէաներին խաւարի փորձանքներից։

Այդ պարսկախօս հայերի մէջ դու չես գըտ-
նիլ մէկը, որ ասէ, թէ ինքը պարսիկ է։ Բայց ինձ
շատ անգամ է պատահել լսել, որ լուտերական հայն

իրեն «լէմսա» է անուանում մի առանձին հպար-
տութեամբ։ Խօսքս բացառութիւն կազմող սակա-
ւաթիւ զարգացածների մասին չէ, այլ ընդհանրու-
թեան, բուն ժողովրդի։ Այդպէս էլ հայ լուսաւոր-
չականն ասում է. «այս ինչ մարդը իւր հաւատը
փոխեց և նեմեց դառաւ»։

Ահա մօտ չխուն տարի է որ ձեր կողմերում
տարածուել է լուտերականութիւնը։ Պէտք էր կար-
ծել, թէ այդ կէսդարեան ժամանակամիջոցում եր-
կու կողմերն էլ մոռացած կլինին փոխադարձ ա-
տելութիւնը, իրար հետ հաշտուած և պատրաստ՝
ընդհանուր գործերը ձեռք ձեռքի տուած առաջ
տանելու։ Բայց այդպիսի բան չկայ. երկու կողմե-
րըն իրար հետ այնպէս են, ինչպէս երկու տար-
բեր ազգեր։

Ձեմ ուրանում, կան, և ես ճանաչում եմ, լու-
տերական պատուական հայեր, որոնք հասարա-
կական—ազգային գործի ասպարիզում պակաս չեն
աշխատում լուսաւորչական հայերից. բայց դրանք
աննշան բացառութիւններ են, իսկ բուն ժողովուր-
դը մնում է ազգային կոճղից կտրուած, բաժա-
նուած։

Այժմ մտածիր, սիրելի Սամուէլ, թէ այդ պաս-
տորները, որոնցով այնքան հիացած ես երևում,
ինչքան զգուելի գործ են կատարում։ Ամերիկայում
և Եւրոպայում մարդիկ աստուածսիրութեան և
մարդասիրութեան սկզբունքներից դրդուած՝ փո-

ղեր են ժողովում, պաստորներին ամենայն յարմարութիւններ տալիս և ուղարկում, որ գնան, քրիստոնէութեան լուսից զուրկ խաւար երկիրները լուսաւորեն Աւետարան քարոզելն։ Բայց ահա դրանց մէջ գտնւում են թուլամորթներ, «չար անպիտան ծառայք». սրանք փոխանակ հեթանոս աշխարհները գնալու և հաւատացեալների թիւը շատացնելու, մտնում են քրիստոնեայ ժողովրդների մէջ և այդտեղ քրիստոնէութիւն քարոզում։ Դրանք մտածում են. «անտառի վայրենի թռչունների որսալը դժուար է, աւելի հեշտ է տանու թռչունների եռևից ընկնել»։ Եւ գողի պէս մտնում են ցանկապատ բակերը և ընտանի կենդանիները որսում։ Մտնում են Քրիստոսի հաւատով և սիրով միացած համայնքների մէջ և բաժանում, ատելութիւն և թշնամութիւն գցում։ Ուստի և նմանւում են Աւետարանում յիշուած «թշնամի մարդուն», որ գիշերը եկաւ և ցորենի մէջ որոմն ցանեց։

Այդպէս չէ՛, սիրելի Սամուէլ. դու էլ մի լաւ մտածիր և տես արդար և ճշմարիտ են իմ ասածները, թէ ո՛չ։

Ողջ լեր





ՆԱՄԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ

Սիրելի՛ Սամուէլ.

Քո հանգուցեալ հայրը սրտի ցաւօք միշտ կըրկնում էր, թէ եղբայր, իմ որդի Սամուէլը ծնուել է մի այնպիսի քաղաքում և ապրում է այնպիսի շրջանում, որ շատ հեշտութեամբ կարող է մոլորուել, փորձութեան մէջ ընկնել։ Երևում է հիմնաւոր էին հանգուցեալի կասկածները։ Տար Աստուած, որ գոնէ այսուհետև այդ կասկածները չարդարանային։ Ուստի խնդրում եմ քեզնից, զգոյշ եղիր, որ այսուհետև այլ ևս չխաբուիս և մոլորութեան մէջ չընկնես, ինչպէս միամիտ ճնճղուկ, որ գարեհատիկի համար ընկնում է որոգայթի մէջ և յետոյ որոգայթը լարողների ձեռքին խաղալիք դառնում։

Այժմ քեզնից ես շատ գոհ եմ։ Քո կեանքի վերաբերեալ երկու նշանաւոր խնդիր դրուած էին իմ առաջը։ Ես որքան կարողացայ, բացատրեցի, պարզեցի այդ խնդիրները։ Դու ընդունում ես իմ ասածները, խոստովանում ես, որ սխալուած ես եղել։ Դրանից յետոյ աշխատում ես ինձ հաւատացնել երկու բանի. առաջինը՝ որ այժմ հայոց եկե-

ղեցու հաւատարիմ որդին ես դարձել, որ այդ եկեղեցու հետ կապուած ես ամուր կապերով, որ հոգմեր և փոթորիկները այլ ևս քեզ չեն կարող նրանից բաժանել: Երկրորդ՝ որ պատրաստւում ես քեզ համար կեանքի ընկեր գտնելու:

Յայտնում եմ քեզ իմ մեծ գոհունթիւնը:

Այսուհետև, սիրելի Սամուէլ, նոր կրօնների և եկեղեցիների եռւից մի ընկնիր: Քրիստոնէութիւնը որքան հին, նոյնքան էլ նոր կրօն է. նա յաւիտենական կրօն է, իսկ ինչ որ յաւիտենական է, նա նոր է ամենայն ժամանակ: Քրիստոնէական կրօնը մէկ է բոլոր եկեղեցիների համար: Նա սկսւում է մեր Տէր Յիսուս Քրիստոսից և վերջանում է նրանով, որ է ալֆա և օմեգա (սկիզբն և վերջ):

Աշխատիր նոր բաներ գտնել ուսման մէջ, սովորիր գիտութիւնները, արհեստները: Հետևիր և տես, թէ ինչ գիտեր են լինում, ինչպէս բնութեան գաղտնիքները բացւում են: Որքան աւելի ճանաչես բնութիւնն և նրա օրէնքները, այնքան աւելի կհասկանաս Աստուծոյ մեծութիւնը, սքանչելագործութիւնն և ամենակարողութիւնը:

Հեռու կաց կրօնական վէճերից: Պարապ, դատարկախօս և թեթևամիտ մարդկանց գործ է՝ փողոցների անկիւններում և խանութներում նստել և ժամերով եկեղեցական ծէսերի, աւանդութիւնների, սրբոց բարեխօսութեան, պատկերների, մոմ վառելու և երեսին խաչակնքելու մասին տակից-

գլխից խօսել: Ի՞նչպէս չեն հասկանում այդ ողորմելիները, որ եթէ կրօնական անմիտ վէճերի վրայ կորցրած ժամանակը որևէ արդիւնաւոր գործի նուիրէին, կարող էին մի քանի աղքատներ կերակրելու միջոց ձեռք բերել: Այո՛, Աստուած քեզանից միայն բարի գործ է պահանջում: Ի՞նչ քրիստոնէութիւն է այդ. քաղցած, սոված, մերկ, անտուն մարդկանց բազմութիւնը օգնութիւն է խնդրում, հաց է աղաղակում. իսկ նրանք, որոնք կարող են օգնութիւն հասցնել, նստել են և վիճում, թէ ո՞ր եկեղեցում աղօթքը կընդունուի, Հայոց, թէ լատեռականների: Այդ խեղճերին օգնելը ամենամեծ աղօթքն է. և Աստուած հենց այդ աղօթքն է ընդունում:

Եթէ շրջանդ այնպէս է, որ ուզես-չուզես պէտք է այդ վէճերը լսես, ապա ես քեզ հետեւեալ խորհուրդն եմ տալիս. կազմիր քեզ համար մի բարձր գաղափարական շրջան: Կարդա միշտ Խրենացի, Եղիշէ, Փարբեցի..., որոնք պատմում են Հայոց աշխարհում կատարուած անցքերը. կարդա Գամառ-Քաթիպա, Րաֆֆի, Ծերենց և մեւս նոր գրողները. կարդա ռուս և եւրոպացի նշանաւոր հեղինակները, միշտ կարդա Աւետարանը: Այս շրջանը, կազնուացնէ քո սիրտը, կբարձրացնէ քո հոգին, կհարստացնէ քո միտքը: Եւ այդ ժամանակ դու կարող ես քո շուրջը կատարուող չնչին դէպքերին

արհամարհանքով նայել և միայն բարի և օգտակար գործի անձնատուր լինել։

Փառք տուր Աստծուն, սիրելի Սամուէլ, որ չնորհիւ քո հօր աշխատանքի այսօր կարող ես թշուառներին օգնել։ Բայց պարտաւոր ես հայրական ժառանգութիւնը քո սեպհական աշխատութեամբ մեծացնել, որպէս զի աւելի մեծ չափով բարի գործել կատարես։ Աշխատիր, որ միշտ հաստատ և անսասան մնայ քո հայրական օճախը և լուսաւորուած Լուսաւորչի վառած կանթեղի լոյսով։

Պոլիս 1881

ՑԱԿՈՎԲ ՍՊԱՄԵՑԱՑ։



ՀՆՐԻԽ ՍԵՆԿԵՒԻՉԻ

ՀԵՏԵՒԵՆՔ ՆՐԱՆ

Սիրելի՛ Նիկողայոս եւ Մուշեղ.



Տարունակ մոռածելով Ձեր ապագայի մասին, ես որոշեցի դարուս նշանաւոր վիպագրող Հ. Սենկեւիչի այս գրոյցը՝ „Հետեւե՛ք նրան“, թարգմանել եւ նուիրել Ձեզ՝ որպէս առաջնիդ հայր եւ երկրորդիդ հօրեղբայր:

Մեծ եւ շատ խրատական դաս է թագնուած այդ գրոյցի մէջ: Ցիննայի ու Անտէայի կեանքը աչքի առաջ ունեցէ՛ք. նիւթական եւ մոռաւոր հարստութեանց տուած ամենատեսակ բարիքները դեռ եւս շատ քիչ են մարդուս երջանկացնելու համար:

Իսկական երջանկութեան ճանապարհը ցոյց է տալիս Գողգոթայի նահատակը:

Սիրեցէ՛ք Նրան: Հետեւեցէ՛ք Նրան:


Եւ միշտ երջանիկ կլինիք:

Այս է իմ՝ Ձեզ աւանդած կտակը:

Յակոբ Օշական

25 փետրուարի 1898 թ.
Բագուս

Ա.



Գայոս Սեներիմոս Ցիննան Հռովմէական ազնուական էր։ Նա իւր երիտասարդութիւնն անց էր կացրել լեգիոնների, զինուորական խստակեաց կեանքի մէջ. իսկ յետոյ վերադարձաւ Հռովմ, որպէս զի վայելէ փառք, կեանք և իւր ազգին, թէև խանգարուած՝ կարողութիւնը։ Նա ամենագամից յարձակուեց ամեն բանի վրայ և շուտով յագեցաւ այն ամենից, ինչ որ կարող էր տալ յաւիտենական քաղաքը։

Գիշերն անց էր կացնում խնջոյքներում քաղաքից դուրս գտնուող հոյակապ այգեստաններում. ցերեկները վարժւում էր զինամարտների մօտ, խո-

սակցում էր հռետորների հետ, լինում էր բաղնիքներում, ուր զանազան հակաճառութիւններ էին տեղի ունենում և ընդ սմին քաղաքի բարձր դասակարգի կեանքից բամբասանքներ էին հաղորդւում կրկէսներում և գլադիատորների մրցանքներում, Թրակացի վհուկների և Արշիպելագոսի կըզիներից եկած հրաշալի պարող կանանց միջև։

Հռչակաւոր Լուկուլլոսը մօր կողմից նրա ազգական էր. և Ցիննան ժառանգել էր նրանից նըրբաճաշակ խորտիկների սէրը։ Նրա սեղանին մատակարարւում էին յունական գինիք, Նիապոլեան ոստրէք և Պոնտոսի գեր մարախ՝ մեղրի մէջ եփած։

Այն ամենը, ինչ որ կար Հռովմում, Ցիննան էլ պէտք է ուներ՝ սկսած Կարմիր ծովի ձկներից մինչև Բորիսթենի եզերքից բերած սպիտակ թաւուտ կաքաւները։ Սակայն նա կեանքի բարիքները վայելում էր ոչ թէ որպէս ագահ գինուոր այլ նրբաճաշակ պատրիկեանի նման։ Նա իւր վզին մի համոզմունք էր կապել, բայց գուցէ իրօք էլ համոզուած էր, թէ սիրում է գեղարուեստի արդիւնքները, օրինակ՝ Կորնթոսի աւերակների հնաճ արձաններ, Ատտիկէից բերած քանդակներ, Եորուբիայի կամ մառախլապատ Սերակուսի ծաղկանօթներ, և առ հասարակ այն ամենայն բանները, որոնք լցնում են պատրիկեան կեանքի դատարկութիւնը։ Որպէս գիտակ և սիրող՝ այդ բանների մասին խօսում էր Ցիննան անատամ ծերերի հետ, ո-

րոնք սեղանին մօտենալուց առաջ իրանց ճաշատ գլուխները ծածկում են վարդեայ պսակով և խընջոյքից յետոյ ծամում են հելիոտրոպի ծաղիկները, որպէս զի շնչառութիւնները անուշահոտ լինի։

Նա լաւ էր հասկանում Կիկերոնի պարբերութեանց գեղեցկութիւնը, Հորացիոսի կամ Ովիդիոսի ոտանաւորները։ Դաստիարակուած լինելով աթենացի Հռետորի մօտ, նա կարողանում էր անսայթաք խօսել յունարէն, Իլիականից անգիր գիտէր ամբողջ հատուածներ և գինու բաժակի առջև կարող էր երգել Անակրէոնի երգերից այնքան, մինչև բոլորովին հարբէր ու քնէր։ Իւր ուսուցչի և ուրիշ հռետորների շնորհիւ նա շփուել էր և՛ փիլիսոփայութեան հետ. և դրանից գիտէր այնքան, որ հասկանում էր երբեմն էլլադայում ու գաղութներում կառուցուած զանազան շէնքերի իմաստը, բայց միևնոյն ժամանակ այն էլ գիտէր, որ այժմ դրանք բոլորը աւերակներ են դարձած։

Անձամբ ճանաչում էր շատ ստոյիկների. դրանց չէր սիրում, որովհետև աւելի քաղաքական կուսակցութիւն էր համարում և մարգատեացներ, որոնք արհամարհում են կեանքի վայելքները։ Յաճախ նրան սեղանակից էին լինում սկեպտիկներ. իւրաքանչիւր խորտիկ վայելելուց յետոյ՝ մինչև նոր խորտիկը կբերէին, նրանք կորճանում էին փիլիսոփայական սխտեմներ, և բարձրացնելով գինու բաժակները՝ ասում էին, թէ հաճոյքը ունայնութիւն է, ճշմար-

տուբիւնը՝ անհասանելի և թէ իմաստունի նպատակը կարող է լինել միայն մեռեալ հանգստութիւնը։

Այդ ամենը Ցիննային մի ականջով մտնում, միւսովը դուրս էր գալիս, բայց հոգու խորքը չէր թափանցում։ Ոչ՛ մի կարծիքի չէր հաւատում և չէր էլ ուզում հաւատալ։ Կատոնի անձնաւորութեան մէջ տեսնում էր մեծագոյն հաստատակամութեան և չիմարութեան միաւորութիւն։ Կեանքը նմանեցնում էր ծովի, որի վրայ փչում են հողմերը՝ գէպի որ կողմը կամենում են. և միակ իմաստութիւն այն արուեստն էր համարում, որ մարդ իւր առագաստներն այնպէս բանայ, որ հողմերը նրան դիւրութեամբ առաջ շարժեն։

Բացի դրանից նա սիրում էր իւր լայն ուսերը, առոյգ ստամոքսը և իւր հռովմէական գեղեցիկ գլուխը՝ արծուային քթով։ Նա հաւատացած էր, որ այդ ամենով կարելի է մի կերպ անցկացնել ամբողջ կեանքը։

Թէև Ցիննան չէր պատկանում սկեպտիկեան դպրոցին, բայց կեանքի մէջ սկեպտիկ էր և ընդդիմին՝ գեղոնեան. գիտէր, որ հաճոյքը երջանկութիւն չէ. Էպիկուրոսի իսկական վարդապետութեան հետ ծանօթ չէր, բայց իրան Էպիկուրեան էր համարում։ Առ հասարակ նա փիլիսոփայութեան վրայ նայում էր որպէս մտաւոր զինամարզութեան վրայ, որ նոյնպէս լաւ է, որպէս և զինամարզների սո-

վորեցրածը։ Երբ խօսակցութիւնը ձանձրացնում էր նրան, ապա գնում էր կրկէս՝ թափուղ արեանը նայելու։

Ո՛չ մի բանի չէր հաւատում, ո՛չ առաքինութեան, ո՛չ ճշմարտութեան և ո՛չ երջանկութեան. նա հաւատում էր միայն գուշակութեան։ Ունենալով իւր նախապաշարմունքները, նա հետաքրքրութեամբ էր նայում Ալևելքի խորհրդաւոր կրօննեբին։ Սորուկների համար, կարելի է ասել, բարի էր, եթէ միայն ժամանակաւոր տաղտկութիւնը նրան խստասիրտ չէր դարձնում։ Ցիննան կարծում էր, թէ կեանքը գինու սափոր է և որքան ընտիր էր, թէ կեանքը գինու սափոր է և որքան ընտիր գինիով լցնես, այնքան աւելի թանկագին կլինի. ուստի և աշխատում էր իւր սափորը ամենալաւագին գինիով լցնելու։ Ո՛չ ոքի և ո՛չ մի բան չէր սիրում. բայց հաւանում էր շատ բաներ, ի թիւս որոց իւր գլուխը և իւր գեղեցիկ պատրիկեան ոտները։

Իւր շուայտ կեանքի առաջին տարիներում նա զարմացնում էր Հռովմը իւր տարօրինակութիւններով. վերջապէս այդ էլ նրան ձանձրացրեց. և նա դարձաւ անտարբեր դէպի ամեն ինչ։



Բ.



Վերջ ի վերջոյ նա աղքատացաւ։ Ցիննային բոլոր կայքը պարտատէրերը վերցրին, նրան բաժին թողնելով միայն յոգնածութիւնը, որ վաստակւում է ուժից վեր աշխատութիւնից յետոյ, չափազանց կշտացած տրամադրութիւնն և դարձեալ մի՝ բոլորովին անսպասելի բան, այն է սարսափելի անհանգստութիւնն։ Իսկապէս նա վայելեց հարստութիւնն, վայելեց

սէրը, ինչպէս հասկանում էր այն ժամանակուայ աշխարհը, վայելեց չքեղութիւնն, գինուորական փառք. շատ թէ քիչ ճանաչեց մարդկային մրտքի սահմանները, շփուեց արուեստի ու բանաստեղծութեան հետ։ Այդ պատճառով նա կարող էր դատել, թէ ստացել է կեանքից այն ամենը, ինչ որ նա կարող էր տալ։ Այն ինչ այժմ նա զգում էր, որ անտարբեր է գտնուել դէպի մի բան, դէպի մի արտակարգ կարևոր բան։ Բայց չգիտէր, թէ դա ինչ բան է. և դրա վրայ ի զուր գլուխ էր կոտրում։ Յաճախ նա փորձ էր անում ձեռք քաշել այդ մտքերից, թօթափել իւր վրայից այդ անհանգստութիւնը, հաւատալ՝ թէ կեանքի մէջ այլ ևս մի բան չկայ, որ ինքը չիմանար և թէ չէր էլ կարող լինել։ Բայց նրա անհանգստութիւնը նուազելու տեղ աճում էր մինչ այն աստիճան, որ նրան թւում էր, թէ ինքը անհանգիստ է ոչ միայն իւր անձի, այլ ամբողջ Հռովմի համար։ Միևնոյն ժամանակ նա թէ նախանձում էր սկեպտիկներին և թէ նրանց յիմար էր համարում, որովհետև նրանք ապացուցանում էին, թէ ոչինչը կարելի է գեղեցիկ կերպով լսնել ոչնչով։ Կարծես նրա մէջ այժմ երկու անձն էին ամփոփւում, որոնցից մէկը զարմանում էր իւր անհանգստութեան վրայ, իսկ միւսը ակամայ ընդունում էր, թէ դա հիմնաւոր է։

Իւր բոլոր կայքը վաճառելուց յետոյ՝ Ցիննան ամենակարող ազգակցական կապերի ու ազդեցու-

թեանց շնորհիւ ստացաւ Ալէքսանդրիայի կառավարչի պաշտօնը։ Այդտեղ ուղարկեցին նրան մասամբ այն նպատակով, որ նա այդ հարուստ երկրում նոր կարողութիւն ձեռք բերէ։ Բայց Յիննայի անհանգստութիւնը նրա հետ միասին նաև նստեց և ուղեկցեց նրան մինչև պաշտօնատեղին։ Յիննան կարծում էր, թէ Ալէքսանդրիայում շնորհիւ պաշտօնական պարտաւորութեանց, նոր մարդկանց, նոր աշխարհի ու նոր տպաւորութեանց կազատուի ձանձրալի ուղեկցից։ Բայց սխալուեց։ Անցաւ մի ամիս, անցան երկու ամիս, բայց ինչպէս Իտալիայից բերած Դեմետրայի հատիկը Դելտայի բեղմնաւոր հողում աւելի շքեղ է աճում, այնպէս էլ նրա անհանգստութիւնը, որ փոքրիկ թուփ էր, աճեց, սաղարթախիտ ծառ դարձաւ և սկսեց հեռզհետէ աւելի և աւելի մեծ ստուեր ձգել Յիննայի հոգու վրայ։

Յիննան փորձեց իւր անհանգստութիւնը խեղդել այնպիսի կեանքով, որպիսին անց էր կացնում Հռոմում, բայց անյաջող։ Թէև Ալէքսանդրիան հոյակապ քաղաք է, ուր վխտում են յոյն գեղեցկուհիները՝ փայլուն մազերով և երեսի քնքոյշ գոյնով, երեսի, որ եգիպտական արևը ծածկում է սաթի թափանցիկ թխութեամբ, բայց այդ հելլէնուհիների գրկումն էլ Յիննան հանգիստ չգտաւ։

Երբ այդ աշխատութիւններն էլ ապարդիւն անցան, նա սկսեց ինքնասպանութեան մասին մտածել։ Այստեղ նրա ծանօթներից շատերն են կեանքի հոգսերից այդ ճանապարհով ազատուել, և այն էլ աւելի չնչին պատճառներից դրդուած, քան իւրն էր։ Ոմանք այդ ճանապարհն ընտրեցին ձանձրոյթից դրդուած, միւսները՝ ներքին դատարկութիւնից, երրորդները կեանքի բարիքները վայելելու ցանկութիւն չունենալուց։ Եթէ ստրուկը կարողանում է թուրը ձեռքին ամուր բռնել, ապա բաւական է և մի վայրկեանը։

Յիննան այդ մտքի վրայ հաստատ կանգ առաւ և արդէն վճռել էր իրագործել, բայց մի օտարոտի երազ արգելք եղաւ։ Նրան երևաց որ իրան անց են կացնում մի գետից. և գետի միւս ափին տեսաւ իւր անհանգստութիւնը՝ նուաղած ստրկի կերպարանքով, դա խոնարհուեց Յիննայի առջև ու ասաց. «Ես եկայ՝ քեզ դիմաւորելու»։ Յիննան վախեցաւ. նա հասկացաւ, որ եթէ անդրգերեզմանեան կեանքի մասին չէ կարող անվրդով մտածել, ապա ուրեմն մահից յետոյ էլ անհանգստութիւնից չի ազատուիլ։

Այդքան վատթար դասաւորուած հանգամանքների շնորհիւ նա վճռեց մօտենալ իմաստուններին, որոնցով վխտում էր Սերապէումը։ Կարծում էր թէ այնտեղ իւր հանելուկի վճիռը կգտնի. բայց իմաստունները չկարողացան հանելուկը լուծել։ Միայն նրան «պոռ մնինքոս» անուանեցին, մի տիտղոս, որ տալիս էին բարձրաստիճան հռոմայեցիներին։

Սկզբում դա փոքր մխիթարութիւն էր. և իմաստունի տիտղոսը՝ տրուած մի մարդու, որ չէր կարող պատասխանել, թէ ինչն է իրեն զբաղեցնում, Յիննային հեգնութիւն կարող էր թուալ. սակայն նա դեռ մտածում էր, թէ գուցէ Սերապէումը միանգամից չէ իւր ամբողջ իմաստութիւնը բացանում. և յոյսը չէր կորում:

Ալէքսանդրիայի իմաստունների մէջ ամենագործունեան Աթենացի ազնիւ Տիմոնն էր. մի քանի տարի էր, որ նա ապրում էր Ալէքսանդրիայում, ուր եկել էր յատկապէս եգիպտական խորհրդաւոր գիտութիւնն ուսումնասիրելու: Նրա մասին ասում էին, թէ մատենադարանում մագաղաթ կամ պապիրուս չկայ, որ կարդացած չլինի: Միով բանիւ, ինչպէս ասում էին, նա գիտէր մարդկային ամբողջ իմաստութիւնը, ընդ սմին հեզ է և թափանցող: Բազմաթիւ իմաստակների և բթացած ուղեղով կոմենտատորների միջև Յիննան միանգամից ընտրեց Տիմոնին և շուտով հետը ծանօթութիւն հաստատեց. իսկ այդ ծանօթութիւնը քիչ ժամանակից յետոյ բարեկամութեան փոխուեց:

Երիտասարդ Հռովմայեցին զարմանում էր այն պերճախօսութեան վրայ, որով ծերունին խօսում էր բարձրագոյն իրերի մասին, որոնք վերաբերում են մարդու կոչմանն ու աշխարհին: Առանձնապէս նրան զարմացնում էր այն հանգամանքը, որ Տիմոնի դատողութեան հետ խառն էր մի ինչ որ տրտմու-

թիւն: Վերջերում, երբ նրանք աւելի մտերմացան, Յիննան վճռեց հարցնել իմաստունին նրա տրտմութեան պատճառը և միևնոյն ժամանակ նրա առջև բանալ իւր սիրտը:



Գ.



Ցիննան ու Տիմոնը, մի անգամ երեկոյեան, հոգու անդրգերեզմանական կեանքի մասին եղած աղմկալի վիճաբանութիւնից յետոյ, նստել էին մի բարձրաւանդակի վրայ, որի առջև տարածւում էր ծովը։ Ցիննան բռնեց ծերունու ձեռքը և պատմեց նրան, թէ ինչն է իւր կեանքի թախիծը և թէ ինչու՛ ինքը ցանկացաւ մերձենալ Սերապէումի գիտուններին ու փիլիսոփաներին։

—Գոնէ, ասաց նա, ես ի զուր չկորցրի ժամանակս, և այն չահեցայ, որ քեզ հետ մտերմացայ. այժմ ես համոզուած եմ, որ եթէ դու չեղծանես կեանքիս առեղծուածը, ապա ուրեմն և ոչ ոք կարող է լուծել։

Տիմոնը երկար նայում էր իւր առջև տարածուած ջրային հայելուն, որի մէջ արտացոլում էր երկեղջիւր լուսինը. վերջապէս ասաց.

—Տեսե՞լ ես արդեօք այն թռչուններին, որոնք ձմեռը հիւսիսից թռչում, այս կողմերն են գալիս. և գիտե՞ս արդեօք, թէ նրանք Եգիպտոսում ինչ են որոնում։

—Գիտեմ. ջերմուէիւն և լոյս։

—Մարդկային հոգին էլ ջերմուէիւն է որոնում. այդ ջերմուէիւնը կայանում է սիրոյ մէջ։ Իսկ լոյսը ճշմարտուէիւնն է, ուրիշ ոչինչ։ Բայց թռչունները գիտեն, թէ ո՛ւր են թռչում իրանց բարիքների համար. այն ինչ մեր հոգիքը թռչում են առանց ճանապարհ ճանաչելու, տխուր և անհանգիստ։

—Սակայն Տիմոն, ինչո՛ւ համար նրանք չեն կարողանում ճանապարհը գտնել։

—Առաջ մեր բոլոր հանգստուէիւնը աստուածներից էր. իսկ այժմ դէպ աստուածները եղած հաւատն սպառուել է, ինչպէս ձէթը՝ կանթեղի մէջ։ Շատերը կարծում էին, թէ փիլիսոփայուէիւնը հոգիների համար ճշմարտուէեան արեգակ կը դառնայ. իսկ այժմ, ինչպէս տեսնում ես, հոգի-

մում, Աթէնքում և այստեղ նրա փլատակների վրայ նստած են սկեպտիկները, որոնք կարծում են, թէ աշխարհին հանգստութիւն են տալիս, բայց իրօք հակառակն է լինում: Լոյսից և ջերմութիւնից հեռանալ՝ կնշանակէ հոգին խաւարի մէջ թողնել. իսկ խաւարը անհանգստութիւնն է: Եւ այսպէս ձեռները տարածած՝ մենք խարխափում ենք խաւարի մէջ և ելք ենք որոնում:

—Մթէ դո՛ւ էլ չես գտել այդ ելքը:

—Դժբախտաբար չեմ գտել. դու գուարճութիւնների մէջ որոնեցիր այն, իսկ ես մտածողութեան. բայց և այնպէս մեզ երկուսիս էլ խաւարն է պատում: Բա՛ց ասեմ, միայն դո՛ւ չես տանջւում. այլ քեզանում տանջւում է և աշխարհի ոգին: Շա՛տ ժամանակ է արդեօք, որ աստուածներին չես հաւատում:

—Հռովմում ամենքն են աստուածներին յարգում. նրանց բերում են Ասիայից ու Եգիպտոսից. բայց անկեղծօրէն հաւատում են միայն բանջարաւաճառները, որոնք առաւօտները քաղաք են գալիս:

—Եւ նրանք միայն հանգիստ են ապրում:

—Այդպէս էլ նրանք, որոնք այստեղ կատուներին ու սոխի գլխներին են երկրպագում:

—Կամ ինչպէս նրանք, որոնք կուշտ գազանների պէս յագենալուց յետոյ՝ միայն քնել են ցանկանում:

—Եթէ այդպէս է, արժէ՞ ուրեմն ապրել:

—Բայց մ'թէ մենք գիտենք, թէ մահը մեզ ինչ է տալու:

—Ապա ուրեմն ինչ տարբերութիւն կայ քո և սկեպտիկների միջև:

—Սկեպտիկները հաշտւում են խաւարի հետ կամ երևցնում են, թէ հաշտւում են. բայց ես խաւարի մէջ տանջւում եմ:

—Եւ փրկութիւն չե՞ս նախատեսում:

Տիմոնը մի փոքր լռեց. ապա մի տեսակ տատանմունքով պատասխանեց.

—Սպասում եմ:

—Ո՞ր տեղից:


—Չգիտեմ:

Յետոյ նա գլուխը ձեռքին խոնարհեց և կարծես բարձրաւանդակի վրայ տիրող լռութեան ազդեցութեան տակ՝ ասաց հանդարտ ձայնով.


—Զարմանալի՛ է, երբեմն ինձ թւում է, որ եթէ աշխարհում աւելի բան չլինէր, քան թէ մենք գիտենք, և եթէ մենք աւելի ոչինչ գառնալ չկարողանայինք, քան թէ ենք այժմ, ապա մեր մէջ անհանգստութիւն չէր լինիլ... Եւ այսպէս հիւանդութեան աղբիւրի մէջ ևս առողջանալու յոյսն եմ որոնում: Դէպի Օլիմպոսն ու փիլիսոփայութիւնն եղած հաւատը վաղուց է մեռել. առողջանալու համար հարկաւոր է գտնել մի նոր ճշմարտութիւն, որ ես դեռ չեմ ճանաչում . . . . . :

Հակառակ սպասածին՝ այդ խօսակցութիւնը

Ցիննայլին ահագին թեթեւութիւն տուաւ։ Էսելով, որ միայն ինքը չէ հիւանդ, այլ ամբողջ աշխարհը, նա այնպէս զգաց, թէ մէկը նրա վրայից մի ահագին ծանրութիւն վերցրեց և բաժանեց ու դրաւ միլիոնաւոր մարդկանց ուսերի վրայ։



Դ.



Ինչ ժամանակից յետոյ Ցիննայլին ծերունի յոյնի հետ կապող բարեկամութիւնն աւելի սերտացաւ։ Այժմ նրանք յաճախ էին այցելում միմեանց և փոխանակում որպէս մտքերը, նոյնպէս էլ ազուհացը։ Վերջապէս Ցիննան, չնայելով կեան-

քից առած իւր փորձառութեանն ու յոգնածութեանը, դեռ ևս այնքան երիտասարդ էր, որ կեանքը չէր կարող նրա համար պահած չունենալ որևէ նոր հրապոյր. այդ հրապոյրը գտաւ նա Տիմոնի միակ դստեր՝ Անտէայի մէջ։

Ալէքսանդրիայում Անտէայի փառքը նուազ չէր նրա հօր փառքից։ Նրան երկրպագում էին բոլոր ազնիւ հռոմայեցիք, որոնք ծանօթ էին Տիմոնին, յոյները, Սերապէումի փիլիսոփաները և մինչև անգամ ժողովուրդը։ Տիմոնը նրան կանանոցում փակուած չէր պահում, ինչպէս առ հասարակ փակում էին ուրիշ կանանց, և աշխատում էր հաղորդել նրան իւր բոլոր գիտութիւնները։ Երբ Անտէան երեխայութեան հասակից դուրս եկաւ, հայրն սկսեց կարդալ նրան յունարէն, լատիներէն և եբրայերէն գրքեր։ Օժտուած լինելով անսովոր լիշողութեամբ և զարգացած բազմալեզու Ալէքսանդրիայում, նա հեշտութեամբ սովորեց այդ լեզուները, ուստի և իւր մտքերով դարձաւ հօր ընկերը. նա մասնակից էր այն վիճաբանութիւններին, որոնք տեղի էին ունենում Տիմոնի տանը սիմպոզիոնների ժամանակ։ Յաճախ դժուարին խնդիրների լաբիւրինթոսից Արիադնէի նման կարողանում էր ելք գտնել և իւր հետ ուրիշներին էլ դուրս բերել։

Հայրը զարմանում էր Անտէայի վրայ և յարգում էր նրան։ Բացի դրանից նա շրջապատուած

էր խորհրդաւորութեան և մինչև անգամ սրբութեան արէօլով, յաճախ նա այնպիսի մարգարէական երազներ էր տեսնում, որոնք անմերձենալի են այլ մահկանացուների համար։ Ծերունի իմաստունը սիրում էր նրան իւր հոգու պէս. նա վախենում էր կորցնել նրան, որովհետև Անտէան յաճախ էր ասում հօրը, թէ երպուսը երևում են իրեն թըշնամի ոգիներ և մի զարմանալի լոյս, որի մասին չգիտէ կեանքի, թէ մահուան աղբիւր է։ Իսկ առայժմ Անտէային շրջապատում էր միայն սէրը. Տիմոնի տունը յաճախող եգիպտացիք նրան անուանում էին Լոտոս, թերևս այն պատճառով, որ այդ ծաղիկը Նեղոսի ափերում աստուածային յարգանքներ էր վայելում, բայց թերևս և նրա համար, որ ով մի անգամ տեսնում էր Անտէային, նա մոռանում էր ամբողջ աշխարհը։

Նրա գեղեցկութիւնը հաւասար էր իմաստութեանը։ Եգիպտոսի արևը չէր այրել նրա երեսը, որի վրայ արշալոյսի վարդակարմիր ճառագայթները կարծես փակուած էին մարգարտեայ թափանցիկ խեցիի մէջ. նրա աչքերը անդրադարձնում էին Նեղոսի կապուտակութիւնը. իսկ հայեացքը կարծես դուրս էր գալիս նոյնպիսի խորհրդաւոր խորքերից, որպէս և այդ գետի ջրերը։ Երբ Յիննան առաջին անգամ տեսաւ նրան, վերադառնալով տուն՝ ջերմջերմ տեղեկաց նրա պատուին մի անդրի կանգնել իւր տան նախագաւթում և սպիտակ աղաւնիք զո-

հել նրան: Իւր կեանքում նա հազարաւոր կանայք էր տեսել, սկսած հիւսիսի սպիտակ թերթերունքներով և ցորենի հասունացած հասկի գոյնի մազերով գուստրներից մինչև լուսայի նման սև նուռմիդուհիք, բայց մինչև այսօր չէր տեսել ո՛չ այդպիսի երես և ո՛չ այդպիսի հոգի: Եւ որքան յաճախ էր տեսնում, այնքան աւելի էր ճանաչում նրան: Որքան յաճախ էր զրուցում նրա հետ, այնքան աւելի սքանչանում: Թէև Ցիննան աստուածննեերին չէր հաւատում, բայց երբեմն թոյլ էր տալիս իրեն ենթադրել, թէ Անտէան Տիմոնի գուստրը չէ, այլ երկնքի զաւակ՝ կէս մահկանացու և կէս անմահ:

Շուտով նա սիրեց Անտէային խոր, անկեղծ սիրով, որ բոլորովին նման չէր նրա առաջուայ ըզգացումներին, ինչպէս էլ Անտէան նման չէր միւս կանանց: Նա կամենում էր Անտէային տիրանալ թէկուզ հէնց այն նպատակով, որ նրան նուիրէ իւր ամբողջ կեանքը և պաշտէ նրան ինչպէս մի կուռքի: Փերագասում էր աղքատ լինել միայն Անտէայի հետ, քան թէ՝ կեսար բայց առանց նրա: Եւ ինչպէս ծովային հոսանքը անդիմադրելի ոյժով յափշտակում է այն բոլորը, ինչ որ նրա մէջն է ընկնում, այդպէս էլ Ցիննայի սէրը յափշտակեց նրա հոգին, սիրտը, մտքերը, նրա օրերը, գիշերները և այն ամենը, որից կազմւում է կեանքը: Քիչ

ժամանակից յետոյ նոյն սէրը յափշտակեց և Անտէային:

Tu felix Cinna! ասում էին նրա ընկերները:

Tu felix Cinna! կրկնում էր Ցիննան ինքը, երբ Անտէայի աստուածային շրթունքը արտասանում էին այս սրբազան բառերը. «Ուր դու ես, Կայոս, այնտեղ էլ ես Կայոսուհիս եմ». այդ ժամանակ նրան թւում էր, թէ իւր երջանկութիւնը ծովի նման անհուն և անսահման է լինելու:





Ե.



Մի տարուայ ընթացքում նորատի կինը գրեթէ աստուածային պատիւներ էր վայելում. իւր ամուսնու համար նա աչքի բիբ էր, սէր էր, իմաստութիւն և լոյս էր: Բայց իւր բաղդաւորութիւնը ծովի հետ համեմատելով, Յինննան մոռացել էր, որ ծովում տեղատուութիւնները էլ են լինում:

Մի տարուց յետոյ Անտէան մի սարսափելի հիւանդութեան ենթարկուեց. նրա երազները զարհուրելի տեսիլների փոխուեցան, որոնք ծծում էին նրա կեանքի հիւթը: Արշալոյսի ճառագայթները հանգան, մնաց միայն մարգարտեայ խեցիի թափանցկութիւնը. ձեռները սկսուեցին հալուել, աչքերը խոր ընկան և վարդակարմիր լոտոսն սկսեց

սպիտականալ, այնպէս սպիտակ, ինչպէս մեռեալի դէմքը: Նուտով նկատեցին, որ Յիննայի տան վերևն ուրուրներ են պտոյտներ անում. իսկ այդ Եգիպտոսում մահուան նախագուշակութիւն էր համարւում: Անտէայի տեսիլները հետզհետէ աւելի և աւելի զարհուրելի էին դառնում: Միջօրէի ժամերին, երբ արևը հեղհեղում էր աշխարհս պայծառ լոյսով և քաղաքը խորասուզւում էր կէս քնի մէջ, Անտէային թւում էր, թէ շուրջը անտեսանելի արարածների արագ քայլերի ձայնն է լսում, իսկ օդի խորքում տեսնում է մեռեալի չոր ու դեղին մի դէմք, որ նայում է իրեն սև աչքերով: Այդ աչքերը անթարթ յառւում էին Անտէայի վրայ և կարծես թէ նրան հրաւիրում էին խորհրդաւոր գաղտնիքներով լի մի աշխարհ: Այդ ժամանակ Անտէան տենդից բռնուածի պէս դողում էր. ճակատը թաշկանում ու ծածկւում էր քրտնքով. և ամենքից աստուածացրուած այդ քրմուհին դառնում էր անզէն և սարսափահար երեխայ: Նա դէմքը ծածկում էր ամուսնու կրծքի մէջ և կրկնում էր սպիտակացած շրթունքներով. «Ազատիր ինձ, Կայոս, ազատիր ինձ»:

Եւ Կայոսը պատրաստ էր յարձակուիլ ամեն մի ոգու վրայ, որպիսին էլ Պերսեփոնէն կարողանար ուղարկել երկրի խորքերից, բայց զուր էր նայում իւր առջևը տարածութեան մէջ: Նուրջը դատարկ էր, ինչպէս և միշտ միջօրէի պահուն: Պայծառ լոյսը հեղհեղում էր քաղաքը: Ծովը կարծես արևումն

այրւում էր. իսկ լուսթեան մէջ լսւում էր տան շուրջը պտտուղ ուրուրների աղմուկը։

Տեսիլները հետզհետէ աւելի և աւելի յաճախ էին պատահում և վերջը կրկնւում էին ամեն օր։ Նրանք հալածում էին Անտէային դրսում, նախագաւթում և ներքին սենեակներում։ Յիննան բժիշկների խորհրդով հրաւիրեց եգիպտական սամբուկինների և բեգուինների՝ իրանց կաւեայ սուլիչներով, որոնք բարձր երաժշտութեամբ պէտք է խլացնէին անտեսանելի ոգիների աղմուկը։

Բայց ամենը ապարդիւն. Անտէան այդ աղմուկը լսում էր նոյն իսկ ամենաբարձր խօսակցութեան ժամանակ։ Իսկ երբ արևը կանգնում էր այնպէս բարձր, որ ստուերը մարդի ոտի մօտն էր ընկնում, այն ժամանակ տապից դողդող օդի մէջ երեւում էր մեռեալի դէմքը, որ ապակեայ աչքերով Անտէային նայելով, դանդաղ քայլերով յետ էր քաշւում և կարծես ասում. «Հետևիր ինձ»։





Ջ.



Երբեմնապէս Անտէային թւում էր, թէ այդ դիակի շրթունքները դանդաղ կերպով շարժւում են և երբեմն էլ նրանցից դուրս են սողում սև, զզուելի մժեղներ և թռչում դէպի իւր կողմը։ Հէնց որ տեսիլը միտն էր ընկնում, նա սոսկում էր։ Վերջապէս կեանքը նրա համար այնքան ծանր, զարհուրելի դարձաւ, որ շարունակ խնդրում էր Յիննային կամ թրով սպանել իրան և կամ թոյլ տալ թոյն ընդունել։

Բայց Յիննան այժ չուներ այդ անելու։ Աւելի հեշտ էր նրա համար սրով իւր բոլոր երակները կտրտել, քան սպանել Անտէային։ Երբ երևակայում էր նրա գլուխը՝ մեռած, փակուած թերթերունքներով, սառն ու անդորը, և այդ կուրծքը՝ պատառուած իւր սրով, ապա զգում էր, որ ինքը մօտ է խելագարութեան։

Յոյն բժիշկներից մինն ասաց, թէ Հեկատն է երևում Անտէային, իսկ անտեսանելի էակները, որոնց շրշիւնն այնքան յաճախ լսում է նա, չարագուշակ աստծու շքախումբը կազմողներն են։ Նրա կարծիքով Անտէայի համար փրկութիւն չկար, որովհետև ով Հեկատին տեսնէ, պէտք է մեռնի։ Այդ ժամանակ Յիննան, որ քիչ առաջ ծիծաղում էր ամեն մի սնոտիապաշտութեան վրայ, Հեկատին մի հեկատուբ *) զոհ արաւ։ Բայց այդ զոհն էլ ոչինչ օգուտ չբերեց. և հետևեալ օրը մեռեալի դաժան աչքերը նոյնպէս անթարթ նայում էին Անտէային։

Նրա գլուխը ծածկելու փորձ անգամ արին. բայց Անտէան ամենաթանձր ծածկոցի տակից էլ տեսնում էր մեռեալի դէմքը։ Երբ նա գտնում էր խաւար սենեակում, այդ դէմքը յայտնւում էր պատի վրայ և լուսաւորում շրջապատող խաւարը իւր մեռելային դժգոյն լուսով։

Երեկոները հիւանդն իրեն լաւ էր զգում. բայց

*) Զոհաբերութիւն հարիւր եղնից կազմուած։

այդ ժամանակ նա ընկղմւում էր մի այնպիսի խոր քնի մէջ, որ Տիմոնն ու Յիննան կարծում էին, թէ այլ ևս չի զարթնիլ։ Վերջապէս նա այնքան թուլացաւ, որ չէր կարողանում առանց կողմնակի օգնութեան մահճակալ գալ. և նրան պատգարակով էին այս կամ այն կողմը տանում։

Յիննայի նախկին անհանգստութիւնը վերանորոգուեց և տիրեց նրա ամբողջ էութեանը։ Նրա մէջ կարծես իմիասին ապրում էին թէ երկիւղ Անտէայի կեանքի մասին և թէ մի օտարոտի զգացում, որ նրա հիւանդութիւնը խորհրդաւոր կապ ունի այն ամենի հետ, ինչ որ Յիննան իւր բաց խօսակցութեան ժամանակ ասաց Տիմոնին։ Թերևս ծերունի իմաստասէրն էլ նոյնն էր մտածում, բայց Յիննան չէր կամենում և մինչև անգամ վախենում էր հարցնել նրան։ Այն ինչ հիւանդը թառամում էր ինչպէս մի ծաղիկ, որի բաժակում բոյն էր դրել թունաւոր օրդը։

Սակայն չնայելով Անտէային փրկելու յոյսի կատարեալ բացակայութեան, Յիննան պաշտպանում էր նրան իւր յուսահատութեան՝ ամբողջ զօրութեամբ։ Նախ և առաջ նրան տեղափոխեց առանձնատը՝ Մեմֆիսի շրջակայքը։ Բայց երբ պիրամիտների ներքոյ ապրելն էլ չազատեց Անտէային սարսափելի տեսիլներից, վերադարձաւ Ալէքսանդրիա և շրջապատեց հիւանդին գուշակներով, կախարդներով և լսիրշ գադուկների բազմութեամբ,

որոնք խորհրդաւոր միջոցների օգնութեամբ այնքան ճարպիկ կերպով շահագործում են մարդկային դիւրահաւանութիւնը: Իսկ Յիննան չգիտէր ո՛ր միջոցն ընտրել և ձեռք էր զարկում ամեն բանի:

Այդ ժամանակ Կեսարիայից Ալէքսանդրիա եկաւ մի յայտնի բժիշկ, հրէայ Յովսէփը՝ Կուզայի որդին: Յիննան իսկոյն նրան իւր կնոջ մօտ հրաւիրեց, և շուտով յոյսը նորից լուսաւորեց նրա սիրտը: Յովսէփը, որ յունական և հռովմէական աստուածներին չէր հաւատում, արհամարհանքով մերժեց Հեկատի զղջեցութեան մասին եղած ենթադրութիւնը: Նա ասում էր, թէ աւելի հաւանական է, որ դիւահար է եղել. և պատուիրեց թողնել Եգիպտոսը, ուր դևերից զատ նրա առողջութեան կարող էին վնասել և դեղտայի ճահճային գոլորշիները: Խորհուրդ տուաւ գնալ Երուսաղէմ, ուր դևերը մուտք չունին և օդը չոր ու առողջարար է:

Յիննան սիրով ընդունեց այդ խորհուրդը աւելի այն պատճառով, որ նախ ուրիշ ելք չկար և երկրորդ՝ Երուսաղէմի կառավարիչն էր իւր մի ծանօթը, որի նախնիքը մի ժամանակ Յիննաններից կլիէնտներն են եղել:

Եւ արդարև պրօկուրատոր (կուսակալ) Պոնտացի Պիղատոսը գրկաբաց ընդունեց և նրանց տրամադրութեան տակ դրաւ իւր ամարային տունը, որ քաղաքի պարիսպների մօտ է գտնւում:

Բայց Յիննայի յոյսերը կնոջ առողջանալու մասին յօդս ցնդեցան Երուսաղէմ հասնելուց առաջ: Մեռած դէմքը նայում էր Անտէայինն նոյն իսկ նաւի տախտակամածի վրայ. իսկ տեղ հասնելուց յետոյ հիւանդը միջօրէի ժամին սպասում էր նոյն մահացու տագնապով, որպէս և Ալէքսանդրիայում:

Եւ օրերը կրկին սահում էին յուսահատութեան, ահի և մահի ակնկալութեան մէջ:

Է



Զնայելով շատրուանին, ստուերաշատ սրահակին և առաւօտեան վաղ ժամին, նախագաւթում սարսափելի շոգ էր։ Սպիտակ մարմարը գարնան արևից շիկացել էր։ Խարեբախտաբար տնից ոչ հեռու բարձրանում էր մի հինաւուրց, սաղարթախիտ փիստայի ծառ, որ իւր ստուերի տակն էր առնում ընդարձակ տարածութիւն։ Մեղմ քամին փչում էր այդ արձակ տեղում։ Ցինննան հրամայեց այդ ծառի տակը դնել Անտէայի պատգարակը, որ զարդարուած էր հիացինտներով և խնձորենու ծաղիկներով։ Ինքն էլ նստեց Անտէայի մօտ, ձեռքը դրեց նրա՝ ալեբաստրի նման գժգոյն ձեռների վրայ և հարցրեց.

—Լա՞ւ ես արդեօք, թանկագինս։

—Լա՛ւ, պատասխանեց նա հազիւ լսելի ձայնով և փակեց աչքերը, որպէս թէ քունը յաղթում է։ Տիրեց լռութիւն, ծառի տերևներն էին միայն քամուց շըշշիւն հանում. իսկ գետնի վրայ պատգարակի մօտ փայլփլում էին տերևների արանքից թափանցող արևի ճառագայթների ոսկեգոյն բծերը. գորշ քարերի միջև անդադար ծղրդում էր մորեխը։

Ֆիչ յետոյ հիւանդը բաց արաւ աչքերը։

—Կայո՛ս, ասաց նա, ճշմարիտ է, որ այստեղ մի փիլիսոփայ է յայտնուել, որ հիւանդներին բժշկում է։

—Այստեղ այդպիսի մարդկանց մարգարէ են անուանում, պատասխանեց Ցիննան։ Ես լսել եմ նրա մասին և կամենում էի քեզ մօտ հրաւիրել. բայց երևաց, որ նա մի խորամանկ կախարդ է։ Բացի դրանից նա հայհոյել է այստեղի սրբութիւնները և այս երկրի հաւատը։ Այդ պատճառով պրոկուրատորը նրան մահուան է դատապարտել և այսօր նա պէտք է խաչուի։

Անտէան գլուխը խոնարհեց։

—Ժամանակը միայն կբժշկէ քեզ, աւելացրեց Ցիննան, տեսնելով Անտէայի երեսի վիշտը։

—Ժամանակը մահի ծառան է և ոչ թէ կեանքի, դանդաղ կերպով արտասանեց հիւանդը։

Նորից լռութիւն տիրեց. շուրջը աւելանում էին արևի ոսկեայ բծերը. մորեխն աւելի ուժով էր

ծղրդում. ժայռերի արանքից դուրս էին սողում փոքրիկ մողեսներ և տաքանում շիկացած քարերի վրայ։

Ցիննան մերթ ընդ մերթ նայում էր Անտէային։ Հազարերորդ անգամը նրա գլուխն էր գալիս միևնոյն յուսահատ միտքը, թէ բոլոր միջոցները սպառուած են, թէ այլ ևս փրկութեան որ և է յոյս չկայ, թէ շուտով իւր աստուածացրած էակից մի վաղանցուկ ստուեր կմնայ և մի բուռն աճիւն գերեզմանի խորքում։

Եւ հէնց այժմ էլ Անտէան գոց աչքերով, պառկած ծաղկազարդ պատգալակի վրայ, նրան մեռած էր թուում։

—Ես էլ քո յետևից կգամ, մտքումը կրկնում էր Ցիննան։

Այդ ժամանակ հեռուից լսուեցաւ մէկի ոտնաձայնը։

Անտէայի դէմքը սպրտնեց. կիսաբաց շրթունքը, որ ագահութեամբ օդ էին շնչում, սեղմուեցան. կուրծքը ալեկոծւում էր շտապ շնչառութիւնից։ Թշուառ նահատակը հաւատացած էր, թէ աներեւոյթ էակների բազմութիւնն է մօտենում, որոնք յայտնում են մեռած, ապակեայ աչքերով դէմքի մերձենալը։ Բայց Ցիննան յափշտակեց նրա ձեռքը և աշխատում էր հանգստացնել.

—Մի՛ վախեներ, Անտէա. այդ քայլերի ձայնը ես էլ եմ լսում։

Եւ քիչ յետոյ աւելացրեց.

—Դա Պոնտացին է, մեզ մօտ է գալիս։

—Յիրաւի կածանի գլխին երևաց պրոկուրատորը՝ երկու սարուկների ուղեկցութեամբ։ Դա երիտասարդութիւնն արդէն անցրած մարդ, կլոր, խնամքով ածիլուած երեսով, վեհութեան և միևնոյն ժամանակ անկեղծ հոգսի ու յոգնածութեան հետքերով։

—Ողջոյն քեզ, ազնիւ Ցիննա, և քեզ, աստուածայինդ Անտէա. ասաց նա, մտնելով փիստայի ծառի հովանու տակ։ Այնպիսի ցուրտ գիշերից յետոյ այսպիսի շոգ օր... Թող նա բախտաւոր լինի Ձեզ՝ երկուսիդ համար և թող նորից ծաղկի Անտէայի առողջութիւնը որպէս այդ հիացինտներն ու խնձորենու ծաւիկները, որոնք զարդարում են նրա պատգարակը։

—Ողջոյն և քեզ, պատասխանեց Ցիննան. ողջ լեր։

Պրոկուրատորը նստեց մի ժայռի բեկորի վրայ, նայեց Անտէային. յօնքերը թեթև կիտեց ու ասաց.

—Առանձնութիւնը ձանձրոյթ ու հիւանդութիւն է ծնում. այն ինչ հասարակութեան մէջ անհաշիւ երկիւղը տեղ չունի։ Ուստի մի խորհուրդ եմ տալիս Ձեզ։ Դժբախտաբար այս քաղաքը ո՛չ Անտիոք է, ո՛չ Կեսարիա. այստեղ չկան խաղեր, մրցանքներ. իսկ եթէ կրկէսներ էլ լինէին, ապա տեղւոյս մոլեռանդ մարդիկը հետևեալ օրն իսկ կը-

կործանէին։ Այստեղ միայն մի խօսք է լսւում՝ «օրէնք». իսկ այդ օրէնքին ամեն ինչ խոչնդոտն է։ Ես աւելի կնախադասէի Սկիւթիայում ապրել, քան այստեղ...

— Դրանով ի՞նչ ես ուզում ասել, Պիղատո՛ս։

— Ասեմ. ես խնդրից հեռացայ. իմ հոգսերն են դրա պատճառը։ Ասացի, որ հասարակութեան մէջ անհաշիւ երկիւղը տեղ չունի։ Եւ ահա այսօր դուք կարող էք օգուտ քաղել՝ ներկայ լինելով մի տեսարանի։ Երուսաղէմում պէտք է քչով բաւականանալ, իսկ գլխաւորը՝ աշխատել, որ Անտէան միջօրէի ժամին շրջապատուած լինի ամբոխով։ Այսօր պէտք է երեք մարդ խաչուին։ Ոչինչ չտեսնելուց՝ այդ տեսնելը լաւ է։ Բացի դրանից զատկական տօների առթիւ երկրի ամեն կողմերից քաղաք են թափւում զանազան տեսակ թափառականների բազմութիւն. դուք կարող էք այդ մարդկանց նայել ու զուարճանալ։ Ես կհրամայեմ, որ ձեզ տեղ տան հէնց խաչերի մօտ։ Յուսով եմ, որ մահուան դատապարտուածները քաջութեամբ կը-մեռնին։ Նրանցից մէկը—մի զարմանալի մարդ է դա—իրան Աստուծոյ Որդի է անուանում. աղաւնու պէս հեզ է և արդարև մի այնպիսի գործ չի կատարել, որ մահուան դատապարտուէր... բայց...

— Բայց դու նրան մահուա՛ն դատապարտեցիր։

— Կամեցայ զանազան անախորժութիւններից խուսափել և միևնոյն ժամանակ շնաճանճերի բնին

ձեռք չտայ, որոնք բզզում են տաճարի շուրջը։ Նրանք առանց այն էլ ինձ դէմ բողոքներ են ուղարկում Հռոմ։ Վերջապէս խնդիրը հռովմէական քաղաքացու չի վերաբերում։

— Դրանով դատապարտուածի տանջանքները չեն մեղմանալ։

Պրոկուրատորը չպատասխանեց. րոպէական լռութիւնից յետոյ խօսեց՝ կարծես ինքն իրեն.

— Մի բան կայ, որ ես չեմ կարող տանել. դա ծայրայեղութիւնն է։ Ով ինձ մօտ արտասանում է այդ բառը, նա մի ամբողջ օրով զրկում է ինձ հոգու ուրախ տրամադրութիւնից։ Ամենից լաւը միջին ճանապարհն է. դա ոսկի է.. իմ խոհեմութիւնը հարկադրում է ինձ հետևել նրան։ Աշխարհիս երեսին մի՛ անկիւն չկայ, ուր այդ կանոնին աւելի քիչ հետևէին, քան թէ այստեղ... բայց ի՞նչպէս այդ ամենը տանջում է ինձ։ Ո՛չ մի տեղ ո՛չ հանգստութիւն կայ, ո՛չ հաւասարակշռութիւն... ո՛չ մարդկանց մէջ և ո՛չ բնութեան... Այսպէս օրինակ այժմ գարուն է. գիշերները սաստիկ ցուրտ են, իսկ ցերեկը այնպէս շոգ է, որ քարերի վրայով դժուար է մանգալ։ Մինչև կէս օր դեռ ժամանակ շատ կայ. բայց նայեցէք, թէ ի՞նչ է կատարւում մեր շուրջը։ Իսկ թէ ինչպիսի՛ մարդիկ են այստեղ, դրա մասին չարժէ անգամ խօսել։ Այստեղ ես ապրում եմ այն պատճառով, որ պարտաւոր եմ ապրել։ Խօսքը սակայն դրան չի վերաբերում... Կրկին խնդրից

հեռացայ։ Գնացէք, մահապարտների խաչուիլը տեսէք. ես հաւատացած եմ, որ այդ Նազովրեցին քալ պիտի մեռնի։ Ես հրամայեցի նրան ծեծել, կարծելով՝ թէ դրանով նրան մահից կազատեմ... ես ամենևին խստասիրտ մարդ չեմ... Երբ նրան ծեծում էին, նա համբերում էր գառան պէս և մինչև անգամ օրհնում էր ժողովրդին... և թէպէտ արիւնով էր ծածկուած, բայց աչքերը բարձրացրեց դէպի երկինք և աղօթում էր։ Ամբողջ կեանքիս մէջ տեսածս մարդկանցից դա ամենազարմանալին է։ Այսօր կինս մի րոպէ հանգստութիւն չէ տուել ինձ։ Առաւօտից սկսած շարունակ կրկնում էր. «Մի թողնիր, որ անմեղին սպանեն»։ Ես էլ կամենում էի այդպէս անել. երկու անգամ դուրս եկայ և դիմեցի քահանայապետներին ու արհամարհելի ամբոխին. բայց նրանք միաբերան գոռում էին.

«Ի խաչ հան զդա»։

—Եւ դու զիջա՞ր, հարցրեց Յիննան։

—Եթէ չզիջէի, քաղաքում խռովութիւն կծագէր, իսկ ես այստեղ նստած եմ նրա համար, որ խաղաղութիւնը պահպանեմ։ Ծայրայեղութիւնները ես չեմ սիրում. բացի դրանից սարսափելի կերպով յոգնած եմ։ Բայց եթէ որ և է գործ եմ ձեռնարկում, այն ժամանակ առանց տատանուելու մի մարդի կեանքը զոհում եմ ընդհանուրի բարօրութեան համար. մանաւանդ եթէ այդ մարդը ո՛չ ոքի յայտնի չէ և նրա համար ոչ ոք ինձ պատասխանատուութեան չի ենթարկիլ։ Աւելի ևս վատթար կլինի այդ մարդու համար, եթէ հռովմայեցի չէ։

—Արեգակը միայն Հռովմի վրայ չէ ծագում, պատասխանեց Անտէան։

—Աստուածայինդ Անտէա, պատասխանեց պրօկուրատօրը. ես կարող էի քեզ պատասխանել, թէ ամբողջ երկրին նա միակերպ է լոյս տալիս, իսկ Հռովմի փառքին՝ ևս աւելի. ուստի Հռովմի շահի համար հարկաւոր է նուէր բերել ամեն ինչ։ Իսկ խռովութիւնները խախտում են մեր ազդեցութիւնը. բայց նախապէս աղաչում եմ քեզ. մի պահանջիր, որ դատավճիռը փոխեմ։ Յիննան էլ կարող է վկայել, որ եթէ դատավճիռն արտասանուած է, ապա միայն Կեսարը կարող է փոխել այն. իսկ ես, եթէ ցանկանամ էլ, չեմ կարող. ճշմարիտ է, Կայոս։

—Ճշմարիտ է։

Այդ խօսքերն ըստ երևոյթին Անտէայի վրայ անախորժ տպաւորութիւն թողեցին, և նա կարծես ինքն իրան ասաց.

—Ուրեմն առանց յանցանքի էլ կարելի է մահուան դատապարտուիլ։

—Ըստ ամենայնի անմեղ մարդ աշխարհումս չկայ, պատասխանեց Պոնտացին։ Անտէասիկ որովհետև այդ Նազովրեցին ոչ մի յանցանք չի գործել, ուստի ես՝ որպէս պրոկուրատոր լուսցի ձեռներս. բայց որպէս մարդ ես դատապարտում եմ նրա վար-

դապետուԹիւնը: Ես դիտմամբ երկար խօսեցի նրա հետ. աշխատում էի փորձել նրան. և համոզուեցայ, որ նա մի չլսուած բան է քարոզում. մի բան, որ հասկանալ անգամ դժուար է: Աշխարհը պէտք է հաստատուած լինի բանականուԹեան վրայ . . Ո՞վ է վիճում, Թէ առաքինուԹիւնը անհրաժեշտ է . . . ի հարկէ՝ ոչ ես: Բայց չէ՞ որ ստոյիկեաններն էլ են պատուիրում խաղալ սրտով ընդունել հակասական կարծիքները. և չեն պահանջում հրաժարուիլ ամեն բանից՝ սկսած կարողուԹիւնից մինչև այսօրուայ ճաշը: Խօսիր, Յիննա, դու խոհեմ մարդ ես. ինչ կասէիր ինձ, եԹէ այս տունը, ուր դուք բնակւում էք, առանց դէս ու դէն նայելու վերցնէի ու տայի այն սինլքորներին, որոնք արևգունի են տալիս Եաֆայի դռների մօտ. իսկ նա հէնց այդ է պահանջում: Այլ և ասում է. Թէ ամենքին պէտք է սիրել հաւասարապէս, հրէաներին այնպէս՝ ինչպէս հռովմայեցիներին, հռովմայեցիներին այնպէս, ինչպէս եգիպտացիներին, եգիպտացիներին այնպէս՝ ինչպէս աֆրիկացիներին և այլն: Խոստովանում եմ, այդ ինձ ձանձրացրել է: Այն բոպէին, երբ խնդիրը նրա կեանքին է վերաբերում, նա իրան այնպէս է պահում, որ կարծես Թէ խօսքը իրան չի վերաբերում, այլ մի ուրիշ անձի, ուսուցանում է և... աղօԹում: Իմ ինչ գործն է փրկել նրան, որ իր անձի մասին չէ հոգում: Ով որ չափաւորուԹեան զգացումն չունի, անխոհեմ մարդ է: Բացի դրա-

նից նա իրան կոչում է Աստուծոյ Որդի և խախտում է այն հիմունքները, որոնց վրայ կանգնած է աշխարհս. կնշանակէ՝ վնասում է իրան և ուրիշներին: Թող իւր սրտի խորքում մտածէ, ինչ որ կամենում է. միայն Թէ հիմունքները չխախտէ: Ինչպէս մարդ ես բողոքում եմ նրա վարդապետուԹեան դէմ. Թող ես ինքս չհաւատամ աստուածներին. դա իմ գործն է. սակայն ես ընդունում եմ կրօնքը և հրապարակով ասում եմ, Թէ նա անհրաժեշտ է. ըստ որում գիտեմ, որ դա ժողովրդի համար լաւագոյն սանձն է: Ձիերը պէտք է լծուած լինին կառքերին, և այն էլ լաւ լծուած... Վերջապէս այդ Նազովրեցու համար մահը պէտք է զարհուրելի չլինի. նա պնդում է, Թէ յարուԹիւն պիտի առնի:

Յիննան ու Անտէան զարմանքով իրար նայեցին:

— ՅարուԹիւն պիտի առնի:

— Այո՛, երեք օրից յետոյ. գոնէ այդպէս են ասում նրա աշակերտները. ես մոռացայ դրա մասին իրան հարցնել: Վերջապէս այդ մի լուռնոյն է. որովհետև մահն ազատում է խոստումներից. բայց եԹէ յարուԹիւն էլ չառնի, էլի ոչինչ չի կորցնում. որովհետև ըստ նրա վարդապետուԹեան՝ իսկական երջանկուԹիւնը յաւիտենական կեանքի հետ ի միասին՝ սկսւում է միայն մահից յետոյ: Նա դրա մասին խօսում է վճռաբար, ինչպէս կատարեալ մարդ: Նրա աշխարհն աւելի լուսաւոր է,

քան թէ ստորաբեգականալինը, և ով որ այստեղ աւելի է տանջւում, նա աւելի շուտ կմտնէ այնտեղ։ Պէտք է միայն սիրել, սիրել և սիրել։

—Զարմանալի վարդապետութիւն է. ասաց Անտէան։

—Իսկ ժողովուրդը գոռում էր, թէ խաչէր նրան, հարցրեց Յիննան։

—Ես բնաւ չեմ զարմանում. այս ժողովրդի հոգին ատելութիւն է. իսկ ո՛վ, եթէ ո՛չ ատելութիւնը, կպահանջէ խաչել սէրը։

Անտէան նիհար ձեռքը ճակատը տարաւ։

—Եւ նա հաւատացած է, թէ մահից յետոյ կարելի է ապրել և երջանիկ լինել։

—Հէնց այդ պատճառով նրան չեն սարսափեցնում ո՛չ խաչը, ո՛չ մահը....

—Ինչպէս լաւ կլինէր այդ, Կայո՛ս... բայց ո՞րտեղից է նա այդ իմանում, հարցրեց Անտէան։

Պրոկուրատորը թոթուեց ձեռքը.

—Ասում է, թէ այդ իմանում է բոլոր մարդկանց Հօրից, որ հրէաների համար նոյնն է, ինչ որ մեզ համար Իւպիտերը, այն տարբերութեամբ, որ՝ Նազովրեցու ասելով՝ նա մէկ է և ողորմած։

—Ինչպէս լաւ կլինէր այդ, Կայոս, կրկնեց հիւանդը։

Յիննան բաց արաւ բերանը, կարծես ուզում էր մի բան ասել. բայց լռեց և խօսակցութիւնն ընդհատուեց։ Պոնտացին ամբողջ ժամանակ մտածում էր Նազովրեցու տարօրինակ վարդապետութեան մասին. շարժում էր գլուխը, շուտ շուտ ուսերը վեր էր քաշում։ Վերջապէս կանգնեց և սկսեց հրաժեշտի ողջոյն տալ։

—Կայո՛ս, գնանք այդ Նազովրեցուն նայելու, ասաց Անտէան։

—Փութացէք, աւելացրեց Պիղատոսը հեռանալով. թափորը շուտով կշարժուի։



Ը.



Երն առաւօտուանից տօթ էր ու պարզ, իսկ միջօրէի մօտ ըսկսեց ամպել։ Հիւսիս-արևմուտքից լողում էին մութ, մրրկալից ամպեր, կարծիրպղնձի գոյնով։ Թէպէտ ամպերի միջից տեղ տեղ երևում էր երկնքի կապոյտը, բայց կարելի էր գուշակել, թէ նրանք շուտով կմիանան և կպատեն ամբողջ հորիզոնը։ Արևը ոսկեգծում էր այդ ամպերի ատամնաւոր ծայրերը։ Քաղաքի և մերձակայ բլուրների վրայ դեռ ևս փռւում պարզ երկնքի շերտը, իսկ վարն օդը կանգնած էր անշարժ զանգուածի պէս։

Բարձրաւանդակի վրայ, որ կոչւում էր Գողգոթա, տեղ տեղ կանգնոտած էին մարդկանց խըմբերը, որոնք շտապել էին տեղ բռնել աւելի վաղ, քան տխուր թափօրը կմեկնէր քաղաքից։ Աբեգակը լուսաւորում էր քարոտ, ամայի ու անբեր ընդարձակ տարածութիւնը։ Ցեսարանի ընդհանուր միակերպ գորշ-մարգարտագոյն ֆօնը խանգարւում էր միայն ճեղքուածների ու քարափների ցանկով, որոնք այնքան աւելի սև էին երևում, որքան աւելի պայծառ ճառագայթներով էր լուսաւորւում բարձրաւանդակը։ Հեռւում երևում էին բարձր բլուրներ, նոյնպէս անբերրի և ծածկուած հեռաւորութեան կապոյտ մառախուղով։

Ստորև՝ Գողգոթայի բարձրաւանդակի և քաղաքի պարիսպների միջև ընկած էր մի հարթութիւն, ժայռերով ծածկուած, բայց արդէն ոչ այնպէս ամայի, ինչպէս բարձրաւանդակը։ Այնտեղ ժայռերի ճեղքուածներում, ուր քիչ շատ բերրի հող էր ժողովուած, դուրս էին նայում արմաւենիք՝ ցանցառ ու խղճուկ տերևներով։ Այստեղ ու այնտեղ երևում էին հարթ տանիքաւոր շինութիւններ, որոնք ծիծեռնակի բների նման կպած էին քարեայ պատերին և կամ փայլում էին շիրիմի սպիտակութեամբ։ Այդ օրերում մերձակայ տների և գաւառներից մեծ ժողովուրդ գալու պատճառով պատերի մօտ տնկուել էին բազմաթիւ տաղաւարներ ու վրաններ, որոնց մօտ կանգնած էին մարդկանց խմբեր և շատ ուղտեր։

Արևը շարունակ վեր էր բարձրանում երկնակամարի այն մասով, որը դեռ չէին կարողացել ամ-

պերը ծածկել։ Մօտենում էր ժամը, երբ սովորաբար այդ բարձրաւթիւնների վրայ սիրում էր մեռելային լռութիւն, որովհետև բոլոր կենդանի արարածները ապաստան էին որոնում քաղաքի պատերի կամ ժայռերի ճեղքերի մէջ։ Մինչև անգամ այժմ, չնայելով սովորական կենդանութեանը, մի տեսակ տխրութիւն էր թագաւորում այդ դատարկ տարածութեան վրայ, ուր արևի շլացնող փայլն ընկնում էր ոչ թէ բուսականութեան, այլ գորշ քարակոշտերի վրայ։ Քաղաքային հեռաւոր աղմուկի արձագանքը, որ այստեղ էր հասնում, կարծես փոխակերպւում էր ալիքների աղմկի, որոնք՝ թըւում էր, թէ կուլ են գնում շուրջը տիրող լռութեան մէջ։

Մարդկանց խմբերը, որոնք առաւօտից տեղ էին բռնել Գողգոթայի վրայ, նայում էին դէպի քաղաքը, որտեղից պէտք է երևար թափօրը։ Շուտով երևաց Անտէայի պատգարակը, ուղեկցութեամբ պրոկուրատորի տասնեակ պինուորների, որոնք որոշ չափով պէտք է օտարականներին պաշտպանէին նրանց անարգող մոլեռանդ ամբոխի վիրաւորանքներից։ Պատգարակի մօտից գնում էր Յիննան՝ հաբրիւրապետ Ռուֆիլի ուղեկցութեամբ։

Անտէան աւելի հանգիստ և պակաս վրդովուած էր երևում, թէև միջօրէն մօտենում էր, միշտ նշան սոսկալի տեսիլների երևման, որոնք նրանից ծծում էին նրա կեանքը։ Այն ամենը, ինչ որ պրո-

կուրատորը խօսել էր երիտասարդ Նազովրեցու մասին, իշխել էր Անտէայի մտքի վրայ և հեռացրել էր ուշադրութիւնն իւր հիւանդութիւնից։ Այդ հանգամանքի մէջ թագնուած էր մի օտարոտի բան, որը նա գրեթէ չէր կարողանում հասկանալ։

Այն ժամանակուայ աշխարհը շատ էր տեսել մարդիկ, որոնք մեռել էին այնպէս հանգիստ, ինչպէս հանգիստ մարում է խարոյկը, երբ այրւում, վերջանում են փայտերը։ Բայց այդ շինծու հանգստութիւն էր, որ բղխում էր սրտի արիւթիւնից և կամ փիլիսոփայական հաշտութիւնից այն մտքի հետ, թէ լոյսից խաւարը, իրական կեանքից մի մռայլ, անյայտ ու անորոշ դրութեան անցնելը անհրաժեշտականութիւն է։ Մինչև այսօր ոչ ոք չէ օրհնել մահը, ոչ ոք չէ մեռել այն անդրդուելի հաւատով, թէ միայն դագաղից յետոյ է սկսւում իսկական կեանքն ու երջանկութիւնը, այնպիսի մի բարձր ու անվերջ երջանկութիւն, որ միայն կարող է տալ ամենակարող և անսահման Էակը։

Իսկ Նա, որին այժմ և եթէ պէտք է խաչեն, քարոզում է այդ ինչպէս անկասկածելի ճշմարտութիւն։ Անտէային ոչ միայն զարմացնում էր այդ վարդապետութիւնը, այլ և նրան թւում էր, թէ դա մխիթարութեան ու յոյսի միակ աղբիւրն է։ Նա գիտէր, որ պէտք է մեռնի, և տանջւում էր սոսկալի վշտից։ Ի՞նչ էր մահը նրա աչքում։—Յիննայից բաժանուիլը, հօրից բաժանուիլը, լոյսից, սիրուց,

դաշտից, ցրտից, խաւարից բաժանուիլը։ Որքան լաւ կարող էր ապրել աշխարհում, այնքան աւելի զօրեղ պէտք է լինի վիշտը։ Եթէ այդ մահը կարողանար նրան որևէ օգուտ տալ. եթէ Անտէան կարողանար հետը տանել գէթ սիրոյ վերաբերեալ յիշողութիւններից մի մասը, այն ժամանակ նա ճակատագրին հնազանդելու ոյժ կգտնէր իւր մէջը։

Եւ ահա յանկարծ, երբ մահից ոչինչ չէ սպասում, նա լսում է, թէ հէնց մահը կարող է ամեն ինչ տալ։ Եւ ոմն էր այդ քարոզում։ Մի արտասովոր մարդ, ուսուցիչ, մարգարէ, փիլիսոփայ, որ մարդկանց ներշնչում էր սէր՝ որպէս վեհագոյն առաքինութիւն, որ օրհնում էր նրանց, երբ նրանք ծեծում էին նրան և այժմ իսկ պէտք է խաչեն։

«Ինչո՞ւ նա այդպէս էր քարոզում, մտածում էր Անտէան, քանի որ խաչը պէտք է լինի նրա միակ վարձը։ Ոմանք իշխանութիւն ցանկացան. նա չցանկացաւ և խեղճ մնաց. միւսները՝ պալատներ, խընջոյքներ, ճոխութիւններ, ծիրանի զգեստ, կառքեր, փղոսկրեայ և սադափի զարդարանքներ. բայց նա ապրում էր ինչպէս հովիւ ոչխարների հօտի մէջ։ Նա քարոզում էր սէր, կարեկցութիւն, աղքատութիւն... ապա ուրեմն չէր կարող չար մարդ լինել և մարգկանց խաբել։ Բայց եթէ նա ճշմարիտն է ասել, ապա թող օրհնեալ լինի մահը, որպէս երկրային ոչնչութեան վախճան, որպէս նուազ երջանկութեան փոխարկութիւն մեծ երջանկութեան հետ,

որպէս լոյս մարող աչքերի համար և որպէս թևեր, որոնցով սլանում են յաւիտենական ուրախութեան օթևանը...»

Անտէան հասկացաւ այժմ, թէ ինչ է նշանակում յարութեան քարոզը։ Թշուառ հիւանդի միտքն ու սիրտը ամուր կապուել էր այդ քարոզութեան հետ։ Նա յիշեց իւր հօր յաճախ կրկնած խօսքերը, թէ միայն մի նոր ճշմարտութիւն կարող է մարդկային յոգնատանջ հոգին ազատել խաւարից և նրան կաշկանդող կապերից։ Եւ ահաւասիկ դա նոր ճշմարտութիւն է. դա յաղթում էր մահը և փրկութեան հնարաւորութիւն էր տալիս։

Անտէան այնպէս էր խորասուզուել այդ մտքերի մէջ, որ Յիննան այդ օրը միջօրէին քիչ մնացած առաջին անգամը նրա երեսին սովորական վըրդովման նշանները չտեսաւ։

Թափօրն արդէն դուրս էր եկել քաղաքից դէպի Գողգոթա. այն բարձրութիւնից, ուր կանգնած էր Անտէայի պատգարակը, երևում էին ամենաչնչին մանրամասնութիւնները։ Ահագին էր այն ամբոխը, որ մահապարտին դէպի պատժատեղին էր ուղեկցում. բայց նա էլ կարծես հալչում էր քարքարոտ անապատի ընդարձակութեան մէջ։ Քաղաքի բաց դռներից դուրս էին հոսում մարդկանց ալիքները. ճանապարհին նրանց հետ միանում էին նոր խմբեր, որոնք սպասում էին դռներից դուրս։ Այս մարդկային հեղեղի չորս կողմով գնում էին տղաների ե-

րամներ: Թափօրը փոփոխում էր իւր գոյնը և փայլում էր տղամարդկանց սպիտակ շորերից և կանանց կարմիր ու կապոյտ քօղերից: Միջավայրում փայլատակում էին հռոմէական զինուորների սուսերներն ու նիզակները: Հետզհետէ որոշ ու պարզ էր դառնում զանազան ձայներից կազմուած աղմուկը, որ լսւում էր հեռուից:

Վերջապէս Թափօրը մօտեցաւ Գողգոթային: Ժողովրդեան առաջին շարքերն սկսեցին բլուրը բարձրանալ: Ամբոխն շտապում էր մօտ տեղերը բռնել, որպէս զի պատժի մանրամասներից ոչ մինը աչքից չվրիպի: Այդ պատճառով մահապարտներին ուղեկցող զինուորների խումբը բաւականաչափ յետ էր մնացել: Առաջինն երևացին կիսամերկ երեխայք, առաւելապէս տղայք, ազդրները պատած լաթի կտորով, գլուխները խուզած, քունքերին միայն խոպոպներ թողած, դժգոյն, կապտաւուն աչքերով և ճչացող ձայնով: Այդ աղմուկի և աղաղակի մէջ նրբանք ժայռերի ճեղքուածներից քարեր էին պոկոտում, պահում, որ գցեն խաչեալների վրայ: Երեխաների յետևից թափուեց ժողովուրդը:

Ամենքի երեսները կարծես վառուում էին հետաքրքիր տեսարանը շուտով տեսնելու ցանկութիւնից. բայց և նրանցից ոչ մէկի վրայ կարեկցութեան հետք չկար: Աղմկաւոր ձայները, հապճեպ խօսքերը, սուր շարժողութիւնները զարմացնում էին մինչև անգամ Անտէային, թէև նա Աղէքսանդրիայից

ծանօթ էր ամբոխի դատարկախօսութեան և աշխոյժին: Այստեղ մարդիկ իրար հետ խօսում էին այնպէս, որ կարծես ցանկանում էին միմեանց վրայ յարձակուիլ. և գոռում էին, որպէս թէ խնդիրն իրենց մահուան կամ փրկութեանն է վերաբերում:

Հարիւրապետ Ռուֆիլը մօտեցաւ պատգարակին. խաղող ու գործաւէր մարդու եղանակով Անտէային զանազան բացատրութիւններ էր տալիս. այն ինչ քաղաքի կողմից շարունակ գալիս էին մարդկանց նորանոր հոսանքներ: Բազմութեան մէջ երեւում էին Երուսաղէմի հարուստ քաղաքացիքը, որոնք աշխատում էին հեռու պահել իրենց զանազան սինլըքորներից, նրանց մէջ կային գիւղացիներ, հողագործներ՝ մաղախն ուսներին, բարեսիրտ և զարմացած հովիւներն՝ այծի մորթից շինած շորերով: Կանանց շարքերը խառնուել էին տղամարդկանց շարքերի հետ. բայց որովհետև աւելի հարուստ քաղաքացի կանայքը սիրով չէին դուրս գալիս տնից, ուստի այստեղ հաւաքուել էին գլխաւորապէս ժողովրդի կանայք, գեղջկուհիք կամ խայտաճամուկ հագուած գեղեցկուհիք՝ ներկած մազերով, յօնքերով և եղունգներով, զարդարուած դրամներից հիւսած լայն մանեակներով, հեռու տարածելով նարդոսի բուրմունքը:

Վերջապէս յայտնուեց և սինեդրիոնը, նրա մէջը՝ Աննա քահանայապետը—մի ծերունի բուի կերպարանքով և կարմիր արտևանունքով—և հաստամար-

մին Կայափան՝ երկճիւղ խոյրով, ուկեզօծ տախտակը կրծքին։ Սրանց ետևից գալիս էին զանազան փարիսեցիք, քարշ տալով իրանց ոտները, որոնք քայլելիս դիտմամբ հսկդիպում էին զանազան խոչընդոտների. ապա փարիսեցիք՝ արիւնոտ ճակատներով, որոնք նոյնպէս դիտմամբ իրանց գլուխները պատերին էին խփում, և կորացած փարիսեցիք, որոնք կարծես պատրաստ էին ամբողջ ժողովրդի մեղքը իրանց ուսերին առնելու։ Դժնեայ լրջութիւնն և սառնասիրտ կատաղութիւնը պարզ կերպով տարբերում էին դրանց հասարակ ժողովրդի աղմկալի ամբոխից։

Յիննան նայում էր բոլոր անցնողներին իշխող ազգին պատկանող անձի արհամարհանքով, Անտէան՝ զարմանքով և երկիւղով։ Նա շատ էր տեսել հրէաներ Ալէքսանդրիայում, բայց այնտեղ նրանք նման էին յոյներին, իսկ այստեղ առաջին անգամը տեսնում էր նրանց հէնց այնպէս, ինչպէս նկարագրել էր պրոկուրատորը։ Անտէայի մատաղ դէմքը, ուր մահն արդէն իւր կնիքն էր դրոշմել, նրա կազմուածքը, որ աւելի ստուերի՝ քան կենդանի էակի էր նման, իրանց վրայ էին գարձրել ընդհանուր ուշադրութիւն։ Ամբոխը դիտում էր նրան այնքան յանդգնութեամբ և աներեսութեամբ, որքան թոյլ էին տալիս պատգարակը պահպանող զինուորները։ Իւրաքանչիւրի երեսին երևում էր ատելութիւն և արհամարհանք դէպի օտարները, և ո՛չ մէկի երեսին

չէր նշմարւում ցաւակցութիւն դէպի թշուառ հիւանդը։ Ընդհակառակը նրանց զայրացած աչքերում աւելի ուրախութիւն էր փայլում, որ հիւանդութեան զոհը չէ կարող խուսափել ճակատագրական վախճանից։ Անտէան այժմ միայն հասկացաւ, թէ ինչո՛ւ այդ մարդիկը պահանջում էին խաչել մարգարէին, որ սէր էր քարոզում։

Եւ այդ Նազովրեցին յանկարծ երևաց նրան իբրև մի մտերիմ և սիրելի անձն։ Նա պէտք է մեռնէր. ինքն էլ՝ նոյնպէս։ Այժմ արդէն ոչինչ չէր կարող փրկել Նազովրեցուն. դատավճիռն արդէն արտասանուած էր. բայց նոյնը և Անտէայի վրայ։ Նրան թւում էր, թէ իրանց կապում է դըժբախտութեան և մահու եղբայրակցութիւնը։ Միայն թէ Նազովրեցին դէպի խաչն էր գնում հաւատով, իսկ Անտէան այդ հաւատը չունէր ու եկել էր փոխառնելու նրա օրինակից։

Այդ միջոցին ամբոխի աղմուկը զօրանում էր. լսուեց սուլոց, գոչիւն և ապա յանկարծ ամեն ինչ լռեց։ Լսւում էր միայն զէնքերի շաչիւնը և լեգիոնարների ծանր քայլերը։ Ամբոխը տատանուեց, զինուորների համար ճանապարհ բացեց և պատժապարտներին ուղեկցող գունդը հաւասարուեց պատգարակին։ Ա.ոչևից, աջ ու ձախից և յետևից դանդաղ ու հաւասար քայլերով գնում էին զինուորները. մէջ տեղը երևում էին երեք խաչ, որոնք կարծես օդումն էին լողում, որովհետև այդ խաչերը

կրող մարդիկը նրանց ծանրութեան տակ ճկել էին։ Դիւրին էր հասկանալ, թէ այդ երեք մարդկանց մէջ Նազովրեցին չկար. երկու պատժապարտների երեսները կրում էին ոճիրի և անառակութեան յայտնի հետք. իսկ երրորդը երեսով մի ոչ երիտասարդ հասարակ գիւղացի էր, որին հռովմէական զինուորները ստիպում էին տանել խաչը մի ուրիշի փոխարէն։ Նազովրեցին գնում էր խաչերի յետեւից՝ երկու պահապանների ուղեկցութեամբ, ծիրանի վերարկուով ծածկուած, գլխին կար փշեայ պըսակ, որի փշերի տակից խոշոր կաթիլներով արիւն էր հոսում։ Այդ կաթիլներից մի քանիսը վայր էին գլորւում երեսի վրայով, միւսները չորացել էին ճակատի վայրի վարդենու պտուղների կամ բուստի հատիկների նման։

Նազովրեցին դժգոյն էր և ամբոխի ծաղրի միջով առաջ էր գնում անհաստատ և թոյլ քայլերով. կարծես նա ընկղմուած էր մի խորը մտածման մէջ, որ դուրս է տեսանելի աշխարհի սահմաններից, աչքը արդէն վերացած երկրից. թւում էր, թէ նա չէ լսում ատելութեան աղաղակները, մի՝ ամենայն ինչ ներող զգացմամբ, որ անցնում է մարդկային ներողամտութեան չափը, և կարեկցութեամբ, որ անցնում է մարդկային կարեկցութեան սահմանը, յաւիտենականութեամբ սքողուած, երկրային չարութեան մակերեւոյթից վեր բարձրացած և ամբողջ աշխարհի մեծ վշտովը համակուած։

—Դու ճշմարիտ ես, դողդոջուն շրթունքով շշնչաց Անտէան։

Հէնց այդ վայրկենին թափօրը հասաւ նրա պատգարակին և մինչև իսկ մի րոպէ կանգ առաւ, որովհետև զինուորներն ուժով էին իրանց համար ճանապարհ բաց անում։ Անտէան տեսաւ Նազովրեցուն մօտիկից. թէ ինչպէս հովը խաղում է նրա գէսերի հետ, տեսաւ այն կարմիր արտափայլութիւնը, որ ծիրանի վերարկուից ընկնում էր նրա դժգոյն, թափանցիկ երեսին։ Դէպի նա գրոհ տուող ամբոխը նեղ շրջանակի մէջ փակեց զինուորներին, և նրանք պարտաւորուած էին իրանց նիզակներով պաշտպանել դատապարտուածին ժողովրդեան կատաղութիւնից։

Ամենուրեք տեսնւում էին տարաձուած ձեռներ, սեղմուած բռունցքներով. աչքեր, որ քիչ էր մնում դուրս թափուէին իրանց բներից. փայլող ատամներ, խառնուած մորուսներ, փրփրած շրթունքներ, որոնք անէծք էին վիժում։ Բայց նա այդ սրբազան նահատակը կարծես ասում էր. «ինչ եմ արել ձեզ». և աչքերը դէպի երկինք ամբառնալով՝ աղօթում էր.

— Անտէա՛, Անտէա՛, կանչեց Յիննան։

Բայց Անտէան չէր լսում նրա ձայնը. աչքերիցը թափւում էին արտասուքի խոշոր կաթիլներ. նա մոռացել էր իւր հիւանդութիւնը, մոռացել էր, որ ահա քանի օր է արդէն պատգարակից չէ բարձ-

բացել, այժմ նա բարձրացել էր, դողդոջուն, գրե թե խելակորոյս՝ ցուից, կարեկցութիւնից, զայրոյթից անմիտ ամբոխի դէմ. սկսեց իւր պատգարակը զարդարող ծաղիկները պոկոտել և թափել Նազովրեցու ոտքի տակ։

Մի րոպէ լռութիւն տիրեց։ Ամբոխը զարմացել էր, տեսնելով այդ ազնուհի հռովմայեցուն յարգանք տալիս դատապարտեալին, որը հայեացքը նրա գժգոյն, հիւանդոտ երեսին գցեց, և շրթունքները շարժուեցին, կարծես օրհնում էր նրան։ Անտէան կրկին պատգարակի բարձերի վրայ ընկաւ։ Նա պարզապէս զգում էր, որ իւր վրայ լոյսի, բարութեան, ողորմածութեան, յոյսի և երջանկութեան հեղեղ է թափւում։ Եւ կրկին շշնջաց

— Դու ճշմարիտ ես, դու Արդար ես։

Եւ Անտէայի աչքերը լցուեցան արտասուքով։ Բայց պատժապարտին առաջ տարին այնտեղ, ուր ժայռերի ճեղքի մէջ ամրացրած էին երեք սիւն, որոնք խաչերի համար հիմքեր պիտի լինէին։ Նրից ամբոխը ծածկեց նրան. բայց պատժավարը տեղի ընդհանուր մակերևոյթից բարձր էր, այնպէս որ Անտէան քիչ յետոյ նորից տեսաւ նրա դունատ դէմքը և փշեայ պսակը։ Լեգիոնարները մի անգամ էլ գործի դրին իրանց նիզակները քշելու համար ամբոխին, որ խանգարում էր պատիժն իրագործել։ Նրանք սկսեցին երկու աւազակներին կապել կողքի խաչերի վրայ։ Երրորդ խաչը կանգնած էր մէջ տե-

ղը, և նրա վերևից կպցրած էր մի սպիտակ տախտակ, որը տատանում էր զօրացող քամին։ Երբ զինուորները մօտենալով Նազովրեցուն՝ սկսեցին նրա զգեստը հանել, ամբոխն աղաղակեց. «Թագաւոր հրէից։ Մի թողնիր, թագաւոր.., Ո՞ւր են քո գընդերը... Պաշտպանիր քեզ»։ Ծամանակ առ ժամանակ պայթում էր ծիծաղ. թւում էր, թէ ամբողջ ապառաժոտ հրապարակը բռնուած է մի երկարատև սաստիկ ծիծաղով։ Պատժապարտին պսակեցրին գեանի վրայ, որ նրա ձեռները խաչին գամեն և ապա խաչի հետ ի միասին բարձրացնեն գլխաւոր սիւնի վրայ։

Այդ միջոցին պատգարակից ոչ հեռի կանգնած մի մարդ՝ սպիտակ թիկնոցը հագին, գլխին մոխիր էր ցանում և յուսահատ ձայնով գոչում.

— Ես բորոտ էի և նա ինձ բժշկեց. և այդ նրանն են այժմ խաչում։

Անտէան գունատուեց։

— Նա բժշկել է դրան... լսում ես, կայոս, հարցրեց նա։

— Կարելի է ուզում ես տուն վերադառնալ, պատասխանեց Ցիննան։

— Ո՛չ, ես կմնամ։

Ցիննան համակուեց մի վայրենի, անսահման ստրջանքով, թէ ինչու՞ գլխի չէ ընկել ու տուն չէ հրաւիրել Նազովրեցուն՝ Անտէային բժշկելու։

Բայց այդ միջոցին զինուորները Նազովրեցու

ձեռներին դնելու բևեռները՝ մուրճով զարնել ըսկսեցին: Լսւում էր երկաթը երկաթին կպչելու խուլ ձայնը, որ փոխարկուեց պարզ ձայնի, երբ բեւեռի սայրն անցնելով մսից՝ սկսաւ փայտի մէջ խրուիլ: Ամբոխը լռեց. և լռեց միայն նրա համար, որ հրճուի այն հեծեծանքով, որ տանջանքները Նազովրեցու շրթունքից պէտք է քաղէին: Բայց նա լուռ մնաց. և լսւում էին միայն մուրճի չարագուշակ և սոսկալի հարուածները:

Վերջապէս աշխատանքը վերջացաւ և պատժուողի մարմինը վեր բարձրացուեցաւ: Հռովմէական հարիւրապետը երգող ձայնով վերջին պատուէրներն էր տալիս. և զինուորներից մէկն սկսեց սիւնին գամել Նազովրեցու ոտները:

Ամպերը, որ առաւօտից երկինք էին հաւաքուել, այժմ բոլորովին ծածկեցին արեգակը: Հեռաւոր բլուրներն ու ժայռերն, որոնք մինչ այդ լուսաւորուած էին ջերմ ճառագայթներով, յանկարծ մթագնեցին. լոյսը խաւարեց: Զարագուշակ, սրընձակարմիր խաւարը պատեց բոլոր շրջակայքը, և թանձրանում էր այնքան, որքան արևը թագնւում էր ամպերի ետևում: Թւում էր թէ մէկը երկրի վրայ ճնշող խաւար էր թափում: Այրող քամին, որ փչում էր մէջ ընդ մէջ, յանկարծ լռեց. օդը անտանելի հեղձուցիչ դարձաւ:

Յանկարծ այդ կարմրաւուն ղողերն էլ մթնեցին. գիշերուան պէս դաժան ամպերն սկսան դէպի

ժողովուրդն ու բարձրաւանդակը շարժուիլ: Մերձենում էր սաստիկ փոթորիկ... Ամեն ինչ վրդովմունք էր շնչում:

— Ձե՛տ գնանք տուն, ասաց Ցիննան:

— Ո՛չ, ես ուզում եմ մէկ էլ նայել նրան, պատասխանեց Անտէան:

Խաւարը պատել էր խաչերի վրայից կախուած մարմինները, և Ցիննան հրամայեց իր ամուսնու պատգարակը պատժավայրին մօտ տանել: Անտէան բարձրացրեց աչքերը: Ընդապատող խաւարի մէջ մութ փայտի վրայ Խաչեալի մարմինը թւում էր նրան՝ որպէս թէ լուսնի ճառագայթներից է հիւսուած: Նրա կուրծքը բարձրանում էր ծանր շնչառութիւնից, բայց գլուխն ու աչքերը դեռ էլի դէպի երկինք էին դարձած:

Ամպերի խորքից յանկարծ լսուեց մի խուլ ձայն, և որոտը խլացուցիչ ճարճատիւնով սահեց արևելքից արևմուտք և յետոյ՝ կարծես մի անյատակ անդունդ գլորուելով, հարուածեց այնպէս ուժգին, որ երկիրը հիմքից դղրդաց:

Նոյն միջոցին մի ահագին կայծակ պատառեց ամպերը և լուսաւորեց երկինքը, երկիրը, խաչերը, զինուորների զէնքերը և ոչխարների հօտի պէս մի տեղ խռնուած շփոթուած ամբոխը:

Այդ անսովոր լոյսից յետոյ թագաւորեց էլ աւելի խոր խաւար: Պատգարակից ո՛չ հեռու լսւում էին կանանց հառաչանքներ, և այդ հառաչանքնե-

րում տիրող լուռթեան մէջ մի սոսկալի զարմացուցիչ բան կար: Նրանք, որ միասին էին եկել ուխտաւորել ամբոխի մէջ, սկսեցին միմեանց կանչել: Ամեն կողմից լսւում էին շփոթուած ձայներ.

—Վա՜յ, անմեղ մարդուն խաչեցին:

—Նա ճշմարտութիւն էր քարոզում, վա՜յ:

—Նա մեռելներին յարութիւն էր տալիս:

Մէկը յանկարծ բացականչեց.

—Վա՜յ քեզ, Երուսաղէմ:

—Մինչև անգամ երկիրը շարժուեց, աւելացրեց մի այլ ձայն:

Ամպերի խորքից դուրս ժայթքեց մի նոր հեղեղ կայծակների, նման ահագին կրակէ կերպարանքների բազմութեան: Ծողովրդեան ձայները լռեցին, ճիշտն ասած կորան մրրկի սուլոցի մէջ, որ չլսուած կատաղութեամբ բարձրացաւ, սկսեց մարդկանց հանդերձները պոկել ու դաշտի վրայ ցրուել:

— Երկիրը դողո՜ւմ է, կրկին լսուեց ամբոխի մէջ:

Ոմանք սկսան փախչել, միւսներին երկիւղը մեխել էր գետնին, և նրանք կանգնած էին փայտացած, առանց խելքի, մի մութ գիտակցութեամբ, թէ մի սոսկալի գործ է կատարուել:

—Վերջապէս՝ խաւարն սկսաւ պարզուել: Մրրիկը քշում էր ամպերը, տարածում և հիւսում և պատռտում նորից, որպէս փլած ձորձեր:

Շուտով ամպերի մութ վարագոյրը ճեղքուեց և այդ բացուածքից արևի ճառագայթների հեղեղ

թափուեց երկրի վրայ: Ամեն ինչ պարզուեց, բլուրն էլ խաչերն էլ, մարդկանց զարհուրած երեսներն էլ:

Նազովրեցու դժգոյն՝ իբր մոմեղէն գլուխը խոնարհուեց կրծքի վրայ. աչքերը բաց և շրթունքները կապտել էին:

—Մեռա՜ւ, շշնջաց Անտէան:

—Մեռա՜ւ, կրկնեց Յիննան նրանից յետոյ:

Այդ րոպէին հարիւրապետը նիզակով ծակեց մեռեալի կողը: Զարմանալի՜ բան. կարծես թէ արևի և այդ մահուան տեսքը հանգստացրին ամբոխին: Այժմ դա աւելի մօտեցաւ պատժի տեղին. զինուորներն այլ ևս չէին հեռացնում նրանց: Հընչեցին ձայներ.

—Վա՜յ իմիր խաչիցը, վա՜յ իմիր խաչիցը:

Անտէան մի անգամ ևս նայեց այդ դժգոյն և խոնարհուած գլխին և ասաց հանդարտ ձայնով.

—Մի՞թէ նա յարութիւն կառնէ:

Նա տեսաւ, թէ ինչպէս մահը կապոյտ կնիքներ է դրոշմել նրա աչքերին և շրթունքին. տեսաւ անբնական կերպով ձգուած բազուկները, այդ անշարժ մարմինը, որ բոլորովին վայր էր քաշուել, բայց և այնպէս նրա ձայնը հնչում էր յուսահատական կսկիծով:

Փոքը կասկած չէր տանջում և Յիննայի հոգին: Նա նոյնպէս չէր հաւատում, թէ Նազովրեցին յարութիւն կառնէ: Բայց դրա փոխարէն հաւատում էր, որ եթէ Նա կենդանի լինէր, ապա

միայն Նա կարող էր իւր բարի կամ չար զօրութեամբ բժշկել Անտէային։

Իսկ ամբոխը խաչի մօտ քանի գնում՝ աւելանում էր և ծաղրական ձայները գոչում էին.

—Վայը իջիր, խաչիցը, վայը իջիր խաչիցը։

—Վայը իջիր, յուսահատութեամբ, իւր հոգու խորքում կրկնեց Յիննան. բժշկիր նրան և ա՛ռ իմ հոգին։

Երկինքը պարզուեց։ Լեռները դեռ մառախուղով էին պատած, բայց Գողգոթայի և քաղաքի վրայ մի կտոր ամպ էլ չկար։ Անտոնիոսի աշտարակը շլացուցիչ փայլում էր արևի տակ, որպէս մի երկրորդ արեգակ։ Թարմացած օդի մէջ սաւառնում էին հարիւրաւոր ծիծեռնակներ։ Յիննան տուն վերադառնալու նշան տուաւ։

Միջօրէն վաղուց անցել էր. մօտենալով տանը, Անտէան ասաց.

—Հեկատն այսօր չեկաւ։

Յիննան էլ այդ էր մտածում։



Թ.



Եսիլը հետևեալ օրն էլ չերևեցաւ։ Հիւանդն անսովոր կերպով աշխոյժ էր, որովհետև Կեսարիայից եկել էր հայրը, որ շատ անհանգիստ էր իւր դստեր առողջութեան մասին. վախեցած Յիննայի նամակներից՝ նա շուտափոյթ թողեց Ալէքսանդրիան, որպէս զի իւր սիրելի և միակ Անտէային մահուանից առաջ մի անգամ ևս տեսնի։ Յոյսը նորից ուզում էր Յիննայի սիրտը մտնել. բայց Յիննան չէր համարձակում դռները բաց անել այդ հիւրի առջև ու չէր վստահանում յուսալ։ Անտէային սպանող տեսիլների մէջ առաջ էլ դադարներ էին եղել. բայց այդ թեթևութիւնը

Ցիննան վերագրում էր Տիմոնի գալստեան և պատժավայրից ստացած տպաւորութեանը: Այդ տպաւորութիւնն այնքան էր տիրել հիւանդի հոգուն, որ իւր հօր հետ էլ ոչ մի ուրիշ բանի մասին խօսել չէր կարողանում: Տիմոնը լսում էր կենսրոնացած, խորհում էր և ապա ուշադրութեամբ հարց ու փորձ էր անում Նազովրեցու վարդապետութեան մասին, որի վերաբերմամբ Անտէան պիտէր միայն այն, ինչ որ պրոկուրատորն էր հաղորդել:

Ինչ և իցէ այժմ ընդհանրապէս Անտէան իրան աւելի առողջ և աւելի ուժեղ էր զգում, իսկ երբ միջօրէն յաջողութեամբ անցաւ, ապա նրա աչքերում փայլեց յուսոյ ճառագայթը: Նա այդ օրը երջանիկ համարեց և խնդրեց ամուսնուն արձանագրել այդ:

Բայց իսկապէս օրը մռայլ էր և տխուր: Ցածր մի թաւեսակ ամպերից ամբողջ ժամանակ անձրև էր գալիս, սկզբում յորդ, յետոյ մանր, ցուրտ և թափանցող: Երկինքը միայն երեկոյեան պարզուեց և արևի ահագին գունդը ծիրանի և ոսկէ գոյներով ներկեց ամպերը, անապատի գորշ քարերը, քաղաքից դուրս գտնուող այգեստանների դալարների սպիտակ մարմարիոնը և իջաւ հեռաւոր Միջերկրական ծովը:

Դրա փոխարէն եղանակը հետևեալ օրը հրաշալի էր: Երևում էր, թէ տօթ պէտք է լինի, բայց

առաւօտը թարմ էր, երկինքն առանց ամպի կտորի և երկիրը ողողուած երկնքի կապուտակութեան փայլով, այնպէս որ բոլոր առարկաները կապոյտ էին թւում: Անտէան պատուիրեց իրան փիստայի ծառի տակը տանել, որպէս զի բլրակից, ուր բարձրացած էր այդ ծառը, հրճուի զուարթ ու կապոյտ հեռաւորութեան տեսարանով: Ցիննան ու Տիմոնը մի քայլ անգամ չէին հեռանում պատգարակից, հետեւելով հիւանդի դէմքի ամենափոքր փոփոխութեանը, այդ դէմքի վրայ նկատւում էր մի անհանգիստ սպասողութիւն, բայց հետքն էլ չկար այն մահացու սարսափի, որ սովորաբար բռնում էր նրան միջօրէի մերձենալուց առաջ: Այժմ նրա աչքերը աւելի պարզ էին փայլում և այտերը ներկուել էին թեթև կարմրութեամբ: Այժմ Ցիննան էլ մէկ մէկ իրան թոյլ էր տալիս մտածել, թէ Անտէան կարող է առողջանալ, և այդ մտածելիս նա ուզում էր գետնին ընկնել, ազատութիւն տալ իւր ուրախութեան արտասուքներին և օրհնաբանել աստուածներին, բայց յետոյ սիրտը կրկին ճնշւում էր, երբ մտածում էր, թէ այդ թերևս հանգչող լամպարի վերջին առկայծումն է: Յանկանալով ամրապնդել իւր յոյսը, նա երբեմնապէս նայում էր Տիմոնին, բայց նրան էլ երևի նոյն մտքերն էին զբաղեցնում, որովհետև աշխատում էր Ցիննայի հայեացքից խուսափել: Երեքից ոչ մինը մի խօսք անգամ չէր ասում, թէ միջօրէն մո-

տենում է։ Բայց Ցիննան, որ դիտում էր կնոջ ստուերը, բաբախող սրտով նկատեց, որ այդ ստուերը հետզհետե կարճանում է։

Բոլորը նստած էին կարծես խորասուզուած մտքերի մէջ։ Թերևս ամենաքիչ անհանգիստը ինքը Անտէան էր։ Պառկած բաց պատգարակի մէջ, ծիրանի բարձի վրայ, նա հաճոյքով ներշնչում էր թարմ օդը, որ մեղմ հողմը բերում էր, արևմուտքից, ծովի կողմից։ Բայց միջօրէին մօտ այդ հողմիկն էլ դադարեց։ Շոգն անտանելի էր դառնում։ Նարդոսի՝ արևի տակ ջերմացած թփերն սկսան մի ծանր բուրմունք արձակել։ Ծաղկանց թփերի վրայ թռչկոտում էին խայտաճամուկ թիթեռնիկները։ Փոքրիկ մողէսները՝ սովոր այդ պատգարակին էլ, այդ մարդկանցն էլ, աներկիւղ դուրս էին սողում ճեղքերից, թէև մի րոպէ էլ չէին կորցնում իրանց զգուշաւորութիւնը։ Ամբողջ աշխարհը դադար էր առնում ու հանգստանում էր լոյսի և ջերմութեան ազդեցութեան տակ, կապուտակ երկնքի անամպ տանիքի տակ։

Տիմոնն ու Ցիննան ըստ երևոյթին նոյնպէս խորասուզուել էին անխնայ թափուած հանգստութեան մէջ։ Հիւանդը փակել էր աչքերը. կարծես նրան թմրեցրել էր մի թեթև նինջ, և ոչինչ չէր խանգարում լռութիւնը, բացի այն ծանր հառաչանքից, որ մերթ ընդ մերթ դուրս էր թռչում հիւանդի կրծքից։

Իսկ այդ ժամանակ Ցիննան նկատեց, որ իւր ստուերը կորցրել է երկարութիւնը և ուղղաձիգ կերպով ընկնում է իւր ոտների մօտ։

Կէսօր էր։

Յանկարծ Անտէան բաց արաւ աչքերը և խօսեց մի օտարոտի ձայնով.

—Կայոս, ձեռքդ ինձ տուր։

Կայոսը վեր ցատկեց. նրա բոլոր արիւնը սառաւ. մերձենում էր սոսկալի տեսիլների րոպէն։

—Նայիր, շարունակեց Անտէան. ինչ լոյս է հաւաքւում այնտեղ՝ օդի մէջ, ինչպէ՞ս նա դողում է, թափւում է և դէպի ինձ է գալիս . . .

—Անտէա, այն կողմը մի՛ նայիր, գոչեց Ցիննան։

Բայց,—ո՛հ հրաշք,—Անտէայի երեսին սարսափի արտայայտութիւնը չկար։ Նրա շրթունքները բացուել էին, աչքերը աւելի լայն էին նայում և մի անհուն ուրախութիւն լուսաւորում էր նրա դէմքը։

—Լոյսի սիւնն ինձ է մօտենում, խօսում էր հիւանդը։—Ես տեսնո՛ւմ եմ։ Այդ նա՛ է։ Այդ նազուրեյի՛ն է... Նա ժպտում է... Ո՛հ, ինչպէս հիշ է... Ողորմած... Նա դէպի ինձ է մեկնում իւր ծածկոտած ձեռները՝ ինչպէս մայր .. Կայո՛ս. Նա ինձ համար առողջութիւն, փրկութիւն է բերում և ինձ իւր մօտն է կանչում...

Ցիննան սարսափելի կերպով գոչեաց։

Եթէ Նա կանչում է, ապա ուրեմն հետևէնք Նրան, պատասխանեց Յիննան։

Մի ժամից յետոյ հակառակ կողմից դէպի քաղաքը տանող քարքարոտ կածանի վրայ երևաց Պոնտացի Պիղատոսը։ Դեռ նրա մօտենալուց առաջ երեսից կարելի էր գուշակել, թէ նորութիւն է բերում, որ՝ իբրև խոհեմ մարդ, համարում է թեթևամիտ և խաւար ամբոխի կողմից հնարուած նոր առասպել։ Եւ լիրաւի դեռ հեռուից նա սկսաւ գոչել, սրբելով քրտնած ճակատը.

—Երևակայեցէք, մարդիկ ասում են, թէ նա յարութիւն է առել։


LENIN adına
Центр. Библиотека
№ 1389
им. ЛЕНИНА
Mərkəzi kitabxanası

Գոս. Լենինյան գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀԱՄԿ-ՍՍՌ
им. В. И. Ленина
М. Ереван

Ա ԳԻ

7n

5760

2013